

21.314

ՀԱՄԱԲՈՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԻՋ ԱԻԱՆԴՈՒՆԾ ԳԱՍՈՒՑ ԱՄՓՈՓՈՒՄՆ

ԳՐԵՑ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՄ
ՏՊԱԳՐ. ՆՀԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1883

33

Պ-52

15 JAN 2010

ՀԱՄԱԴՐԱՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

33
7-52

ՀԱՄԱԲՈՅՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԻ ՄԵԶ ԱՏԱՆԴՈՒՆԾ ԴԱՍՈՒՑ ԱՄՓՈՓՈՒՄՆ



ԳՐԵՑ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԱԿԱՆ



Տպագրի եւ Փորագրի նշան կ. Պերպերեան եւ ընկ.
Պոլիս, Առևլում Համար, Հօճու խան փողոց, 14

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ԽԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

4883

5 FEB 2007

21314

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս զքրոյկն , որը կը համարձակիմք Հասարակութեան ներկայացնել , չէր խմբագրուած ի սկզբան հրատարակութեան տրուելու մտօր , այլ՝ իբրեւ ամփոփում մ 'այն դասուց զրս խօսած եմք մեր վարժարանի մեջ Քաղաքական Տնտեսութեան պիտանի զիտուրեան վերայ՝ դիրուորին մ 'ընծայելու համար մեր ուսանողաց սոյն ուսման թենուրեանց պատրաստուելու : Հետեւ ապակու հապալեպով ի զիր առնուած աշխատարիմ. մ 'է , որոյ մեջ ո 'չ նպատակ եւ , ո 'չ ժամանակ ունեցած եմք ընդլայնելու այն կարեւոր խնդիրներն զրս կը զրկի : այս զիտուրիսն : Բայց բարեկամը ումանի՛ տեսնելով զայն՝ կարծիք յարտեցին մեզ քեւ իւր այս վիճակին մեջ իսկ կրնայ օգոստակար ըլլայ մեր դպրոցաց եւ ամեն անոնց որք կը բախճան զաղափար ստանայ տնտեսագիտական սկզբանց վերայ , եւ յորդորեցին զմեզ տպագրութեան յանձնել զայն : Հնագանելեցամբ իւրեանց փակարին եւ , առանց որ եւ է փոփոխութեան որոյ համար միջոց այ պակսեցան մեզ , հանեցինք զայն հրապարակ , վատանելով հասարակութեան ներողաւտուրեան :

Ստուգին, թէ եւ համառօտ, սոյն զիրքն կը ներկայացնէ սակայն տնտեսական զիտուրին իւր արդի վիճակին մէջ, լիովին կ'աւանդէ նորս սկզբունքներն ու ո՞չ մին զանց կ'ընէ այն զիխաւոր խնդիրներէն զորս կը յօւզէ ու կը լուծէ այն : Հարստուրքեան Արտօնուրքեան, Բաշխման եւ Սպառ-ման վերայ ճառող երեք մասսաց մէջ՝ նա կը խօսի Աշխա-տուրքեան եւ իւր արդինաւորման պայմանաց, Փոխանակու-րեան եւ Գրամոյ, Գրամագլխոյ եւ Տոկոսի, Եկամտի եւ Հո-դային ճարտարարքեան, Վարքի եւ Գրամատանց, Առեւտրոյ եւ Առեւտրական տագմասպոց, Թոշակաց եւ Գործառորաց-քնիերուրքեանց, Բազմամարդուրքեան, Կառավարուրքեան եւ Հարքի եւ Հանրական ու Անհատական սպառման պէս կ'են-



53855-66

սական նիւքոց վերայ, եւ այսպէս կ'ամփոփէ իւր մէջ այն ծրագիր զոր կ'առաջարիեն լնույ ամենէն ընդարձակ հեղինակուրինք :

Մեր դասախոսութեանց մէջ զեմք հետեւած մի միակ հեղինակի , այս ուսումնասիրելով զանազան ընտիր հեղինակներ՝ մերք միոյն եւ մերք միասոյն հետեւած եմք , քաղելով իւրաքանչիւրեն ինչ որ լաւագոյն ու կարեւոր երեւցած է մեզ . ուստի եւ այս համառուս դասագիրքն այլ շինուած է հետեւողութեամբ նոյն հեղինակաց , որոց գլխաւորքն են Ճ. Պ. Ալյ , Ֆրետերիք Պատղիսա , Սրանկէյ Ճիվեճն , Ժօղէֆ Կառնիկ , Պուռուիսառ , Խլիկիսյո եւ Լրիսահոն :

կը յուսանք որ մեր սոյն աշխատութիւնն՝ քէ՛ իբրեւ վարժարանաց դասազիքը եւ քէ՛ իբրեւ անհատական ընթերցանութեան գիքը՝ կրնայ օգտակար ծառայութիւն մատուցանել, եւ ճամբար բանակ մեր ազգի մեջ աւելի ընկարձակ ու կատարեալ աշխատութեանց Քաղաքական Տնտեսութեան նման հանրօգուտ գիտութեան մի մասին, որ՝ ցաւ և մեզ ցւել՝ շատ քիչ մշակուած եւ յոյժ սակաւ վարժարանաց մեջ մնան գուած է առ. մեզ :

Կը կարծեմք թէ ժամանակն հասած է այլ եւս լինիանքացնելու, այս ուսումն մեր ազգի մէջ եւ նորա առողջ եւ կենսական սկզբունքներն աւանդելու, մեր մատուց սերնդեան : Անկարեիլ է ուրանալ թէ տնտեսագիտական սկզբանց տվյալներին բըս բանիօն վճասաբեր է անհատից ու ժողովրդոց, թէ տըստեսական նախապաշարնունք եւ մոյորութիւնն են յաձափ գելխաւոր պատճառք ժողովրդոց յետադիմուրեան, աղետալի յեղաշրջմանց ու ապերջանելուրեան, եւ թէ այս գիտուրեան ծաւալումն է որ պիտի նպաստէ հզօրապիս ներդաշնակելու, շահերն, տակաւ աւելի արդարութիւն դնելու արեւանց բաշխման մէջ եւ խզելու այն ամեն կապէք, խորտակելու այն ամեն ըումբէր որք արգելք կը լինին ցայս վայր մարդկային ձարտարուրեան՝ արուեստից ու վաճառականուրեան ազատ թոփչ մ'առնելուն եւ հետեւապիս բարօրուրեան արագ ծաւալման ու լինիանքացման :

Գալով առանձնին մեր ազգին , ամեն օր կը տեսնեմք քե տնտեսագիտական սկզբանց տղիուրինն ո՛քչափ աւելի աղքա- տացուցած և մեզ նման արդին աղքատ մի ժողովուրդ՝ անհա- րող ընկերով զմեզ օգուտ քաղել գլեր մեր տրամադրութեան տակ գտնուած արտադրական շահաբէր ոյժեր եւ ամլութեան դա- տապարտելով այն միջոցներ ու դրամագլուխիներ որք կը մնան մեր ձեռաց մէջ : Ո՞չ միայն բարյական հարստուրինք ու աննիրական ձարտարուրինք մեր մէջ չեն ի համարի ճշմա- րիտ հարստուրինք ու արուեստից եւ՝ ըստ այնի կ'արհա- մարհուին եւ ի բաց կը բոլորին , այ եւ յաձախ բազում հիւ- րական դրամագլուխ կը մնան անարգասաքէր վանքերու եւ ե- կենցեաց մէջ , եւ յաձախ սխալ ըմբռնումներ ու տնտեսագի- տուրինք բացակայուրինն մեր վարչաց բոլ անսունդ կը բողոք մեր կարեւորագոյն հաստատուրիններն ու կ'արգիլին յաջողուրինն բացում կենական ձեռնարկութեան :

Գիտեմք որ կը գտնուին մեր մէջ — եւ ամեն տեղ — այն-պիսիներոր կ'անզունեն այս գիտութիւնն՝ անձնական փորձն ու բնական ողջմտութեամբ ձեռնաս կարծելով զինքեան տնտեսական խնդրոց մէջ զանազանելով. աշմարիտն ու սուսն, լաւ ու յոռին : Երկ այս կրնայ ճշմարիտ ըլլապ սոյն գիտութեան համար, պէտք է ուրեմն որ ամեն ուրիշ գիտութեան համար այ ճշմարիտ լինի . բայց ո՞վ կարող է ըսել քե լոկ անձնական փորձն ու բնական ողջմտութիւնն բաւական են բնագիտութիւն, տարրաբանութիւն, բժշկութիւն, բերականութիւն, և գիտութիւններն ուսնելու համար : Խնդչես սոցա մասին յանդուզն կը լիներ մի այսպիսի յաւակնաւրին, պէտք է որ յանդուզն համարուի նաև տնտեսագիտութեան համար որ ընկերաբանական գիտութեանց մի ճնուղն է եւ՝ հազիր դարեւ մ'ի վեր սկսած ձեւանալ ընկերային երեւուրից ուշադիր ուսումնասիրութեամբն եւ հանձնարեղ իմաստասիրութեամբ՝ դեռ կը զբաղեցնէ բազում մեծատաղանդ՝ անխոնջ ու մարդասէր գիտուններ որք կը զանան տակաւ կատարելագործել զայն եւ լուսաւորել նորա տակաւին մուր կամ տարտամ կէտերն :

Նոյն իսկ այլ գիտուրքեանց մասին հմտութիւնն ջրաւեր որ մարդ կարող լինի լիովին հասկնալ ու յաջողութեամբ լուծել տնտեսական խնդիրներն երկ մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ չէ ըրած զայն : Ներպէքք Արէնսէք ուրեք սա կարծիքն յայտնած է քէ Տնտեսական գիտուրքեան առջեւ ուսեալ կոչուած մարդոց եւ անուսումներուն տգիտութիւնն հասաւար է : Եւ Խօսյեկ-Գոյար ա՛յսպէս կը պատասխանէ նոցա որք որ եւ է բանի մեջ տեսականն անօգնութ համարին գործնականին . « Ուզել ի բաց բողոք տեսականն իբր անպէտ՝ սա յետին աստիճանի գոռող յաւակնութիւնն ունենալ է քէ մարդ ստիպուած ջրայա գիտնալու . իւր ըսածն երբ կը խօսի եւ իւր ըրածն երբ կը գործէ : »

Ով որ գիտուրքեան վերայ կը յենու՝ կը բայէ ապահով , իսկ նա որ անհատական զգացմանց որ կարծեուց ապաստան՝ ձամբայ կ'ելնէ , կը սխալի , կը մոլորի եւ յանախ կը հասնի հոն ուր ոչ կը մտադրէր եւ ոչ կը սիրէր հասնի :

1883 Նոյեմբեր 8, Խոսկիւտար

Ու Յ. ՊէրՊէրեսսն

Հ Ա Մ Ա Ո Օ Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Դ Ա Ս Ա.

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Քաղաքական տնտեսութիւնն է ագգերու հարստութեան գիտութիւնն : Կը սովորեցնէ ձանչել թէ ինչ է հարստութիւն , թէ ինչ կերպով կարտադրի այն , թէ որք են իւր արտադրութեան նպաստահատոյց պայմաններն , թէ ինչպէս կարելի է լուսագոյն զայն սպառել և օգտիլ ի նմանէ :

2. Մի յայժ կարեւոր գիտութիւն է սա , թէ և դեռ բազուք կ'անգիտանան նորա օգտակարութիւնն : Այս մասին գեռ կան թանձր նախապաշտմունք : Ամէն որ կը խստովանի թէ բնագիտական , քիմիական , կենդանաբանական , պատմական , լեզուագիտական , ևա , խնդրոց մասին կարծիք յայտնելու ձեռնհաս վիճելու համար նոյն գիտութեանց հմուտ ըլլալ պէտք է , բայց կը կարծուի թէ միայն հասարակաց միտքն բաւական է վճիռ տալու համար տնտեսական խնդրոց մէջ : Անշուշտ հասարակաց միտքն գիտութեան սկզբանէ , բայց գիտութիւնն ալ հասարակաց մտաց զարգացումն և փորձոյ , զննութեան և իմաստասիրութեան արդեանց գասաւորումն ու յօրինուածութիւնն (systématisation) է :

3. Թէ ինչ է հարստութիւն՝ շատեր չգիտեն ձշուիւ . ու մանք դրսմն կը կարծեն , այլք գետինն միայն : Հարստութեան

այս սխալ սահմաններէն յառաջացած են ողբալի հետեւանքներ կենաց և ընկերութեան մէջ : Հարստութիւնն հասկնալու համար պէտք է զիտնալ նախ պէտք բառին սահմանն : Պէտքն է բազ ձանք հայթայթելու վայելք և խուսափելու ի ճգանց և ի ցաւոց : Արդ ամէն ինչ որ կարէ գոհացնել մի պէտք՝ կ'անուանի օժդակարան (utility) : Ամէն օգակարութիւն որ սեփականէլք (appropriate) և փոխանուիլք (échangeable) է՝ հարստութիւնն է : Բայ այսմ կը համլցուի թէ որչափ կը սխալին նորա որք հարստութիւնն միայն նիւթական իրաց մէջ կը կացուցանեն , որպէս Քուրսէլ Սընէոյ , ձօն Սդուարդ Միլ : Ո՞չ ապաքն առողջութիւն ատալու , լաւ ձայն մի , եօ , հարստութիւնն էն : Հազարէս սահմանած է « Հարստութիւնն է զօրութիւն » : Գելմաններէն րեշե , լատիներէն օրօն ունին հարստութեան և զօրութեան դաշտավարն միանգամայն , հայերէն հարուստ և ճոխ բառերն ալ ունին սոյն երկու նշանակութիւնն . հարուստն այն է որ կարող է ծառայութիւն մատուցանել , որ զօրաւոր է : Նասո Մէնիօր կը սահմանէ . « Այս բառէ որոն կը հասկնած այն ամէն իբրեւ և միայն այն (հարստութիւն) իբրեւ որ+ են փոխանցելք , սահմանաւոր գանձկութեանը և որ+ սաղանէ իտար անուղղակի յարաջ և բերեն հաճոյ+ կամ կ'արժելուն զցան : »

4. Արժեկ (valeur) բառն միշտ կը գործածէմք , և իւր կարուութիւն մեծ է . Բրուտոն ըստած թէ թէ « Արժէքն տնտեսական շշնքին անկիւնաքարն է » , և ձ . Սդուարդ Միլ կը խոստովանի թէ « Խնդիրն հիմնական է » : Ռւսափ պէտք է որոշապէս գիտել նորա սահմանն : Ավակայն տնտեսագէտք չեն համաձայն այս սահմանի վերայ : Ումանք , որպէս Պատղիա , Ձոնթընէ , արժէքն միայն ծառայութեանց մէջ կը դնեն . այս տեսութիւնն Պատղիա կ'ամիրովէ հետեւեալ բանաձեւոյն մէջ . « Արժէքնէ երկու վիզանակեալ ծառայութեանց համեմատութիւնն » : Բայց իրք արժէք մ'ունին իւրեանց մէջ այն վայրկենէն որ մեք օգտակարութիւնն մի կը վերապրեմք նոցա : Այլք արժէքն կը կայացնեն աշխատութեան մէջ , որպէս Ռիքարտո . սա կ'ըսէ « Վաճառքի մ'արժէքն կախումն ունի զայն յառաջ բերելու համար հարկաւոր

եղած աշխատութեան քանակութենէն : » Քարի տնտեսագէտն ըստ է . « Արժէքն չափն է յաղթելի ընդդիմութեան հայթայթելու համար մեր պիտոյից կարևոր իրերն , այն է բնութեան մարդոյն վերայ ունեցած զօրութեան չափն : » Սա ճշմարիտ լինէր թէրեւս , եթէ անցնիւր մարդ Ռուպէնստինի վիճակին մէջ գըտնուէք . բայց ո՞վ կ'ուրանայ թէ կամ մեծ աշխատութեան արդիւնք եղած բաններ որք անարժէք են կամ գէթ յոյժ նուազ կ'արժեն քան այնպիսի բաններ որք նուազ աշխատութեամբ ձեռք բերուած են : Մի անգրադէտ ժողովրդեան համար բնէ կ'իւցագնական քերթութիւնն մի , գործ երկայն վաստակոց : Ատամ Ամիթ արժէքին շկրնար սահման մի տալ և կը բաւականանց երկու արժէք որոշելով , որք , կ'ըսէ , յաճախ իրարու հակասական են . այս երկու արժէքն են արժէկ+ է ֆորժաժութեան (valeur en usage) և արժէկ+ է փոխանակութեան (valeur en échange) : Աէնիօր հազուագիւտութեան մէջ կը դնէ . բայց բացարձակօրին չէ այնպէս : Մըննարի կը սահմանէ . « Արժէքն է երկու փոխանակալ արտադրութեանց մէջ յարաքերութիւնն մի : » Սակայն երբ լաւ ուշ զրուի , կը տեսնուի որ արժէքն երկու անհատից մէջ յարաքերութիւնն մէ : Կիյո լաւ սահմանած է . « Արժէէն մի անհատից սանցած օժգուածքութեանն և մի այլ անհատից ոչինչոյն մէջ եղած յարաքերութիւնն է : »

5. Արժէքի խնդիրն բազմեզր է . նորա մէջ պէտք է որոշել 1⁰ նուութենէն մատակարարուած օգակարութիւնն , 2⁰ Պատառած ձիգն , և 3⁰ Խնդրողին պէտքն : Ժողէփ կարնիէ հետեւեալ ցուցակին մէջ կը վերլուծէ արժէքն .

1⁰ Օժգուածքութեան (պէտք) յարմէ յառաջ կուտիրաց արժէքն ,
2⁰ Փականցելութեան (պատառած ձիգն) .
(արտադրած ,
3⁰ Հազարամատիւնն (սահմանաւոր քանակիւն) որ կը ներգործէ Մատուցման և ինդրանիքի վերայ .

— Փոխանակելիութիւնէ (գումար նախորդ ժողովութիւն) կրեք յատկութեանց .

կախումն ունի 4. Արտադրողին աշխատութենէն (գումարութիւնը կամ ծախք արտադրութեան) .

5. Ստացչին ինայուած աշխատութենէն :

Վերոգրեալ պատկերն կրնակը համառօտել այսպէս .

Արժէքն յաւ Մատուցումն և Խնդրանքն և Արտադրութեան ծախքերէն :

6. Քաղաքական տնտեսութեան գիտութիւնը կը բաժնուի 5 մասերու . Ա. Արտադրութեան Հարստութեան (Production de la richesse) , Բ. Բաշխութեան Հարստութեան (Répartition ou distribution de la richesse) և Գ. Ստացութեան Հարստութեան (Consommation de la richesse) : Առաջնոյն մէջ կը խօսուի արտադրութեան կամ ճարտարութեան այլ և այլ տեսակաց , արտադրութեան գործիքներուն , նոցա բարւոք կիրառման և արտադրութեան նպաստով կամ վեասով սպայմանաց վերայ . Երկրորդին մէջ՝ հարստութեան իւր արտադրիչներուն մէջ բարւոք բաժնման վերայ . խոլ երրորդին մէջ՝ հարստութիւնն լաւապէս գործածելու եղանակաց վերայ :

Հարցարան . — 1. Ի՞նչ է քաղաքական տնտեսութիւնն : — 2. Ի՞նչ կարեւութիւն ունի արտադրութիւնն և ձանցուո՞ծ է ընդհանրապէս : — 3. Ի՞նչ բանի կ'ըսուի հարստութիւն : — 4. Արժէքն ի՞նչ է : — 5. Ֆօղքի կարնիէ ի՞նչպէս կը վերլուծէ արժէքն : — 6. Քաղաքական տնտեսութեան գիտութիւնն քանի՞ մասերու կը բաժնուի :

ՄԱՍՆ Ա.

ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

ԴԱՍ

ԳՈՐԾԻՑ ԵԿ ԲՈԺԿԵԿՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ

7. Մարդիկ այլ և այլ պէտքեր ունին . պիտոյից այս դաշտանութիւնն Աշխօր կոչած է Օրէնք զանազանութեան պէտոյիշ (Loi de variété des besoins) : Բայց աստի , պէտքերն են յաջորդական , այսինքն պիտոյք , իւրեանց ստիպողականութեան կարգաւու , կը յաջորդեն միմեանց . գոր օրինակ , օդ , սնունդ , հագուստ , բնակարան , դպրութիւնք , զարդի և զրուանաց առարկայք . այս այլ և այլ պէտքերն գոհացնելու մէջ մարդ գրեթէ այսպիսի կարգի մի կը հետեւի , և չխորհրդ որ և է պէտք ընուլ եթէ կանխաւ չէ լցած աւելի անհրաժեշտներն ու ստիպողականներն : Այս ալ կ'անուանի Օրէնք յաջորդութեան պէտոյիշ (Loi de succession des besoins) : Պէտքերն անմիջը ջանալի են . երբ մին կը յացենայ , խորցն մի այլ պէտք ծնունդ կ'առնու . նախնական և անհրաժեշտ պիտոյքն գոհացնուլ որ կը փափաքի գիւրութեանց , զարգուց , կերպակերպ զուարձաւթեանց և այլն : Պէտքերն գոհացը նեկու համար ջանք և աշխատութիւն պիտանի են . բայց չէ կարելի ոչնչէ ինչ ստեղծել . մարդկային աշխատութիւնն բնութեան ոյժերն կը գործածէ և զայն յարմար կը գործէ ի գոհացումն մեր պիտոյից : Յայտնի է թէ առ այս մարդկային աշխատութիւնն պէտք ունի նաև գործեաց : Մարդոց ֆրանց և բնութեան գործողութեան այլ և այլ գործիներու գործողութեան հետ ու միասնական իւր գայլութեանն է :

8. Արտադրութեան կամ ճարտարութեան առարկայ կարեն

լինել իրք և մարդկիկ : Արտադրութիւնն ընական իրաց վերայ յառաջ կը բերէ օգտակարութիւն և արծէք , աղնուացնելով , կատարելագործելով և դնելով ի վիճակի օգտակար լինելոց : Նոյնպէս երբ ի գործ դրուի մարդոց վերայ , կ'աղնուացնէ զնոսա և կը զօրացնէ փիզիապէս և բարոյապէս : Արտադրութիւնն կամ ճարտարութիւնն , թէ՛ իրաց վերայ ի գործ գրուի և թէ՛ մարդոց , միշտ նպատակ ունի տարերց օդտառէտ միաւորութիւն մի կամ տեղափոխում մի յառաջ բերել . երկու պարագային մէջ արդիւնք փոխանակելի են : Ոէտք է առանձինն նկատել աշխատութիւնն ու նորա արդիւնքն . ամէն ճարտարութեան հիմն է աշխատութիւնն :

9. Արտադրութեան ընդհանուր գործիներն են երեք 1. Երակի , որ է աղբիւր գործելի և գործածելի նիւթոց , կամ՝ ընական գործիչք (agents naturels) . 2. Դրամագլուխութ , կամ՝ մարդկային ճարտարութենէն ստեղծուած արուեստական միջոցներու ամրողջութիւնն . և 3. Աշխատանքիւն , կամ՝ ընդհանրապէս մարդոցն կարողութեանց ամբողջութիւնն : Կան նաև հասարակաց կամ՝ ոչ-սեփականեալ ընական գործիչներ կամ գործիներ , ինչպէս լրց , ջերմութիւն , հողմունք , ջուրք ծովոց՝ գետոց և լն : Երեք գործիներն ալ կարեւոր են : Զիք ստեղծել առանց բնութեան աջակցութեան . գնդասեղ մի շինելու համար պղինձ , պէնի և անագ պիտոց են . ժապաւէնի համար՝ մետաքս և ների : Դրամագլուխն պէտքն ակներեւ է , զի գործիք կ'աղատեն յողութենէ և կը զիւրեն ճիգն յորմէ կը խորչի մարդ բնազդաւար : Յագոնական առած մի կ'ըսէ . « Հոր մի փորէ ժարաւելէ յառաջ » : Բայց դրամագլուխն , բարդատամաք աշխատութեան , երկրորդական է , զի ինքն իսկ արդիւնք է աշխատութեան , մի արտադրութիւն է մարդկային՝ գարձած ի գործի արտադրութեան : Աշխատութիւնն է որ կ'արդ աստաւորէ ընական գործիչներն , նախնական նիւթերն , և յօդտակարութիւն , ի հարսաւութիւն կը փոխակերպէ , և որ կը շահաւորէ և կ'արտադրէ իսկ զգրամագլուխ : Հետօնային Ամերիկայի պէս ընական հարսաւութեան լի երկրի մի մէջ բնիկը հաղարաւոր տարիներ ապրած

են ծայրայեղ չուառութեան մէջ , զի մարդկային ձեռքն ու միտքն չէին կարող նոցա վերայ աշխատիլ և օգտիլ ի նոցանէ :

10. Արտադրութիւնն բարտարութիւնն բազմաթիւ և բազմազան ձեւերով կը յացանուի . բայց կարեւմք դասաւորել այդ ձեւերն հետեւեալ սեռերու մէջ .

Ա. Հողագործական ձարսարութիւնն , կամ՝ Հողագործութիւնն (Industrie agricole)

Բ. Ձեռսգործական » կամ Բնիւն ձարսարութիւն (ind. manufacturière)

Գ. Առենտրական » կամ Առենտրուր , (ind. commerciale)

Դ. Աջատական կամ Առենիթական կամ ՄՏՍԱԻՐԱԿԱՆ ձարսար (ind. libérale, ou immatérielle, ou intellectuelle).

Տիւնուայեէ կ'առաջարկէ յաւելուլ կամ՝ մասնաւորել և. Հանածոյ ճարդարաբութիւն (ind. extractive) , (Հանք , անտառք , ձկնորսութիւնք) , եւ Կարնիէ ջ. Ենուանդական ճարդարաբութիւն (ind. constructive) , (Շէնք , կամուրջ , ուղի , երկաթուղի ելն) :

Փ. Մեռն Տիւնուայեէ կ'ստորաբաժանէ այսպէս .
1. Արուեստք , որոց առարկան է պահպանել և աղնուացնել փիզիական մարդն .

2. Արուեստք , որք կ'աշխատին երեւակայութեան և մեր զգայի յական կարողութեանց մշակման . — Գեղարուեստք .

3. Արուեստք , որք կ'աշխատին մեր իմացական կարողութեանց զատիպակութեան . — Գիտութիւն , զրականութիւն ,

4. Արուեստք , որք կ'աշխատին բարոյական սովորութեանց կազմութեան . — Բահանսայութիւն , ուսուցումն , կառավարութիւն :

Բայց գործնականին մէջ արուեստք խառն հանգամանք ու նին , և ոչ մին զուտ այս սեռին կը վերաբերի . միայն զիստուոր և տիրոսլ յատկութեան նկատմամբ կը կոչուին : Ամեն հասարակաց երկույթն է փոխանակութիւնն , որ կը կառվ զամենքն և բացարաւութիւնն է մարդկային ընկերուցութեան :

ՀԱՐՅԱՐԱՆ . — 7. Մարդկային պիտոյից օրէնքներն ի՞նչ են .
— ի՞նչ է արտադրութիւն կամ ճարտարութիւնն : — 8. Միայն
ի՞ր են առարկայ ճարտարութեան : — 9. Քանի և որք են
ընդհանուր գործիք արտադրութեան : — 10. ի՞նչ սեռերու կա-
րեմք բաժնել ճարտարութեան այլ և այլ ձեւերն :

ԴԱՍ

ԱՄՔԱՐՈՒԹԵԱՆ ԵՊԱՏԱԿՈՐ ՊԱՅՄԱՆ

11. Ճարտարութեան նպաստաւոր պայմանը են մեժականու-
նին , աղամազաւնին , աշխատանին , 10 աղամազէն , 20 է դեպ ժամու ,
30 է բարեյարմար պեղուզ , 40 է արուուն նունակու հարաբեկին :

12. Ամեն ոք իրաւունք ունի խրեան սեփականելոյ իւր
աշխատութեան արդիւնքն . առանց այս պայմանին և երբ մարդ
իւր աշխատութեան արդեանց աէք չէ , ով կը յորդորուի աշ-
խատիլ : Ապահովութիւն հարկաւոր է որպէս զի իրաւունք եւ
սեփականութիւն յարգուին , և աշխատութիւնն խրախուսուի և
չերկնչի :

13. Աշխատութիւնն ազատ պարտի լինել ըսելով կ'իմանամք
որ ամէն մարդ ազատ պարտի լինել ընտրելու իւր ուզած աշ-
խատութեան սեռն ու եղանակն ուզած արուեստն և գործելու
զայն ըստ իւր կամաց : Ազատութիւնն մի էտկան պայման է աշ-
խատութեան արդիւնաւորման : Ազատ մարդն աւելի ճարտար
և աշխատասէր է քան գերին որ կ'աշխատի մի ուրիշ համար
և զօր պատոյ երկիւզն կը գրգէ առ առուելն ժայրայել ծոյլ
չմինել . բայց ազատ մարդն , որ պիտի վայելէ վարդիւնս իւր վաս-
տակոց , կը ջանայ , կը ճարտարամտէ , ոչ միայն երկիւզի զարկ-
ման , այլ և յուսով վայելման և դիւրակեցութեան հաճոյից իւր
եւ իւրայնոց համար : Ազատութեանէն յառաջ կուզայ ճայռան

(concurrence) , որ օդապակարութեանց ամման , աղնուացման և
աժանութեան կը ծառայէ : Ազատ մրցման տեսակի տալ գատա-
պարտելի էին ուրեմն հին արնեսուական մաքանութիւններն (corpor-
ations, jurandes, maistresses) , որք արհեստներու ուրոյն ուրոյն
դասեր կը կազմէին , արտադրութեան ձեւն ու տեսակն ձշիւ
կ'որոշէին , աշխերով էր ժորժական և ժորժական այլ և այլ աստիճաններ
կը սահմանէին՝ որոց առաջնորդ վերայ հարկ էր երկար տաեն
գեղերիլ և վերջնոյն անցնելու համար որոշեալ հրահանդաց ըստ
ամենայնի համաձայն հրաշակերպ մի ջնել և մեծ ծախքեր ընել
ու պարզեւներ տալ ընդունուած ձեւերէ տարբեր արտադրու-
թիւնքն կը պատժէին ծանր պատիժներով , կ'արգելուին արհես-
տաւորին ի գործ դնել իւր արուեստն այն քաղաքին շրջանակին
դուրս որոյ մէջ արձանագրուած էր : և անհամար դատերու ու
մեծադումար ծախուց պատճառ կը լինէին արուեստաւորաց
խումբերու (եւանֆ) մէջ : Աշխատութեան ազատութեան զուգըն-
թաց քայլած է արուեստից զարդացումն և ընդհանրապէս քա-
ղաքակրթութեան յառաջացումն :

14. Ի գէս ժամու պէտք է աշխատիլ , այսինքն թէ բնա-
կանաբար պէտք է որ իրերն յայնժամ ընեմք երբ զիւրագոյն է
զայնս առնել և երբ կը նախատեսեմք թէ պիտի կարենք մեր
աշխատութենէնք քաղել տամէնէն աւելի արդիւնք : Ըստ այսի ,
ձինորսն վաղ քաջ ընդ առաւօտն կամ երեկոյին կ'ելնէ յորս
իւր ջաղացանն իւր ցորեանն կ'աղայ երբ զով հողմ կը փչէ
կամ զետակն լի է : վարձական իւր խոսն կը քաղէ երբ ա-
րեւն կը փայլի : Փորձառութեանն ցոյց առած է թէ տար-
ւոյն որ եղանակներն են քաջայարմար ի հերկ , ի վարուցան , ի
քաշ , և լն :

15. Պէտք է որ աշխատութիւնն ի գործ զրուի ի բարեյար-
մար տեղւոց : Ատուգիւ առաջնորդ տեղեր ծառ չանկուիր և ոչ
ցորեան կը ցանուի ժայռերու վերայ : Այսպէս անցնիւր երկիր
պէտք է որ մանաւանդ ջանայ արտադրել ինչ որ բարեգէս է
իւր հողոյն ու բնակչաց կարուղութեանց : Անդպիս զինի չար-
տադրեր , այլ կը գնէ զայն Գաղիայէն . եւ , փոխարէն , մի

և նոյն աշխատութեամբ այլ աւելի արդիւնաւոր կերպով աշնասնարուծութիւնն կը մշակէ , կ'արտադրէ կաթ , կողի , պանիր և լի :

ՀԱՐՑԱՐԱՆ . — 11. ի՞նչ են աշխատութեան արդիւնաւորաման նախատող պայմանք : — 12. Սեփականութեան օգուտն ի՞նչ է : — 13. Աշխատութեան ազատութենէն ի՞նչ շահեր կը ծնանին : — 14. Ի դէպ ժամու աշխատին ի՞նչ է : — 15. Ի բարեյարմար տեղով աշխատին ի՞նչ է :

Դ Ա Ս Դ .

ԲԱԺՄԱՆՈՒՄՆ ԱՇԽԱՏԻԹԵԱՆ

16. Բարւոք եղանակաւ լինելու համար , աշխատութիւնն սկսաք է որ 1⁰ բաժնուաք , և 2⁰ ֆէրունէւամբ է գործ դրսու :

17. Աշխատութեան բաժնանումն այն է որ ոչ միայն մարդիկ բաժնած լինին՝ ընկերականութեան օրինոք՝ խրեանց մէջ այլ և այլ ամէտքերու գոհացման ծառայող արուեստներն , այլ թէ նոյն խալ իւրաքանչիւր արուեստի մէջ կարեւոր եղած գործողութիւնք բաժնուին այլ և այլ գործողներու մէջ . այսինքն արդէն իրաց ու մարդկային բնութեան մէջ եղած ձգտում մի աւելի ընդարձակ կիրառութիւն ունենայ :

18. Աշխատութեան բաժնանման արդիւնք մեծ են և բազում : Արտադրութեան եղանակներն կը սարպէ , կը համառօտէ , շուշ ու շատ արտադրելու կը նախատէ , կը ծառայէ արտադրութեանց կատարելութեան եւ աժանութեան : Շոքոլա պատրաստելու համար շոգեգործարանի մի մէջ 150 գործաւորք 1/2 տարբեր գործողութեանց պարագելով՝ կ'արտադրեն օրն

3000 քիլոկրամ՝ այսինքն մէկ գործաւորն կ'արտադրէ 37 քիլոկրամ . ոչ խալ մէկ քիլոկրամ պիտի կարէր արտադրել գործաւորն՝ եթէ մէն միայնակ կատարէր յատակելու , խարկելու , մանրելու , թրելու , չաքարելու , կաղապարելու և այլ գործողութիւնքն : Ատամ Սմիթ օրինակ կը բերէ իւր ժամանակին մէջ գնդասեղի շնութիւնն , և կ'ըսէ թէ աղքատիկ և խեղճ գործիներով կաղմաւորեալ գործարանի մի մէջ 10 գործաւոր , 18 գործողութիւններ կատարելով , 48,000 գնդասեղ կը շնէին օրն , կամ , որ նոյն է , մէն մի գործաւոր 4,800 . արդ մէն մի մարդ , եթէ ինքնին կատարէր յաջորդաբար ամէն գործողութիւններն , հազիւ 20 գնդասեղ պիտի շնէիր օրն :

19. Ատամ Սմիթ երեք պատճառ ցոյց կուտայ աշխատութեան բաժնանման օգուտներուն : Ա. Անցնիւր գործաւորի յաջողակութիւնն կը յաւելու մասնաւոր կերպով : Այս կը տեսնուի դաշնակահարներու , ձեւնածուներու մատանց հիանալի շուտառութեան վերայ , որ աշխատութեան բաժնանման արդիւնք է . այսպէս է նաև ամէն ձիւլերու մէջ : Տեսնուած է որ աւել ծակող տղայք կարող էին մազ մի ծակելով մի ուրիշ մազ անցնել նորա մէջէն : Բ. Կը խնայէ այն ժամանակին որ կը կորուուի աշխատութենէ մի յայլ աշխատութիւն անցնելու ատեն . որովհետեւ հարկ կը մինի տեղ , գործիք և գաղափարաց կարգ փոխել , և առ այս ժամանակի կը կորուուի անցուշ : Գ. Դիւրին եղանակաց և մեքենայից զիւտն կը զիւրացնէ : Ստուգիւ , ընդհանրապէս գործաւորք եղած են մեքենայից հնարիչք . Արքայիթ , Լըքիս , Հարկրիփս , Քրոմիդոն , որք տարազագործական մեքենաներու զիւտեր ըրածեն , գործաւորներ էին : Այլ զիւրացնէ մեքենայից զիւտն , մանաւանդ այնու զի հնարիչք կ'ընէ արուեստ . Ճէյմս Վագ , Ֆիւլգոն , Ռուպերտու , Ովկիֆէնուլն , Հուլիոսկոն մեծ հնարուներ եղած են՝ ուշադիր ուսանելով և ընդ երկար ի գործ դնելով մեքենական կաղմութեան օրէնքներն :

20. Աշխատութեան բաժնանումն ուրիշ եղանակներով ալ օգտակար է :

Ա. Ծառայացնանքներ է աշխատապէս բարակացնելով (multiplication des ser-

vices). — թղթատարք, զորօրինակ, մի և նոյն աշխատութեամբ չառ մարդոց նամակներն կը փոխադրեն, մինչդեռ իւրաքանչիւր նամակի տէր առանձինն նոյն աշխատութիւնն պարտէր կրել մի նամակի համար :

Բ. Պարճէններու բազմապատկաննեամբ (multiplications des copies). — տպագրիչն, միանդամ՝ կազմելէ յետոյ կտագարեայ գրերու էջն, անտի կը հանէ ուղածին չափ օրինակ. գերձակն իւր օրինակին վերայ կը ձեւէ դիւրաւ ուղածին չափ զգեստ. մի և նոյն կազմագրով կը ձուլուին բաղւում նման իրք. սոցա մէջ նախնական տիպն միանդամ՝ կը կազմուի և յետոյ կը ծառայէ բաղւում անդամներու համար. առանց աշխատութեան բաժանման հարկ պիտի լինէր նոյն տիպարն կազմել զատ զատ ում պիտոյ լինէր :

Գ. Անշնական պարզաճամբ (adaptation personnelle). — աշխատութեան բաժանումն գործերն ատորաբաժաննելով՝ յառաջ կը բերէ գործոց անթիւ տեսակներ, կը բազմապատկէ գործարաններն, այնպէս որ անցնիւր մարդ կարէ իւրեան յարմար գործ մի դանել, մինչեւ ծերոց, կանանց և տղայոց համար իսկ կը գտնուին պատշաճապոյն աշխատութիւնք :

Դ. Տեղական պարզաճամբ (adaptation locale). — Մարդիկ այլ և այլ յատկութիւններ, կարուութիւններ և ձաշակներ ունին. նոյնպէս և աշխարհներն՝ կիմաններն ունին առանձին հանդամներ. գաւառք և քաղաքք ունին իւրեանց յատուկ ձարտարութիւններ. աշխատութեան բաժանմանք՝ անցնիւր մարդ, աշխարհ, գաւառ, քաղաք գործելով զայն ճարտարութիւնն որ պաշաճագոյն է նմա՝ կարտազրէ լաւ և շատ. յետոյ մարդիկ, աշխարհք, գաւառք կը փոխանութիւն իւրեանց մէջ իւրեանց արտադրութիւններ, և այսպէս մի ընդհանուր համերաշխութիւն կը դոյանայ մարդոց մէջ որք կը կազմեն մի մեծ ընկերակցութիւն և կը բաժնեն իւրեանց մէջ քաղաքակրթութեան գործն : Աշխատութեան այսկերպ բաժանումն կը կոչուի նողային բաժանումն աշխատութեան (div. territoriale du travail) :

Ե. Աշխատութեան բաժանման դէմ երեք առարկութիւն յառաջ կը բերէն: Մին այն թէ անհատին, կարողութիւնն կը

սահմանաւորէ, կ'անձկացնէ. մի մարդ այլ ևս ^{1/10} գնդասեղ միայն կ'արծէ. երկրորդ՝ թէ գործն պարզ լինելով՝ գործաւորն զիւրաւ փոխութիւն է. երրորդ՝ թէ միշտ նոյն տեսակ գործով զրագելով՝ գործաւորին վերայ շմար թարմութիւն ուժով: Առաջին առարկութեան կը պատասխաննեմք թէ գործաւորն միշտ միջոց կարէ գանել իւր միայն այլով իւր միայն այլով զբաղեցնելու համար. նոյն իսկ իւր գործն գործելու միջոցին՝ զոր զրեթէ այլ ևս քենապէս գործելով՝ միտքն տաւաւել կամ նուազ ազատ կը համարուի. մանաւանդ ամէն մարդ ունի ընտանիք, ընկերութեանց մէջ կը յաճախի և կ'առիվուի խորչի այլ և այլ պիտօյից վերայ և ուսնի բաղում ինչ: Երկրորդին՝ թէ նոյն սկզբամբ ուրիշ գործաւորներ ալ արձակուելով սյուստ՝ իւրեան համար տեղ կը բացուի, և ընդհակառակն գործն շատուալով ու գործ փոխելն ոնոր գործ ուսնին զիւրին լինելով՝ կարելի է միշտ գործ գրանել: Երրորդին կը պատասխաննեմք թէ գործարանաւէրն կարէ ճարտարութեան ու շափով մի զանազանութիւն մտցնել գործաւորաց աշխատութեան մէջ:

22. Աշխատութեան բաժանումն կը սահմանաւորի վաճառանոցաց (marché), եղագներու (débouché) տարածութեամբ: Արտադրութեան մի սպասման միջոցներն որքան քիչ մինի՝ բընտկանաբար այնքան քիչ կ'արտադրուի, և հետեւապէս աշխատութեան քիչ բաժանմամբ՝ որոյ նոպատակն է արտադրութիւնն զիւրել ու բազմապատկել: Փոքր քաղաքաց մէջ նոյն մարդն է բժիշկ, վիրաբոյժ, դեղադործ, ուր մեծ քաղաքաց մէջ՝ վիրաբուժութիւնն է ստորաբաժանի. — մինչ մեծ քաղաքաց մէջ առանձին վաճառատունք կան կոփի, թէ յի, ձիթոյ, քացախի, և գիւղերու մէջ նոպարավաճառն է միանդամյն սափիրչ, ճենապակելվածառ, գինեվաճառ, հասարակաց զրագիր, և: Աշխատութեան բաժանման ուսուածութեան ուղիղ համեմատութեան է եղանձներու որիւրութեան հետ, և առ աւ դարձնեալ ուղիղ համեմատութեան՝ ֆինանսանց դիրքութեան հետ: Ծովեզերեայ երկիրներ, ուր փոխադրութեան միջոցներն հեշտ են, նպաստաւոր են աշխատութեան բաժանման. այսպիսի աշխարհներ միշտ սուածինն եղած են տուրաց:

ևառի և ճարտարութեանց մէջ, որպէս Միջերկրականին աշխունք ի վաղ ժամանակաց հետէ : Ճարտարութեանց մէջ ձեռագործականն ամէնէն աւելի, յետոյ առեւտրականն յանկագոյն են ի բաժանումն աշխատութեան, բայց հողագործականը և անհիւթականը ոչ տռաջիններուն չափով :

ՀԱՐՅԱՐԱՆ : — 16. Բարւոք եղանակաւ լինելու համար՝ ի՞նչ պարտի լինել աշխատութիւնն : — 17. Ի՞նչ է աշխատութեան բաժանումն : — 18. Ի՞նչ են օգուաք աշխատութեան բաժանումն : — 19. Ի՞նչ են պատճառք այս օգտակարութեան : — 20. Ուրիշ ի՞նչ կերպով օգտակար է աշխատութեանց բաժանումն : — 21. Ի՞նչ առարկութիւններ կան աշխատութեան բաժանումն դէմ. և ի՞նչպէս կը հերքուին : — 22. Ի՞ւ կը սահմանաւորի աշխատութեան բաժանումն :

Դ Ա Ս Ե .

ՄԵՔԵՆԱՅՔ

23. Երբ աշխատութիւնն գիտութեամբ ի գործ զրուի, մարդկարու կը լինի հասկնալ անկարելութիւնն ինչ ինչ նպատակաց որոց համար յաճախ ի զուր կը ճգնին մարդիկ և կը լինին ժամավաճառ, ճանչել սիսալ եղանակներն, խնայել աշխատութիւնն և գտնել նոր ու դիւրին եղանակներ և հնարել մեքենաներ : Վիրդիլսո ըսած է. Երանի՛ այնմ որ գիտէ զգանձառու իրաց :

24. Մեքենայից օգուտներն անհաշուելի են : Մարդոց արժէն ուղիղ համեմատական է գործառն զօրութեան հետ : Մեքենայք կամ որ նոյն է կատարելագործեալ գործիք, աշխատութեան և դրամագլուխոյ զօրութիւնն տատնապատիկ, հարիւրապատիկ, հա-

զարապատիկ կ'աճեցնեն : Օրոյ անկումն ջաղացքներու մէջ 150 մարդոյ ոյժ ունի . շոգեղացքներու մէջ մի գործաւոր փոխանակէ է հազարաւոր մարդկան . մանարանաց, տպարանաց մէջ, ուր մեքենայք կը գործեն, մի մարդ փոխանակէ 2-500 մարդկան . ճամբորդութիւնք, չնորհիւ մեքենայից, 20 կամ 50 անգամ տւելի շուտ կը կատարուին . նոյն իսկ հողագործութիւնն մեքենայք մեծ դիւրութիւն և աշխատութեան խնայողութիւն բերած են հնձելու, ծեծելու, խոսքալելու, և ոգործողութեանց մասին : Մեքենայք են հանդարտ, անխոնջ և ստիւատութիւն գործաւորներ :

Մեքենայից չնորհիւ, արտադրութեան կառելեան, աժանանթեան և վայելման կարելանն յառաջ կառաջն . հետեւապէս բարեկեցութիւնն կը լինի հանրանայ, և նիւթեկան պիտոյից զոհացումն դիւրանալով՝ մտաւոր մշակումն և վայելք մատչելի կը լինին հասուրակութեան : Երբեմն Անգլիոյ մէջ ^{1/10} մեթր կերպան կ'ինար ըստ անհատ . այսօր 20 մեթր ըստ գլուխ, ի բաց առեալ արտահանութեամբ օտար երկիր տարուած կերպան . զիներն Յ անգամ նուազ են քան 25 տարի յառաջ, և 42 անգամ նուազ քան 30 տարի յառաջ : Ենորհիւ մեքենայից գիւտոյն, ընտանեկան կենաց մէջ փոփոխութիւնն մտած է, և խոնարհագոյն ընտանեկան յարկն կարէ զուրկ լինել մարդութկան առաւելութենէն, մինչդեռ Հենրիկոս Բ. ի տաեն թաշկինակ չկար և շապիկն մի պճանանլութիւն էր : Երբեմն, յառաջ քան զդիւտ տարգրութեան, մի միակ Աստուածաշունչ կ'արժէր 400 ֆրանք . ոյժմ միայն 2 ֆրանքով կարելի է ստանալ զայդ մատեան : Լրագիրք, ոչինչ գնով, ամէն օր ամէնէն յետին գործաւորին կը տեղեկացրեն ինչ որ կ'անցնի աշխարհի շորս ծայրերն և կ'ուսուցանեն պիտանի գիտելիքներ : Ուզեւութիւնք դիւրացած են անհամեմատ, և հետեւաբար մարդիկ և ժողովուրդը առաւել ճանչշած զիրեար :

Աժանանթեանն ու սպառման աճումն յարաջ կը բերէն անումն արդարութեանն և գործ : Բազում նոր արուեստներ հնարուած են, գտնուածներն կոտորակուած ու ընդարձակուած, արտադրու-

թեան տաճման պիտոյիցն համար նախօնական նիւթերու մշակումն ու հանումն յառաջ տարուած ու ընդլայնուած , բնչպէս երկաթի , բամբակի , հանքածխոյ , հանքաց . նոյնպէս և վոլոսաղբութեան վերաբերեալ ծառայութիւնիք բազմակատկուած են; բաւական է միայն դիտել թէ լոկ տաղադրութեան ձեռնառ արուեստք ո՞րշափ բազմաթիւ են :


Մեքենայից չնորհիւ աշխարհունիւնն էլ բարձրանայ , կաշուանայ . թէ շինէին հողագործութեան վերաբերեալ գործիք , ամենայն մարդիկ պիտի պարապէին ի մշակութիւն . ժողովուրդն պիտի լինէր սակաւաթիւ եւ աղքատ ի չգոյէ բաւական սննդեան եւ այլ կենսական դիւրութեանց . մեծենայդ էլ բաշխառարկեն զինս ժողովրդեան :

Աշխարհունիւնն և հաւասարունիւնն իրացման էլ նորագույն յոյժ մեծենայդ : Արխատուէլ ըսած է . Եթէ կիոց և մկրատ կարէին գնալ առանձինն , ոչ եւս պիտանի պիտի լինէր գերութիւն : Գերութեան սկիզբն մարդոց տաժանալից և անասնական աշխատութիւններէ խուսափում է , որով զօրաւորք ջանացած են իւրեանց տկար նմանեաց վերայ դնել զայդ բնուն : Զալցաք ի հընումն բազում գերիներ հանին յազատութիւն . առագաստն արծակեց բազում թիասպարտներ . շոդին աւելի մեծ ծառայութիւններ մատոյց : Հետ զնետէ մարդն նիւթոյն կը թողու աղտոտ աշխատութիւններն , կոյուղեաց մաքրութեան նոր միջոցք կը հընարուին , և մարդ արարածներ կը վերատանան իւրեանց արժանապատուութիւնն : Կնոջ ազատագրութիւնն ալ և իւր սեռին պատշաճ աշխատութեանց ու ընտանեկան խնամոց վերադարձն գուգընթաց է մեքենայից կատարելագործման ու տարածման . մինչդեռ այն երկիրներու մէջ ուր դեռ եւս մուտ չեն գտած մեքենայք ի հողագործութեան՝ կանայք կը պարապին դաշտայն ծանր աշխատութեանց , յԱնդզիս և յԱմերիկա կանայք կ'ըզբաղին աւելի ներքին ընտանեկան գործերով կամ կանայք սեռին պատշաճ աշխատութեամբ : Եւ մի միայն այս կէտ — կնոջ վերադարձն ի խնամս ընտանեաց — քանիօն կը նպաստէ ընտանեաց ազնուացման :

Շահուաց սուելցմամբ և կապակցուանիւնն աղանավութեան որդին կը յանուանաւոր վարչութեան պէտքն յատելուն մեքենայք , կզզ ացնեն կանոնաւոր վարչութեան կատերն ու խաղաղութեան կարեւորութիւնն և կը նուազեցնեն կատերն աղանավագութեան ի մէջ ազդ աց :

Վերջապէս , տաեղծելով զիւրութիւններ ամենազգի , առաստութիւն , մերձաւորութիւն մարդկան և գաղափարաց , ծովագու և ցամաքի յարաբերութիւններն կատարելագործելով , բռուն և երթալով երագող մըլում մի կուտան հաստաջորդիւննեան իւր ամէն ձեւոց տակ :

23. Մեքենայից օգտակարութեան գէմ այլ և այլ առարկութիւններ կը լինին , որք կ'ամփոփուին յայնմ թէ աշխատութիւնն կը պակսեցնեն , թոշակներն կը նուազեցնեն , որով գործաւորք քիչ կը վճարուին կամ անգործ կը մնան : Փորձերն ցոյց տուած են թէ ընդհակառակն մեքենայից դիւտն աշխատութեան խնդրանքն յաւելցուած է : Երբ 1760ին Սքքրայթ հնարեց մանելու մեջ կենան , Անգլիոյ մէջ 7900 անձինք միայն կը գործածուէին կազտարազգ ործութեան մէջ . իւր գէմ գաշնաւորութիւնը կազմուեցան . բայց 1789ին 520000 մարդիկ կը գործածուէին նոյն մուեցան . բայց 1789ին 520000 մարդիկ կը գործածուէին նոյն արուեստին մէջ . իսկ 1833ին միայն բամբակեայ կերպասուց համար մանման և անկման պարապող արհեստաւորաց թիւն կը բարձրանար 487000ի , որ մինչեւ 800000 կ'ելնէ եթէ կողմանար բարձրանար 487000ի , որ մինչեւ 800000 կ'ելնէ եթէ կողմանար բարձրանար 487000ի այսու շահած զբանն կը գործածէ կամ ընդլայնելու գործատէրն այսու շահած զբանն կը գործածէ մեռնարկն կամ յայլգործ մեռնարկելու . այսու և թէ նոյն զիւր ձեռնարկն կամ յայլգործ մեռնարկելու արձակուի մի տեղէ՝ իսկ գործաւորն մեքենայից պատճառաւ արձակուի կը պահանջէ : Բաց կը բացուի այլուր ուրիշ գործ որ բազուկ կը պահանջէ : Աստ աստի վիճակագրութիւնք հաստատած են սա օրէնքն թէ Անդրեան նուշակն ստիլն հետ սանեցած յարաբերունիւնն խորոք համեմատելի է երևակական պահանջանք աշխատութեամբ : Եթէ ի սկզբան անպատճեռու կը մի հարաբարական վարդացնան : Եթէ ի սկզբան անպատճեռու կը կարեն ունենալ մեքենայք երբ նոր կը հաստատուին թիւն մի կարեն ունենալ մեքենայք երբ հաստատուին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

գործարանաց մէջ որոց գործաւորաց մի մասն կ'արձակուի և հետեւ ապէս կ'ստիպուի գէթ՝ առ ժամանակ մի մնալ անդործ, նախ այս անպատճեռթիւն ոչինչ է գալիք օգուտներուն հետ բաղկատամամբ . յետոյ՝ արդէն ծանր կ'ընդհանրանան մեքենայք, վասն զի ծախք և գրամագլուխ կը պահանջեն, և նաև նոյն իսկ շինման և հաստատման համար աշխատութիւն կ'առթեն: Բայց արդէն աւելորդ է հակառակի՞ զի անկարելի է, վասն զի յառաջդիմութեան օրինաց և իրաց բնական ընթացից բացատրութիւնն են մեքենայք:

Հարցարան . — 23. Գիտութեան արդիւնքն ինչ է աշխատութեան մէջ : — 24. Մեքենայից օգուտներն ինչ են : — 25. Ի՞նչ առարկութիւններ կը լինին ընդդէմ մեքենայից, և ինչպէս կը հերքուին :

Դ. Ա. Ս. Զ.

Գ. Բ. Ա. Մ. Ա. Գ. Լ. Ա. Բ. Ի. (CAPITAL)

26. Այն հարստութիւն՝ որ կը գործածուի իշխանջրեւ մի նոր հարստութիւն՝ կը կոչուի Դրամագլուխ : Դրամագլուխոյն սուաւելութիւնն յայտն կը կայանայ որ կ'օգնէ նուազագոյն աշխատութեամբ սուանալու զայն ինչ զոր կուզեմք ձեռք բերել:

27. Դրամագլուխն երկու տեսակ է . Հաստատուն Դրամագլուխ (capital fixe) և Շրջան Դրամագլուխ (capital circulant): Առաջնոյն նկարագրին է արտադրել առանց տէր կամ ձեւ դրու

յակու . Երկրորդին նկարագրին է արտագրել տէր կամ ձեւ գույնով : Ըստ Ատամ Ամփիթի . Ա. Պատուի կը վերաբերին 1⁰ Ամենայն գործիք և մեքենայք, 2⁰ Ամենայն շինք ուահմանեալ յիր ինչ օգտակար, որպիսիք են խանութ, գործարան, ագարակային շինուածք, և 5⁰ Յարդարմունք և բարւորմունք ի վերայ հողը, որպիսի է հասունել վկորդ, աղբել, ցամաքել, և ա. եւ 4⁰ Օգտակար տալանդք . Բ. Դասուն կը վերաբերին 1⁰ Դրամ, 2⁰ Ամնական նիւթք, 3⁰ Նիւթք նախնականք կամ առաւելկամ նուազ գործեալք սահմանեալ ի հանդերձս, ի կահս, ի շնու, այսինքն նիւթք ճարտարութեան, և 4⁰ Կատարեալ գործն կամ արդիւնքն ի ձեռս շինողին կամ վաճառողին : Կիւյօ կը համառօտէ այսպէս . Հաստատուն դրամագլուխն է, որը առաջանական նուազն նուազն է և առաջանական նուազն է : Պէտք է գիտնալ նաև թէ Շրջան դրամագլուխ, ի բայց առեւլ դրամագլուխ : Հայութ սակառեալ դրամագլուխն չփանակ սակայն, այլ, որպիս ըսնք, միայն ձեւ կը փոխէ, որովհետեւ դրամագլուխն արժէքին մէջ կը կայանայ, և սպառեալ արժէքն երբ ձեռք կը բերուի վերասին թէ և տարբեր կերպ արժէքն երբ ձեռք կը կայանայ, միշտ դրամագլուխն է : Երբ դըպարանքի տակ՝ միշտ արժէք է, միշտ դրամագլուխն է : Երբ դըպարանքի սուագլուխոյն գործածութեամբ սուացուած արժէքն կը փոխարինէ հաստատուն դրամագլուխոց մաշումն և կը նորոգէ շրջուններուն արժէքն, դրամագլուխն վերակազմեալ է, և եթէ աւելի ինչ յառաջ բերէ այն շահն (profit) է . իսկ եթէ նուազ արժէք արտադրի քան արժէքն սպառեալ դրամագլուխոյն, այն ատեն վընաս կայ և դրամագլուխն է : Կան ճարտարութիւնք յորս դրամագլուխն կը նորոգի բազմիցս ի տարւոջ, որպէս տարագագործութեան մէջ ուր երեք ամիսը բաւական են արտա-

28. Դրամագլուխն, երբ հաստատուն է, կը նապաստէ մի ուրիշ հարստութեան արտադրման, բայց ինքն նոյն կը մնայ սուազել կամ նուազ երկար ատեն, որպիս հողն, մեքենայք, կենդանիք . Երբ շրջուն է՝ ինք կ'սպասի, կը ձեւափոխի արտադրելով մի այլ հարստութիւն : Այսպէս սպառեալ դրամագլուխն չփանակ սակայն, այլ, որպիս ըսնք, միայն ձեւ կը փոխէ, որովհետեւ դրամագլուխն արժէքին մէջ կը կայանայ, և սպառեալ արժէքն երբ ձեռք կը բերուի վերասին թէ և տարբեր կերպ արժէքն երբ ձեռք կը բերուի վերասին թէ և տարբեր կերպ արժէքի սուագլուխ միշտ արժէք է, միշտ դրամագլուխն է : Երբ դըպարանքի սուագլուխոյն գործածութեամբ սուացուած արժէքն կը փոխարինէ հաստատուն դրամագլուխոց մաշումն և կը նորոգէ շրջուններուն արժէքն, դրամագլուխն վերակազմեալ է, և եթէ աւելի ինչ յառաջ բերէ այն շահն (profit) է . իսկ եթէ նուազ արժէք արտադրի քան արժէքն սպառեալ դրամագլուխոյն, այն ատեն վընաս կայ և դրամագլուխն է : Կան ճարտարութիւնք յորս դրամագլուխն կը նորոգի բազմիցս ի տարւոջ, որպէս տարագագործութեան մէջ ուր երեք ամիսը բաւական են արտա-

դրելու և վաճառելու համար, առեւտրոյ մէջ դրամագլուխն առ ւելի շուտ կը նորոգի . կան այլ ձեռնարկք, ուր մէկ տարիէ առ ւելի ժամանակ հարկաւոր է դրամագլուխն վերակազմութեան համար, ինչպէս կաշեգործութեան մէջ: Վերակազմուելու համար հարկ չէ որ դրամագլուխն ի դրամ վերածի . շատ վաճառականք է գործարանատեարք ընդհանրապէս գործէ հրաժարելու միջոցին միայն ի դրամ կը փոխարկեն իւրեանց դրամագլուխն: Անշուշտ մի դրամագլուխ արտադրած շահն համեմատ է այն ժամանակին երկարութեան յորում կը նորոգի այն . երբ շուտ շուտ կը վերակազմի, շահն ընականարարքիշ կը լինի, իսկ հակառակ պարագային մէջ՝ շատ :

29. Արտադրեալ շահն գործածելու չորս եղանակ կարենք ենթադրել: Առաջին ենթադրութիւնն այն է թէ շահողն թաղէ կամ ի ծով նետէ իւր շահն . — այս պարագային մէջ ընկերութեան հաւաքական դրամագլուխն ոչինչ կը պակի՞ քանդի առ ւելի շահ մ՞է կորսուածն, բայց նաև ոչինչ կ'ապասի: Երկրորդ ենթադրութիւնն այն է թէ շահողն վատնէ իւր շահն խնջոցից, հանդիսից, և . — այս պարագային մէջ նոյնպէս շահն հանրական հարսաւութեան վերայ չաւելցաւ, այլ սպառեցաւ դնաց, թէ և առթելով մի ժամանակաւոր հաճոյք: Երրորդ ենթադրութիւնն այն է թէ շահողն իւր շահով գնէ կահեր, ձորձեր, արծաթեղինք . — այս պարագային մէջ ալ ոչինչ կը յաւելու ազդին արտադրիշ դրամագլուխն վերայ, որովհետեւ այդ կահերն ու անօթներն չպատճի գործածուինարարքիշ եղանակաւ: Չորրորդ ենթադրութիւնն այն է թէ շահողն յաւելու իւր շահն իւր դրամագլուխն վերայ . — այս պարագային մէջ այդ շահն մի նոր աղբիւր կը լինի շահերու, և ընկերութեան դրամագլուխն ալ կը լինի յաւելուած: Արտադրեալ շահն գործածելու լոււագոյն եղանակն է անշուշտ այս . և սխալ է կարծել թէ խնայողութիւնն սպառումն կը նուազեցնէ . ընդհակառակն սնունդ և ոյժ տալով ճարտարութեան արտադրութիւնն կ'աճեցնէ և սպառումն կը դիւրացնէ ու կ'ընդարձակէ: Ամէն խնայողութիւն, ամէն

ամուսնի դրամագլուխ տարեկան և մշտնջենաւոր շահ մի կը պատշաճական արտապատճեան: Ատամ Սմիթ խնայող մարդուն եթէ նոյն իսկ միանգամ խնայոյէ կը նմանեցնէ մի արհեսդութիւնի հիմնագրի որ կ'ապրեցնէ խումբ մի գործաւորներ, իսկ տարանի հիմնագրի որ կ'ապրեցնէ խումբ մի գործաւորներ, իսկ մասնակտութեան մի հասութիւն յանձնուած բարեկապատական հաստատութեան մի հասութիւն յանձնուած բարեկապատական հաստատութեան:

30. Կան մարդիկ որոց դիւրին է գործածել իւրեանց խնայողութիւնն յաւելլով զայն խորյն այն դրամագլուխն վերայ զոր յուղութիւնն յաւելլով զայն խորյն այսպէս են հողագործք, գործարանաւով կը գործածեն արդէն, այսպէս են հողագործք, բայց նոյնքան դիւրութեարք, վաճառականք, դրամատեարք . բայց նոյնքան դիւրութիւնն չուրա որք եկամտով կամ թոշակով կ'ապրին ողաքիւն չուրա որք եկամտով կամ թոշակով կ'ապրին ողաքիւն իւրեանց խնայութիւնքն երբ մեծ գումար մի տիւ գործածելու իւրեանց խնայութիւնքն երբ մեծ գումար համար շատ օդակար հաստատուչն կապեր: Այսպիսեաց համար շատ օդակար հաստատուչն կապեր: Երկրորդին իւրեանց խնայութիւնն արկերն, և ընդհանրապէս այն թիւներ են խնայութիւնն արկերն, և դրամատունք որք կ'ընդուամէնքն դրամական ընկերութիւնք և դրամատունք որք կ'ընդուամէնքն դրամատունք որք կ'ընդուամէնքն դրամատունք և այսպէս միացնելով զայն մեծ նին փոքր խնայեալ գումարներ և այսպէս միացնելով զայն մեծ դրամագլուխներն կը կազմեն, որք չպիտի գային ի ըցա և ի գործաթիւններն այլպիսի հաստատութիւնք:

31. Անցնիւր ազգի պիտոյից բնութիւնն և աշխարհագրական գիրքն կ'որացն զայն ձեւ ընդ որով կը դիվուին իւր դրամագլուխ գիրքն է նորածին ընկերութիւնք աւելի հողային բարեկապատաց, մանաւանդ կը ծառայեւթիւնք և գործեաց մանաւանդ կը ծառայեւթիւնք ըլնեն դրամագլուխն . տարագուրդք ժողովուրդք՝ նախնական նիւթոց, գործարանաց, մեքենայից, վաճառական ազգք՝ ձարձարապութեան այլ և այլ ձեւերն միանդ ամայն ի կիր արձարապութեան այլ և այլ ձեւերն միանդ ամայն ի կիր արձարապութեան գրամագլուխն կը բազկանայ այլ և այլ նիւթերէ, կող ժողովրդց գրամագլուխն կը բազկանայ այլ և այլ նիւթերէ, ամէն արուեստի և պէտքի յատուկ պաշարաց մեծ քանակութիւններէ:

32. Ամանք կը վախնան դրամագլխոց ծայրայեղ և անվերջ աճումէն, վասն զի մեծ անհաւասարութիւններ կ'ստեղծէ : Այս երկիւղն անտեղի է . նախ դրամագլուխք չուտով և մէկն ի մէկ շեն աճիր . ժամանակի և աշխատութեան պէտք կայ . — Երբ կը տեսնուի թէ երբեմն յանկարծ կը հարստանան մարդիկ, ճշշմարիտ և արդար շահով չէ այն, այլ անիրաւ յափշտակութեամբ, և այն ատեն դրամագլխոց տեղափոխում կայ անարդար, և ոչ թէ աճումն . երկրորդ՝ յաւելեալ դրամագլուխն, իմաստութեամբ գործածուելով, բարեկեցութիւն կը յաւելու իւր շուրջ . Երրորդ՝ հարստութիւնք միշտ կը կոտորակին իրաց բնական բերմամբ, երբ վաւակաց կամ ժառանգորդաց մէջ կը բաժնուին : Բաց աստի անշուշտ մարդասէր հարստաներ պէտք է որ թէ ի կենդանութեան և թէ ի մահուան օգտաւէտ հանրաշահ հաստատութեանց նուէրներ ընեն, դրամագլուխներ կտակեն, և այսպէս ապածեն ու զրեթէ աճեցնեն դրամագլխոց օգուտներն :

33. Դրամագլուխն անբեր (improductif) է երբ կը մնայ անկործ, սրակս ագահն ստացուածքն զոր կը պահէ արկղին խորն . ագահն թէ ինքն կը զրկուի իւր դրամագլխոցն արդեանց վայելումէն և թէ զայտ կը զրկէ : Երկրի մի մէջ անապահովութիւն, բաղադրական փոթորիկներ դրամագլուխներն կը դատապարտեն ամուսնութեան . հետեւապէս արտեսաք կը դադրին, վաճառականութիւնն կը կազայ . և ընդհանուր տապնապ կը տիրէ : Ամուլ անբեր դրամագլուխներ են նաև եկեղեցեաց և վանուց մէջ գտնուած սոկեղէն, արծաթեղէն և գոհարեղէն զարդերն, անհատական տանց մէջ եղած մեծագին կահերն ու կոպմածներն . այդ հարստութիւնք կարէին գործօն դրամագլուխներ դառնալ, սնուցանել արուեստներն ու վաճառականութիւնն և գործ ու սնունդ . հայժայթել բազմաթիւ մարդկան . ուստի երբ աղքատն կը հիանայ ճոփին պերծութեան և շոայ լութեան վերայ, ի վետ իւր միայն կը հիանայ :

Հարցարան . — 26. Ի՞նչ է դրամագլուխն : — 27. Քանի՞

տեսակ է դրամագլուխն : — 28. Ի՞նչպէս կը նորողի դրամագլուխն . դրամագլխոցն շահն ինչպէս կը համեմատի ժամանակին . հետ : — 29. Քանի՞ կերպ կարելի է գործածել արտադրեալ շահն, և որն է լաւագոյնն : — 30. Ամէն ոք գիւրութեամբ կարէ շահագործել իւր խնայողութիւններն : — 31. Ամէն ազգի մէջ մի և նոյն ձեւով կը զիսուին դրամագլուխք : — 32. Երբ կիւղալի չէ դրամագլխոց տարապայման աճումն : — 33. Երբ անբեր կը լինի դրամագլուխն :



Դ Ա Ս Ե

ՏՈՒՐԵԿԱՆ (C O M M E R C E)

34. Մէն մի մարդ այլ և այլ պէտքեր ունի, բայց ինքն առանձին չէ կարող զայն գոհացնել . իւր մասնաւոր կարողութիւնքն ու ձաշակներն, ինչպէս եւ հանգամանքներն այն տեղւոյն աւր կ'ասլրի, զինքն աւելի այս ինչ գործին յարմար կ'ընենքան մի ուրիշի . ուստի իսկզբանէ և բնականաբար ծնած է մարդոց մէջ աշխատութեան բաժանումն : Այս օրինօք, անցնիւր մարդ, թէ և ունի բազում պէտքեր, մի միակ պէտք գոհացընելու յարմար իրեր արտադրել կը ջանայ, և ոյն շատ աւելի քան որչափ ինք պէտք ունի, և յետոյ ֆոխտակունեան (échange) օրինօք մարդիկ իւրեանց մէջ կը փոխանակեն այդ իրերն, ու իւրաքանչիւր ոք կարէ այսպէս գոհացնել իւր այլ և այլ պէտքերն, թէ և ուղղակի կերպով ի նոցանէ միայն գոհացման յարդերն, ուստի է իւր ասանձին գործունէութիւնն : Այսպէս հոգագործն միայն ցորեն արտադրել պէտք կարող է ունենալ բնակարան, հանգերձ, կահ կարասի, վասելիք, զանազան ուտելիք, կօշիկ, գերք, և այլն :

լեն ամէն մարդոց և ամէն երկիրներու լաւագոյն արդասիքն նպաստաւորագոյն պայմաններով : Հետեւապէս զատապարտելի են տնաեսապիտական օրինաց առջեւ այն ամէն դրութիւնք և օրէնադրութիւնք որոց կէտ նպատակին է արդելքներ զնել ազգա ժամանակաշենք (libre échange), ազտա վաճառականութեան առ ջեւ , որպիսիք են Պաշտպան դրաւթիւն (protectionnisme), Վաճառական դրաւթիւն (système mercantile), Առեւարական հետ (balance du commerce) կոչուած դրութիւնք :

յինք գոյացնել : Ազատ փոխանակութեան մասին պէտք չէ նոյն խոկ սպասել քոյադաշնանեան (réciprocité), այսինքն ազատ մուռաք տալ վաճառաց այն երկրին որ ազատ մուռաք կուտայ ներոցն, զի Անդ զիա այսպէս ըըներ , և սակայն որչափ բարդաւած է իւր վիճակ :

38. Միւս երկու գրութեամբք որք նոյն են (syst. mercantile և bal. du commerce) կուզեն երկրի մի մէջ ստակն , սոկին ու արծաթին չափակուցնել , այլ ըստ կարի չափացնել՝ շատ արտածուն նէան (exportation) ընելով և քիչ Ներժունունեան (importation), և այս նավատակին հասնելու համար ներածեալ բերոց դէմ կանգնել կուզեն ծանր մաքսերու պատճեն : Այս գրութեան սիմալն այն նախապաշտութէն յառաջ հեկած է որով կը կարծուի թէ միա այն ոսկին է հարստութիւն , ուստի կ'ենթագրուի որ երբ շատ զուրու ելած վաճառքին դէմ քիչ վաճառք ներս մտնէ , տարբերութիւնն զրամոց ծեւով մտած է երկրին մէջ , և մաքսատանց մէջ զգուշութեամբ կը բանեն մի հշեա առեւոքոյ՝ ցուցնող զել և զինուա վաճառաց : Հարստութիւնք հարստութեանց հետ , արժէք արժէից հետ կը փոխանակուին միշտ ո՛ր և է ձեւոյ տակ : Հատ այս գրութեան , որպէս զիտել կուտայ ֆր. Պասդիս , երբ վաճառականաց սպրանք նաւահանգստէն գուրս ընկղմին և չկարեն փոխարէն ասպրանք ներածել , պիտի կարծուի թէ երկիրն կը հարստանայ մինչդեռ իրօք վեսամծ է : 1827-1836 ժամանակամիջոցին մէջ Գաղփոյ թանկագին մետաղաց ներածութիւնն եղած է , 1,809 միլիոն , խոկ արտածութիւնն 679 միլիոն . 1867-1876 ժամանակամիջոցին մէջ ներածութեան և արտածութեան տարբերութիւնն աւելի եւս շատցած է . ներածութիւնն եղած է 6,479 միլիոն , արտածութիւնն 3,007 միլիոն : Ըսել է որ ազատ վաճառականութիւնն սպատճառ մի չէ թանկագին մետաղաց պակսելուն , վասն զի ահա Գաղփոյ մէջ նոցա ներածութիւն յաւելցած է մասնաւորապէս 1860 էն ի վեր ուր Գաղփոյ ընդհանուր ներածութիւնն 1879 ին էր 8,200 միլիոն , արտածութիւնն է, 800 միլիոն . միթէ

այս երկիրներ թշուան են , կամ արուեստ և վաճառականութիւն յետնեալ են ի նոսա , վասն զի իւրեանց ներածութիւն աւելի է զրեթէ կիսով քան զարտածութիւն :

39. Տայն վիասներն ունին ո՛ր և է մենաշնորհք , մենավաճառք (régime, monopole) ևայլն . զի կը ջնջեն մրցութիւն , և մրցութիւն ջնջելով կ'արգելուն որ իրաց զներն իւրեանց բնական մակերեսն գտնեն : Տնտեսական հրցութիւն և որ յառաջ բերած է մարդկան բոլոր նշանական յառաջդրէննեւնն : Մրցութիւն կախւ է , գործունէութիւնն և կեանք է . արգիլել զայն՝ բառնալ է յառաջդրէմութեան ամէնէն զօրաւոր արտադրիչներէն մին : Վերջապէս ամէնայն արգելք՝ որք կը զրուին ազատ առեւտրոյ վերայ՝ ունինք զրչուն զրամազլիսոց արժէքին նուազութիւն և հետեւաբար հաստատուններուն արժէքին բարձրացութիւն խափանել . ուստի յայտ է թէ « Պաշտպան զրութիւնն յատկագոյն եղանակն է կործանելու մի երկիր » . Կիցօ :

Հարցարան . — 34. Ի՞նչ է փոխանակութեան օրէնքն : — 35. Վաճառականին օդտակարութիւնն ի՞նչ է : — 36. Ազատ փոխանակութիւնն ի՞նչ օդուտներ ունի . ի՞նչ են ամս հակառակ զրութիւնք : — 37. Պաշտպան զրութիւնն ի՞նչ է . ի՞նչպէս կը հերքուի : — 38. Վաճառական դրամական դրամական և առեւորական հշեա կոչուած զրութեանց նպատակն ի՞նչ է . օդտակար և բանաւոր են ստուգիւ : — 39. Մրցման բարձման վիասներն ի՞նչ են :

Գ Ա Ս Ը .

Գ Ի Ւ (P R I X)

40. ՏԱԿ Հարստութեան մի չափն կարեմք իմանալ չափելով զայն իւր մի փոքր քանակութեամբն զոր իրեւ միութիւն կ'ընդունիմք. միութիւնն ալ կ'որոշուի կամ ըստ թուոյ, կամ ըստ տեւալութեան, կամ ըստ տարածութեան, կամ ըստ կըուոյ զ զորօրինակ՝ և ոչխար, և ժամ աշխատութիւն, և կանգուն կերպաս, և քիչ լոկամ հաց : Նաև, երբ երկու հաւասար արժէք կը փոխանակուին, մին միւսոյն չափն կը համարուի : Եթէ ամէն արժէք չափեմք մի միակ արժէքի հետ, այս վերջինն կը ինի ընդհանուր չափ արժէից : Բայց արժէից բացառյան ընդհանուր չափ մի չէ կարելի գտնել, վասն զի ամէն արժէք էտպէս փոփոխականն է, երկու հարստութիւն համարժէք են միմեանց միայն այս ինչ ժամանակին և այս ինչ տեղադրութիւնն ալչ : Ընդհանրապէս ոսկին և արծաթն ընդունուած են ընդհանուր չափ արժէից, և ակաց կամ արծանու, այն ունակուանիւնն որոյ հետ կը փոխանակենք օգոստակուանիւնն մի կը կարուի նորո գինն . կամ ուրիշ բառերով, գինն է երբ ճ'արշէին բացադրուանն ոսկաց կամ արծանոյ արժէկով :

41. Գրամի արժէքն շատ պարագայից մէջ և սահմանաւոր տեղեաց ու ժամանակաց համար լաւագոյն ընդհանուր չափն կուտայ արժէից, սրով և արժէքներն ալ կարեմք իրերաց հետ բազգատել . բայց պէտք է զիսկել թէ ինքն իսկ անփոփոխ չէ, այսինքն ոչ միայն այլ հարստութեանց իւրեան հետ համեմատութիւնն կը փոխուին, այլ նոյն իսկ իւր օգտակարութեան չափն ու արժէքն կը փոխուի և հետեւապէս չունի մաթեմատիքական ձգութիւն : Երբ պատմական գումարներու վերաց խօսուի՞ պէտք չէ այդ գումարներուն տալ այն արժէք զունի արդ առ մեզ հաւասար ոսկաց կամ արծանոյ քանակութիւնն մի, այլ

դիտել ուկւոյն և արծէքն նոյն իսկ այն ժամանակաց մէջ զորոց կը խօսուի : Ումանք կարծած են թէ ցորենն կամ աշխատութիւնն կարեն լաւագոյն ընդհանուր չափ մ'ըլլալ, բայց կը սխալին . վասն զի ցորենին արժէքն ալ՝ թէ և ծանր՝ բայց վերջապէս փոփոխականն է, իսկ աշխատութեան մասին միութիւնն որոշեն է դժուար, քանզի ամէն մարդ մի և նոյն դիւրութիւնն ու կարողութիւնն չունի աշխատութեան և ամէն մարդու համար մէկ ժամ աշխատութիւն ոչ հաւասար յուղնութիւն կը նշանակէ և ոչ հաւասար արժիւնք : Ատամ Ամիթ սխալած է զաշխատութիւնն զնելով միակ չափ և հիմն արժէից, սառուզիւ աշխատութիւնն, որպէս տեսանք, արժէքին տարբերին մին է, բայց չեն մտադրել պէտքն, օգտակարութիւնն, հազուագիւտութիւնն, որք նոյնին այլ տարբերքն են :

41. Երկու տեսակ գին կ'որոշուի ընթացիկ գին (prix courant) և ալլենական գին (prix original ou prix de revient) : Բնիթացիկ գինն է հրապարակի գինն, իսկ սկզբնականն այն որ արժած է իրն արտադրողին . Ատամ Ամիթ այս վերջինն կոչած է նաև, թէ և ոչ այնչափ բանաւորակէս, ընտիկ գին (prix naturel) : Բնիթացիկ գինն կամ հաւասար է սկզբնականին, կամ վեր է կամ վար քան զայն . կ'որոշուի հրապարակին պարագայներին և արտադրողին ու սպառողին փոխադարձ կացութենէն, ծախողին և գնողին ազատ հաճութեամբն : Գինն փոփոխական է որպէս արժէքն որոյ բացադրութիւնն է :

42. Գնոց փոփոխութեան պատճառներն ումանք ուզած են համառօտել Մատուցման և լինգրանաց աղյուսութեան մէջ, և այլք՝ որպէս Ռիքարտօ՝ մի միայն արտադրութեան ծախուց մէջ: Եւ նախ պէտք է զիսկել թէ Մատուցումն և լինգրանք ըսկով շեմք իմանար միայն հրապարակի վերաց եղածն ու յայտնուածն, այլ նաեւ հաւանականն, խնդրողին պէտքն ու կարողութիւնն, փոխադրութեան և փոխանակութեան միջոցաց առաւել կամ փոխադրութեան ու հեշտութիւնն, նիւթոց բնութիւնն ու

առաւել կամ նուազ պահելի լինելն , հնձոց առատութեան յոյսն կամ նուազութեան երկիւղն , ի մօտոց վաճառք գալու կամ չգալու հաւանակութիւններն , քաղաքականութեան պայմանք , հրապարակի հնարք և խարդաւանանք , այս ամենայն կը ներգործէ Մատուցման և Խնդրանաց վերայ : Արդ , ոմանք տեսնելով որ Մատուցումն և Խնդրանք կը բացառեն ու կամիութեն այն պայմաններ որք ընթացիկ գնոյն փոփոխութիւնն յառաջ կը բերեն , ըսած են և Գինն ուղիղ համեմատական է Խնդրանաց և խոտոր համեմատական է Մատուցման հետ . այսինքն թէ վաճառքի մը գինն այնքան վար է որչափ հրապարակի վրայ շատ քանակութեամբ կայ և որչափ ըիչ են ուղղուներ , և ընդհակառակն գինն այնքան բարձր է որչափ հրապարակի վերայ քիչ քանակութեամբ կայ և որչափ շատ են խնդրողք : » Բայց որովհ հետեւ Մատուցումն և Խնդրանք ինքնին միայն չեն կարող բացատրել արժեքին և հետեւապէս գնոյն կազմութիւնն , Ոիքարու և իրեն պէս խորհուղներ արտադրութեան ծախուց մէջ ուղած են տեսնել գնոյ կանոնն , ըսելով « Ընթացիկ գինն կ'որոշուի ըստ արտադրութեան ծախուց՝ ուղիղ համեմատութեամբ ոյն ծախուց հետ » : Բայց սորա ևս կը սիմային : Ոիքարու նկատողութեան չառնուր բնական և արտեսատական մենավաճառներն որք գնոյ վերայ կ'ազգեն մեծապէս՝ արտադրութեանց քանակութիւնն շափառելով և մրցումն սահմանափակելով : Ուստի աւելի ուղիղ է ըսել թէ իրաց արժեքն ու ընթացիկ քիչն կտիսամ ունին մասնաւայն ժառանցմանէ և ինդրանէ և արտադրութեան ծախուցներն : Արտադրութեան ծախքերն իրեւեւ կեդրոն մ'են ծանրութեան ուր կը հակիմիշտ իրաց գինն , բայց մրցման ազդեցութիւնն յայս կամ յայնկայս այդ կեդրոնին կը տարութերէ զայն : Գնոց փոփոխականութեան մի պատճառն ալ իրեւեւ դրամ ծառայող մետաղին արժեքին փոփոխական լինելն է , որովհետեւ երկու եղբերն ալ փոփոխական են , թէ և կը կարծուի թէ ոսկեոյն կամ արծաթին գինն միշտ նոյնն է : Որպէս զի իրաց ճշմարիտ և բնական գինն յերեւան գայ , աղասի մրցումն մի հիմնական պայմանն է : Բաց աստի , երբեմն մարդիկ անհոգութեամբ , սովորութեամբ կամ

սնամիառութեամբ անմիոյթ են իրաց բուն գինն իմանալ , և այսու կը մեկնախ ինչ ինչ իրաց գնոյն անփոփոխութիւնն և սղութիւնն այլոց որք սակայն աժան կը չինուին :

43. Աժանառնէն և աշունիւն բառերն շատ անգամ մի միայն յարաբերական իմաստ մի կը յայտնեն , և հետեւապէս շատ անգամ ալ զմեզ կը խարեն : Սղութիւնն ու աժանութիւնն յաձախ կ'ըսուին վերաբերութեամբ սովորական գնոյ , արապարութեան ծախուց , ժամանակաց և տեղեաց , եղանակաց , ճարտարութեան կամ հրապարակի բացառիկ պարագայից , գնողաց կարողութեան , ևայլն : Այս ինչ 10 ֆունքի աժան էր 200 տարի յառաջ որ Ա ֆունքի սուղ է այժմ : Բայց կայ անջուշտ ճշմարիտ սղութիւնն եւ աժանութիւնն , և յառաջդիմութիւնն կը բանաձեւի գնոյ նուազութեամբ : Բայց իրի մ'աժանութիւնն իմանալու համար՝ հարկ է միտ դնել բուն ներքին արժեքին , և ոչ անուանականին : Արժեկ և ֆէն բառերն իրարմէ արթեր բառեր են . յաճախ իրի մի գինն կը փոփուի բայց ոչ արժեքն . այն ատեն փոփոխութիւնն միայն անուանականէ : Եթէ Ամերիկայի ոսկեայ և արծաթի հանքերն չինէին , այսօր աշխարհի վերայ աւելի քիչ պիտի լինէր դրամն , բայց այսու հարստութիւնք պակսած չփափի լինէին , միայն թէ սոյն թանկազին մետաղաց մի փոքր բանակութիւնն այսօրեայ մի աւելի մեծ քանակութեանն համարձ էք պիտի լինէր , և այնպէս պիտի երեւէր թէ իրը աժան են : Արժեքն իրի մի քննան կարողան (puissance d'achat) է . այսու կը չափուի հարստութիւնն . այսինքն՝ պէտք է նայիլ թէ այսինչ շափ հարստութեան փոփոխէն որից որչափ որից հարստութիւն կարելի է ստանալ , և ոչ թէ որչափ մէծախցէ կամ լիրա :

44. Արժեքին և գնոյն բնութիւնն չիմանալէ յառաջ եկած է Քժագայն ֆէն (prix maximum) որոշելն , զի , որպէս տեսնուեցաւ , սոքականութեան տնական պատճառներէ , և յետոյ գործառնութեանց անկախութիւնն հիմնական պայմանն մի է իրաց արդ արժեքին յայտնուելուն : Եւ արդէն այսպիսի

որոշումներ չեն հասնիք իւրեանց նպատակին, վասն զի վաճառող և գնող ամէն միջոց ի գործ կը գնեն ապարդիւն գործելու համար զայնու: Եւ յետոյ, կը վեսան արտազրութեան և ըստաման: Մեծագոյն օրինական զներն այն ատեն արամարտանական և օրինաւոր են երբ կը վերաբերին՝ իրաւամբ կամ յանիրաւի օրինօք հաստատուած մենափաճառներու: Արդէքին և գնոյն սխալ յացումէն յառաջացած է նաև դրամներն նենդել, թղթադրամ հանել, արգելք և կատանք գնել առևտոյն և այլն:

Հարցարան . — 39. Ի՞նչ է զինն : — 40. Յորեն կամ աշխատութիւն կարե՞ն լաւագոյն ընդհանուր չափ մի նկատուիլ: 41. — Գինն քանի՞ տեսակ է : 42. — Իրաց զիներն ի՞նչ բաներէ կախում ունին : 43. — Այս և առաջ բառերն միշտ բացարձակ իմաստ մի կը յայտնեն : 44. — Օրինաւոր է թղթագոյն է՞ներ սահմանել :



Դ. Ա. Թ.

Դ. Բ. Ա. Թ. — MONNAIE

45. Մարդիկ սկսած են պարզ և ուղղակի փոխանակութեամբ (ԵօՅ) . զոր օրինակ ցորեն ունեցող և զինիի կարօտողն գինի ունեցող և ցորենի կարօտող մի գտած և փոխանակած է իւր ցորենին մի մասն նորա գինւոյն մի մասին հետ . բայց քանի որ մարդոց պիտոյք բազմացած , աշխատութեան բաժանումն ընդլայնուած և փոխանակութեան հարկն աճած է , փոխանակութեան այս պարզ ու նախնական կերպն անբարեկ է , այն ատեն մարդիկին համար են զայնու:

թիւն մի ընտրած են իրեւ հաստրակաց չոք որժեւի , իրրի քորդի և միջնորդ է ուստանակութեան , իրրի ընդհանուր է էրդորվ ընդհանուր է լուսաւուած լուսաւուած: Որ և է հարստութիւն կարէ իրեւ դրամ ծառայել , և արդէն այլ և այլ ժամանակաց և երկիրներու մէջ գինին , ձուն , ձէթն , ցորենն , բրինձն , մորթերն , ծխախոսն , բեւեռներն , թէյն , կովերն , խեցեմորթք , աղն ծառայած են իրեւ գործի փոխանակութեան : Բայց գտնուած է թէ մետաղք և ի նոցանէ ոսկին և արծաթն ամէնէն աւելի պատշաճ են սոյն գործածութեան , և ըստ այնու հիմայ իրրի դրամ ընդունուած են այս վերջին երկու թանկագին մետաղներն :

46. Դրամ լինելու ամէնէն աւելի յարմար այն վաճառքն է որ ամէնէն աւելի յինքեան կը միացնէ սա պայմաններն . 1⁰ ինքնին արժէք մ'ունենալ , վաճառք մ'ըլլալ . 2⁰ բաժանական լինել . 3⁰ լսու կարեւոյն նուազ փոփոխական արժէք ունենալ . 4⁰ Տեւական և անալյալի լինել: Արդ յայտնի է թէ բոլոր մետաղներէն ոսկին և արծաթն աստեւլազոյն աստիճանաւ ունին այս հանգամանքներն , վասն զի զիւրաար են , անզիթար կը մնան , քիչ կը ժանդուին , միշտ նոյն յատկութիւններն կը պահեն , բաժանելի են ի մանր մասունս , որոց իւրաքանչիւրն կը պահէ իւր համեմատական արժէքն , իւրեանց արժէքն քիչ եւ յամրապէս ենթակայ է փոփոխութեան՝ թէ և ոչ բացարձակապէս անփոփոխ : Ահա էր հետպէսէ ամէն այլ վաճառք , նոյն խակ այլ մետաղք որք մերթ գործածուած են իրրի դրամ (զորօրինակ անազ , պղինձ)՝ տեղի տուած են սոցա առջեւ :

47. Ըսկնք որ դրամին , կամ որ նոյն է , ոսկւոյն և արծաթին արժէքն բացարձակապէս անփոփոխ չէ , հաստատուն չէ , նորա արժէքն ալ , ինչպէս այլ վաճառաց , կախումն ունի Մատուցման և լինդրանաց և Արտազրութեան ծախուց պայմաններէն : Երբ այս մետաղաց քանակութիւնն շատնայ՝ բնական է որ դրամին արժէքն կը նուազի , հակառակ պարագային մէջ կը բարձրանայ : Ամերիկայի գիւտէն յետոյ՝ ոսկւոյ և արծաթի

գինն զգալի փոփոխութիւն կրեց . բայց որովհետեւ հանքահանութեան գժուարութիւնը ու ծախքերն կան , սոքա կը մեզմացը նեն իւր քանակութեան յաւելմամբ կործուելիք փոփոխութիւնն : Սակայն Պ. Լէպէր հաջուած է թէ ստակին զօրութիւնն մեր ժամանակի (1820-41) զօրութեան կրկնապատիկն էր ֆԸ դարու մէջ , և սապատիկն՝ Ժէ դարու Ք. քառորդին մէջ , քառապատիկն Ժէ դարու Ա. քառորդին մէջ , ութպատիկն՝ Թ. դարու առաջին ատրիներուն մէջ , մետասանապատիկն՝ Ը դարու վերջերն : Բոտ այլց և այսօր Յ անգամ աւելի ոտիկ և Հ անգամ աւելի արծաթ պէտք է մի և նոյն իրերն զնելու համար քան յատաջ քան զդիւտ Ամերիկայ : Հետեւապէս ջանալ մի և նոյն կէտի վերայ կամ երկրի մէջ Ժողովել կարելի եղածին չափ մեծ քանակութիւն ոսկեց և արծաթոյ՝ մի յիմարութիւն է , քանզի այն ատեն ամէն նիւթոց արժէքն կը բարձրանայ համեմատաբար , այսինքն կ'ստիսումիք մի և նոյն իրերն զնելու համար գործածել աւելի մեծ քանակութիւն մի ոսկեց կամ արծաթոյ : — Գրամին արժէքն կը փոփոխի նաև քիչ շատ ըստ տեղեաց . ոտկին աւելի աժան է ի լոնտրա քան ի Բարիկ :

48. Դրամոց արժէքն չկարէ ինքնահաճ կերպիւ որոշութիւնը նութեան կողմանէ , վասն զի այս արժէքն ալ ունի իւր բնական տարերն ու պատճառներն . արդիւնք է այն մետաղին ըստ ինքեան ունեցած օդտակարութեան իրեւ պիտանի նիւթ ի ճարտարութեան , իւր արտադրութեան ծախտոց , շրջաբերութեան համար մեր ունեցած պէտքին , Մատուցման և ինդքանաց : Հետեւապէս ոչ խմբք կը ծառայեն զրանց օրաշտօնական խարդախմունք , թղթադրամք , մեծագոյն արժէքի որոշում . փորձառութիւնն հաստատած է աղքատութիւնն բարեկելու և տագնապ մի քաղաքէլու մասին այս միջոցաց ապարդիւնութիւնն , ի բաց առեալ յեղաշրջութիւն առեալոց մէջ , վրդովաւմ շահերու , վլաս :

49. Դարձեալ պէտք չէ կարծել թէ ոտկին և արծաթն են միակ հարստութիւն : Հարստութիւն են , բայց ոչ միակ : Բաց աստի , հարստութիւն են մանաւանդ իրեւ գործի փոփոխակութեան , իրեւ նշան առ մեզ պէտքակարութեանց որոց հետ կը փոփոխակեմք մեր վաճառքներն ու ծառայութիւնըն և որոց առժամկեայ ներկայացուցիչն է մեր քով զրամն : Եթէ իւր այս օդտակարութիւնն շինի , իւր այլ օդտակարութեամբք զրամն շատ յետին է աւելի կարեւոր պէտքէր գոհացնող հարստութեանց կամ օդտակարութեանց քով : Եթէ շինէին այն կարեւոր նիւթեր որոց հետ կը փոփոխակեմք զրամն , ինչ բանի պիտի ծառայութիւնն միթէ կարելի է ուտել , հագնիլ զրամն , նորամէջ ու այէլ սա . միթէ կարելի է ուտել , հագնիլ զրամն , նորամէջ ու այէլ , ևստի կը տեսնուի թէ նըշափ կանգիսանան զըրնակիլ , ևս : Աստի կը տեսնուի թէ նըշափ կը համարին միակ բամին բնութիւնն ու դերն նոքա որք զայն կը համարին միակ հարստութիւն ու բարիք , և զրամն զրամին համար կը ջանան շահիլ :

50. Յորմէհետէ Գրիփորնիոյ (1848) և Աւստրալիոյ (1851) ուկեհանքաց գիւտն սկսաւ փոփոխել ոսկեցն գինն արծաթին և այլ վաճառաց վերաբերանեմք , միշտ խնդիր եղած է թէ վերջնապէս երկու մետաղներէն որն ընդունելու է իրեւ միութիւն արժէքէ երկու ի միամի՞ն ընդունելու է (éalon unique, phr. կամ թէ երկուքն ի միամի՞ն ընդունելու է (éalon double) : Այս խնդրոյ վերայ բազմաթիւ հատորներ գըրուած են տնտեսագիտաց կողմանէ որք տարակարծիք են այս մասին , և տէրութիւնք ևս տարրեր եղանակաց հետեւած են : Անդզիս , Գերմանիա , Տանիմարքա , Շուէտ , Ճարոն ոտկին ընդունած են իրեւ օրինական միութիւն արժէքի . այլք , որպէս Գաղիքա , Խալիլա , Պելճիքա , Զուիցերիքա , ընդունած են կրկնակ դրամի դրութիւնն՝ ալաշտօնական կշիռ մի հաստատելով երկու մետաղաց մէջ , որ է 15,5 : 1 . Աւստրիոյ և Ուուսիոյ մէջ աւելի արծաթն կը թուի մինել միութիւն արժէքի , թէ և Աւստրիա 1870էն ի վեր 20, 10 ֆրանքի որոշ արժէքով ոտկեղրամ հարականել սկսելով՝ կը հակի ընդունել կրկնակ դրութիւնն : ՑԱնգականել սկսելով՝ կը հակի ընդունել կրկնակ դրութիւնն :

տապէ ոսկւոյ գնով։ Կրկնակ դրամի զրութիւնն անտեղութիւններ և մասներ ունի, վասն զի երկու մետաղաց կշխան (rapport) փոփոխական է։ 1501-1520 այդ կշիռն եղած է 10,75։ 1681-1700՝ 14, 96։ 1731-1740՝ 15,07։ 1876-1878՝ 17,63։ Երբ մի երկրի մէջ երկու մետաղք ալ պաշտօնապէս որոշ գնով մընդունելի են վճարմանց համար, բնականարար վճարմանք կը լինին այն մետաղով որոյ գինն իջած է, և այսպէս վճարուողն կը կորուսնէ։ մանաւանդ որ ազգք առեւտրական անընդհատ յարաբերութեանց մէջ են, և ամէն ազգք միաբան չեն մի և նոյն դրութեան վերայ։ Գաղղացւոյն արծաթն միշտ նոյն բանն չկարէ գնելյ Անդզիա ինչ որ կը գնէ ի Գաղղա։ Արծաթ դրամն, տասն-եհնու անդամ աւելի ծանր լինելով քան զսակին, յարմարութիւն չունի միակ օրինական դրամ լինելու։ և որովհետեւ կրկնակ դրութեան մէջ միշտ այս կամ այն մետաղն է որ ըստ պարագայից իրօք միւսմիւն կը լինի և կը ծառայէ վճարմանց, հետեւարար յայտնի է թէ առաւելութիւնն ոսկեդրամն իր միւսմիւն ընդունողներուն կողմն է։

54. Որովհետեւ ոսկւոյ և արծաթի արժէքն բարձր լինելով՝ չէ կարելի գործածել զայն շատ մանր գնումներու համար, պղնձեայ կամ պղնձի ու արծաթի, անագի, նիբէլի խառնուրդ դրամներ՝ որք հիլոն կը կոչուին՝ հնարուածք են ի դիւրութիւն գողովրդեան։ Այս անունն արուած է ի ոկզբան ոսկւոյ և արծաթի խառնուրդներուն։ Այս դրամներուն ներքին արժէքն անուանական արժէքէն շատ վար է, որովհետեւ եթէ այս երկու արժէքներն պատասխանէին միմեանց շատ խոշը ու ծանր պիտի լինէին այս դրամներն։ հետևաբար նոքա մի միայն Ներկայացուցէն նշնու (signes représentatifs) են արժէքի և ոչ երաշխաւորութիւն։ Այս դրամներու մասին երկու պայման պէտք է ի նկատի ունենալ։ 1⁰ Սահմանաւոր քանակութեամբ արտադրուին, 2⁰ իրեանց ընթացքն մինչև որոշ աստիճան մի ստիպուղական լինի։ Ի Գաղղա մինչ 3 ֆր., յԱնդզիա մինչեւ 1 շլին սափալողական ընթացք (cours forcé) ունին։ Արդէն թղթատարութեան դրամներն (timbre poste)

սկսած են սոցա գործածութիւնն սահմանաւորել։ Երբեմն աէ ըութիւնք զեղծած են այս դրամներով՝ մեծ քանակութեամբ արտադրելով և անսահման ընթացք տալով։ ինչպէս Ռուսիոյ կառավարութիւնն որ 1762-1811 90 միլիոն բուսլի պղնձադրը միլիոնի միայն կ'ելնէր։ Եւրոպիոյ և Ամերիկայի ինչ ինչ տէրութեանց մէջ ալ զեղծումներ եղած են, և ցայսօր Հարաւային Ամերիկայի աշբութեանց, մանաւանդ Պրեզիլիոյ մէջ պղնձն առեւտուրն խանգարող ու վսասող ցեց մի է։ Անշուշտ այս դրամնց չափաղանց արտադրութիւնն ու անսահման ընթացքն կը նշանակն իւղի զրամոյն տալ օրինական ընթացք։ Թղթադրամք ալ նակեն կեղծ զրամոյն տալ օրինական ընթացք։ Եթէ օրինաւոր երաշներիկայցուցիչ նշանք են և ոչ բուն դրամ։ Եթէ օրինաւոր երաշներութեան տակ չեն և իրեանց արտադրութիւն սահմանաւոր չէ, առեւտուրն կը խանգարեն, վսասուներ ու կորուստներ կը պատճառեն և վերջապէս մի օր կը դառնան ոչինչ։

Հարցարան։ — 45. Ի՞նչ է դրամն։ — 46. Ի՞նչ են դրամնն ապահովաններն։ — 47. Դրամին արժէքն անփոփոխ է։ — 48. Թղթամին արժէքն ինքնահած կերպի կարծ որոշուիլ իշխանութեան կողմանէ։ — 49. Միակ հարստութիւն են ոսկին և արծաթին։ — 50. Ի՞նչ է միակ կամ կրկնակ դրութիւն դրամց լսուածն։ — 51. Պղնձադրամն ու թղթադրամն բուն դրամներ են։



ԴԱՍ Փ.

ՎԱՐԿ ԵՒ ԳՐԱՄԱՏՈՒՆՔ

(CRÉDIT ET BANQUES)

Տ2. Վարկն է այն կարողութիւնը զոր ունի ոք փոխատուներ գտնելու, կարողութիւն համեմատ այն վստահութեան զոր կ'ազդէ: Ճարտարութեան և առեալոյ մէջ իւր կարեւորութիւն և օգուտ խիստ մեծ են. կը բառնայ ժամանակ - արդելքն, կամ կը նուազեցնէ զայն: Կըսեն թէ վարկն շաւելցներ զքանակութիւն զբանագլխոց: — այս, այնպէս է այն վայրկենին ուր ի գործ կը դրուի, բայց դրամագլխոց արտադրական զօրութիւնն կը յաւելու և այսու հետեւարար նաեւ դրամագլխուներն. դրամագլխոց ընդլայնումն է: 1,250,000 ֆու. դրամագլխով գործի սկսող մի ٪ 10 շահելով պիտի վաստիկ 125,000 ֆու. եթէ մի ուրիշ մարդ 250,000 ֆու. ունենալով և 1,000,000 ٪ 5 տոկոսով փոխ առնելով շահի նոյնքան, իւր տոկոսն որ է 50,000 ֆու. պականցնելով պիտի շահի 75,000 ֆու. այսինքն իւր 250,000 ֆու. դրամագլխոն ٪ 50 շահ արտադրած կը լինի: Վարկն յարաբերութեան մէջ կը զնէ դրամատէրն որ շկարեկամ շկամի շահագործել իւր դրամագլխուն և արուեստաւորն կամ վաճառականն որք արտադրական կարողութիւններ ունին և դրամագլխոց կը կարօտին: Դրամատէրն ու արուեստաւորն կամ վաճառականն միմեանց հետ յարաբերութեան մէջ զնելու պաշտօն ունեցող հաստատութիւնը կը կոչուին ԳՐԱՄԱՏՈՒՆ (Banque) և այդ հաստատութեանց աեալը կը կոչուին ՍԵՂԱՆԱԼՈՐ (Banquier): Այս հաստատութիւնը մեծապէս կը ծառայի կիրացնելու տուրեալուի յարաբերութիւններն, ժամանակի մեծ խնայողութիւնն կը զործեն որ այնքան կարեւոր է, արտադրութիւնն կ'երազ են, մի կողմէ խնայողութիւններն կամ

դրամագլխութիւններն և միւս կողմէ կարողութիւններն առաւել արշիւնաբեր ընելու կը նպաստեն, մեծագումար դրամոց դժուազիւնաբեր ընելու կը նպաստեն ովհացնեանց ալիտքն կը բառնան և նոյն խակ մինչեւ մէկ աստիճան մետաղական դրամոց ալիտքն կը նուազեցնեն, և մարդէ առ մարդ, քաղաքէ առ քաղաք, երկրէ առ երկրի գործակցութեանց մըում և զիւրութիւն կ'ընձեռն:

Յ3. Դրամատանց մատուցած ծառայութիւններն կ'ամփոփուին հետեւեալ գործողութեանց մէջ:

Պ0. Երրորդաց գոնձագետներն են. նոյս հաշուոյն կ'ընդունին, կը վճարեն և սնտուկի հաշիւ կը բոնեն:

Չ0. Հաշուոց փոխանցումներ (virement, transfert) և վոխարինումներ (compensation) կ'ընեն:

Ց0. Փոխանակագրեր կը զեղչեն և փոխ կուտան:

Ֆ0. Դրամատիրոջ միջոց կը հայթայթեն շահաւելտ վետեղմանց և միջնորդ կը լինին ընդ դրամագլխուն և ընդ ճարտարութիւնն:

Ց0. Վաճառականատկան տանց յարաբերութիւններն կը կարգադրեն և նոյս մէջ միջնորդ կը լինին:

Ց0. Փոխ կ'առնուն՝ տամսեր (billet) հանելով ի չքջարերութիւն:

Այս գործողութիւններն կատարելու համար՝ այլ և այլ ներկայացուցիւններ կը դարձածուին, որք վարկի գործիներն են. սոքա են:

ԳՐԱՄԱՏԱՆ ՏՈՄՍԵՐ (billets de banque), որք է ուեւ և բերուն (à vue et au porteur) վճարելի են, զորս այն դրամատունք որք այսլիսի տամսեր հանելու ալտօնութիւնն ունին՝ կուտան դրամարէն իւրեանց զեղչած թուզթերուն, և որք իրեւ դրամ փոխարէն իւրեանց զեղչած թուզթերուն, այսինքն իրեւ ապահովագոյն նիւ դրամոց. կը չքջարերին, այսինքն իրեւ ապահովագոյն նիւ դրամոց:

ԱՐԺԵԹՈՒՂԹՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ (Effets du Commerce), որոց մէջ կը սրաբունակուին Հրամանէ տոմսեր (billet à ordre) որովք սառարարովն է և նուպանց վճարել այսնանին հրամանն նշանակեալ դումարն նշանակեալ թուականին, և ֆոխանականիրք (lettres

de change) որովք ստորագրողն էր հրամայեց այս ինչ անձին՝ որոյ վերայ էր +աշակ փոխանակագիրն՝ վճարել այս անուան այն ինչ գումարն .

ՊԱՐՏԱԹՈՒՂԹՔ (obligations) եւ **ԲԱԺՆԵՏՈՄՍՔ (actions)** առևտրական և արուեստական մեծ ընկերութեանց .

ԼՈՒՄԱՑԱԳԻՐՔ ԳԱՆՁՈՒ (bons du trésor) կամ այլ արժէթուղթք կառավարութեան .

ԶԵՔ, որ հրաման մ'է առ դրամատուն ինչ վճարելու ստորագրողին հրամանին այսինչ գումարն .

ԳՐԱՒԱԹՈՒՂԹՔ (lettres de gage), զորս կը հանեն անշարժ կալուածոց վարկի հաստատութիւնը .

ՎԱՐԱՆԴԻՐՔ ԲԵՐՈՅ (certificats de produit s), ԵՐԱՇԽԱԳԻՐՔ ՏՕՔԵՐՈՒ (warrants des docks), և այլ տանդի հաստատութեանց ընկալագիրք :

Յ4. Դրամատունք ՀԱՅԱՍՏԱՆ (banque privée) կը կոչուին երբ մասնաւորաց հիմնարկութիւն են և ընդհանրապէս ընկերակցութեան և առևտրոյ վերաբերեալ օրինաց ներքեւ կը գործեն . խոկ հասարակաց (հանգստագործութեան)՝ երբ կառավարութեանց կողմանէ կամ առաւել կամ նուազ նոյցա հակողութեան տակ հիմնուած են ու կը մատակարարուին և կը վայելեն առանձնաշնորհումներ : Երկու տեսակ դրամատունք իւրեանց կազմակերպութեան կամ գործողութեանց բնութեամբ չեն զանազանիր բը նաւ . բայց կը տարբերին այն առաւելութեամբք զորս մենավաճառն կը հայժայթէ առանձնաշնորհեալ դրամատանց , այն կանոնագրութեամբք որք արդիւնք են այդ մենավաճառին և որք ուղղակի կամ անուղղակի կերպով կ'աղջեն մասնաւոր դրամատանց վերայ . և քանզի համարակաց և առանձնաշնորհեալ դրամատունք իշխանութեան պաշտպանութիւնն կը վայելեն , քանզի ընդհանրապէս աւելի մեծ ընկերակցութեանց արդիւնք են և աւելի գործողութեան միջոց ունին , հետեւապէս՝ բացաւ սութիւնքներն են Սկսվածից և Միացածեալ հահանգաց հիւսիսային - արեւելեան նահանգներուն դրամատուններն :

Այն վարկի հաստատութիւնք , որք գրաւ դրուած անշարժ կալուածովլք երաշխաւորեալ փոխատուութիւններ կ'ընեն , Հաշմանածութիւններ կ'առնուն , ինչպէս Գաղլոյ զայն լորիի (crédit foncier) անունն կ'առնուն , ինչպէս Գաղլոյ մէջ 1852ին հիմնուածն , և նողուիոյ և Պելձիգայի և ուրիշ տեղութեան գեր գտնուածներն : Շարժուած լորիի (crédit mobilier) անունն կ'առնուն այն դրամատունք որք շարժուն արժէից վերայ փոխականուն , կ'ստորագրուին հասարակաց արժէթղթոց , կը բաժակուածն նորդակցին հանրային աշխատութեանց՝ ճարտարութեան եւ նորդակցին հանրային աշխատութեանց (sociétés վարկի ձեռնարկութեանց որք անուանն ընկերութեանց (aponymes) ձեւով կը կազմակերպուին , ինչպէս 1852ին ի Բարիկ հիմնուած « Շարժուած վարկի ընդհանրապէսն » : Առարտական և հարաբեկան լորիի (commercial et industriel) կը կոչուին և հարաբեկան լորիի (crédit commercial et industriel) կը կոչուին այն դրամատունք որք փոխ կուտան պարզ խոստմնագրի փոխարէն (տոմս , փոխանակագիր ելն) , և որք նպատակ ունին հաստատուն և բռնուած դրամագլուխներն փոխակերպել ի ըլրածուն և ազատ դրամագլուխս՝ զայն աշխատութեան համար արշարկին կը կոչուի համարութիւնը (privé) երբ փոխառուն մի մասնաւոր անհատ կամ ընկերութիւն է , և հաստատական (public) երբ փոխառուն տէրութիւնն է :

Աշխարհի ամէնէն երեւելի դրամատուններն են Անգղիոյ և Գաղլոյ դրամատունք . իւրեանց իմաստուն և զգոյշ ուղղութեամբ ամէնէն աւելի վստահելիներն են Սկսվածից և Միացածեալ հահանգաց հիւսիսային - արեւելեան նահանգներուն դրամատուններն :

Յ5. ՀՆՈՒԹԵԱՆ մէջ կային լումայափոխներ որք դրամափոխութիւնն կ'ընէին , փոխ կաւացին , աւանդ կ'ընդունէին , մուրհական ներու վերայ առևտրական գործողութիւններ կը կատարէին և հաշուոց ու վարկի փոխագլուխներ կ'ընէին : Սոքա Աթէնքի մէջ կը կոչուին τραπեզիա (տրապիզիոն) որ ըսել է սեղանաւոր :

ի Հոռվմ՝ argentarii : Հոռվմի մէջ, Քրիստոսէ 352 տարի յառաջ, հաստատուեցան mensarii (mensa, սեղան) կոչուած սեղանաւորներ որք տէրութեան կողմանէ և երաշխաւորութեամբ փոխ կուտային պատրիկեաններէ հալածուած սամիկ պարտապանաց : Միջին դարու խոալական քաղաքաց մէջ անցնիւր լումայափոխ իւր սեղանն (banco) տնէր հրապարակին վերայ . երբ վաստուէր և գործն աւրուէր , ի նշան սնանկութեան սեղանն կը կոտրէին (banco rotto) , և աստի յառաջացած են բանque և բանզեռն :

Միջին դարու մէջ կ'երեւի թէ սեղանաւորք նախ միայն լումայափոխութիւն կ'ընէին . յետոյ սկսան փոխ առնուլ և փոխ տալ , վճարումներ ընել և ընդունել թէ մօտն թէ հեռուն : Այս գործողութիւնք նախ դրամով կը կատարուէին , յետոյ նաև հըրամանի տոմսներ և փոխանակագրեր գործածութեան մտան եւ նոցա աւելի ընդլայնում տուին . այս վերջիններուն հետ մտաւ նաև զեղչն , և առեւտրական արժէթղթոց վերայ գործողութիւնք : Գործոց զարգացմամբ , աշխատութեան բաժանում եւ զար , և նախնի լումայափոխաց երկրորդական գործողութիւնք բուն սեղանաւորաց գլխաւոր պաշտօնն եղան :

Դաշնութ դրամատան հաւաքական մեծ ձեռնարկութեանց կամ ընկերակցութեանց , որքա , ըստ ժամանակագրական կարգի իւրեանց զարգացման , նախ եղած են Առանդի և փոխանցման բաշխուանուն (banques de dépôt et de virement) , յետոյ Զեղչի և շրջանէրուննեան բաշխուանուն (banques d'escompte et de circulation) . Հիմայ մեծ դրամատունք այս ամէն գործողութիւններն միան զամայն կը կատարեն : Ա. ձեւն սեւած է մինչ ի մերջ ժէ դարու . աւանդի և փոխանցմանն դրամատանց գլխաւորքն էին ի Վենետիկ , ի Ճենովա , յԱմուգերամ , ի Համապուրկ որոց վաճառականութեան ծաղկմանն մեծ նպաստովներ եղան : Այս գըրամատունք ծագում առին անտի զի միջին դարու վաճառաշահ քաղաքաց մէջ շատ տեսակ և զօրութեան ու ամբողջութեան այլ եայլ առտիճաններով դրամներէ կային ու առուտուրն կը խան գարէին . այն տառեւ հիմուեցան աւանդ արաններ ուր քաղաքաւ

պետութեան երաշխաւորութեան տակ կ'ընդունուէին որ եւ իցէ դրամներ մետաղական արժէքով և փոխարէն կը արուէր կամ տեղական լաւ դրամ և կամ աւանդի վկայագիր մի որ տունայ ենքու կը կոչուէր և որոշեալ արժէք ունէր , և որոյ միջոցաւ առեւտրական գործողութիւնք դիւրութիւն և կանոնաւորութիւն ստացան , այնպէս որ այդ արժէթղթերն աւելի կ'արժէին քան ընթացիկ դրամն : Այս դրամատանց միջոցաւ վճարումներն դիւրացան , որովհետեւ վաճառականն վճարում ընելու համար դիւրացան , որովհետեւ վաճառականն աւանդ արում ընելու համար պէտք չունէր դրամատան աւանդ արուած դրամն տեղափոխսէ կամ շրջանէ մի գումարն իւր տէրըն կը փոխէր դրամատան հաշուետումարաց մէջ : Հասարարն կութիւնն յետոյ սովորեցաւ առանց դրամոյ վկայագրոյ միջոցաւ գործողութիւններ ընել Դրամատունք հաշուոց փոխադրութեան աւանդից պահպանութեան և գրաւով փոխատուութեանց վերայ շահ մի կ'ստանային : Այսպէս վերոյիշեալ վկայագիրք Դրամատան գումարն նախնական ձեւն եղան : Խէպ ի 1668 Սդոքումի սանքան հնարեց պարտաթուղթեր , և աստի մինչեւ դրամատան տոմսներն այսինքն անմիջապէս վճարելի պանքնօթներն քայլ մի միայն մնաց , և որովհետեւ փորձն ցուցուց թէ այս վճարումն մինչեւ աստիճան մի կը պահանջուէր՝ ընկհուուզ համարձակեցան աւելի տոմս հանել ի շրջարերութիւն քան գանձուն մէջ գտնուած դրամն , մանաւանդ երբ , փոխանակ այդ տոմսներն ձոյլերու կամ դրամոց փոխարէն տալու , միսան տալ լոկ սոսուագրութեամբք ասպահովեալ փոխանակագրոց փոխարէն : Մինչեւ այս տաեն , այն է մինչեւ ցեղերջ ժէ դարու կամ ի միլորդն ժօլի , մեծ հաստատութիւնք զեղչի գործէր չըլին , այլ մասնաւոր հաստատութեանց թողին այդ առուտարն :

Տ6. Յայտնի է որ դրամատունք՝ իրերաց հետ յարաբերութիւններ ունին , մասնաւանդ այն վաճառականացպատճառաւ որոց գանձապետքն ու հաշուեկալքն են և որք միմեանց հետ գործանութիւններ ունին : Ինչ ինչ մեծ քաղաքներու մէջ սեղանաւորք կը միաբանին իւրեանց մէջ մաքրելու համար այդ փոխաւորձ հաշիւ

ներն : 1775ին 26 դրամատունք միանալով հիմնեցին Clearing-House մի , որոյ միջոցաւ ամէն երեկոյ իւրեանց գործակատարուներն ի միասին գալով՝ նախադահի մի տնօրինութեան ներքեւ փոխադարձ հաշիներն կը մաքրեն՝ շատ քիչ պէտք ունենալով դրամոյ : Պապէյճ , շատ տարիներ յառաջ , օրն 2 ½ միլիոն ըսուդէրլինի կը հանէր միջին գումարն այն հաշուոց զորս կը կարգադրէին ի ձեռն փոխարինութեանց և շրջանց , որոց համար միայն 25000 ոսկոյ պանքնօթ և 500 ոսկոյ դրամի պէտք կը լինէր գրեթէ : 1810ին ի Լոնտրա այս դրամատունք 40 էին , այժմ միայն 22 են , բայց շատ հզօր դրամատուններ : Անդզից այլ քաղաքաց և Միացեալ-Նահանգաց մէջ ալ կան Clearing-House ներ :

57. Խնդիր եղած է թէ դրամատունք՝ իրբեւ ապահովութիւն իւրեանց տոմսակաց՝ մինչեւ ո՞ր աստիճան ստակ ունենալու են գանձուն մէջ (encaisse) , և թէ պատրաստ դրամին քանի՞պատաիկն կարէ լինել շրջարերութեան մէջ եղած և ի տեսութերողին վճարելի տոմսակաց թիւն : Այս մասին ելմտադէտք որոց համեմատութիւն մի չեն կրցած հաստատել , բայց ընդհանրապէս կ'ընդունուի որ դրամատուն մի գէթ տոմսակաց թըւոյն ¼ ին չափ մետաղ դրամ ունենալու է գանձուն մէջ , ապա թէ ոչ կարելի է որ ստիպուի օր մի դադրեցնել իւր վճարուներն : Տոմսակաց արտահանութիւնն (émission) նուազեցնելու եղանակներն են զեղչն բարձրացնել , ստորագրութեանց մասին բազմապահանջ լինել , բայց մանաւանդ առաջինն : Դարձեալ խնդիր է թէ դրամատունք պէտք է որ աղատ լինին թէ օրինական սեղմումներու նեթարկուած . թէպէտ այս մասին շատեր տարակարծիք գտնուած են , բայց այժմ անտեսադիտաց եւ ելմուգիտաց մեծագոյն մասն համաձայն է թէ , որպէս ճարտարութեան այլ ճիւղերուն մէջ , և աստ օդտակար է աղատութիւնն , առանձնաշնորհութեանց և սեղմումնց բարձումն , որով մրցումն՝ գործելով աղատօրէն՝ յառաջ կարէ բերել և աստ լաւագոյն արդիւնքներ , և հասարակաց վատահութիւնն կը լինի

միակ և հշմարիտ հիմն դրամատանց , վատահութիւն զօր միացն զգուշաւոր՝ խոհեմ եւ անխարդախ ընթացքով կարելի է ձեռք բերել .

Հարցարան . — 52. Ի՞նչ է վարկն . ի՞նչ տեսակ հաստատութիւնը են դրամատունք : — 53. Ի՞նչ ծառայութիւններ կը մատուցանեն դրամատունք , եւ ի՞նչ են վարկի գործիններն : — 54. Դրամատանց և վարկի տեսակներն քանի՞ են : — 55. Դրամատանց գարգացման վերայ ի՞նչ պատմական ծանօթութիւննենին : — 56. Ի՞նչ է clearing-house : — 57. Դրամատանց տամսակներուն և աղատութեան մասին ի՞նչ խնդիրներ կան :

Դ Ա Ս Փ Ա.

ՇՐՋԱՆՔ ՎԱՐՄԻ (CYCLES DE CRÉDIT*)

60. Առեւտուրն պարբերական եղանակաւ մերժ մկում և բուսն գործանէնեթիւն կ'ստանայ , մերթ կը թուշնայ և կ'անկանի : Եղանակներէն ոմանք աւելի նպաստաւոր են ձարտարութեան և ոմանք ոչ այնքան . զրօրինակ՝ վարսան և ամրան մէջ գործերն աւելի եռանդուն են , խակ ձմրան մէջ տկար կ'երթան յունվար , փետրվար , մարտ , յունիս , յուլիս , օգոստոս և սեպտեմբեր ամսոց մէջ դիւրին է ստակ գտնել . հոկտեմբեր և նոյեմբեր մասնաւորապէս գէշ են . այս ամսոց մէջ տոկոսի սակն կը բարձրանայ , սանակութիւնք կը լինին աւելի յաճախ . ապրիլ և մայիս եւս վտանգաւոր են՝ բայց նուազ աստիճանաւ : Բայց այս տարեկան վորքը շրջանէն զատ աւելի լայն շրջան մի , գըրեթէ տասնամեայ շրջան մի , կը կատարէ նաև առեւտուրն :

* Այս գլուխն ձիվնս Աթանալէյի համառօտ Տնտեսագիտութեան մէկ զիմանց յատուկ հետեւաղաւթեամբ գրուած է :

Պատճառն այնքան բացորոշէ, սակայն սա յայտնի է թէ ինչ լինչ տարիներու մէջ մարդիկ աւելի վստահ և յուսալից կ'երեւին և համակրութեան օրինօք այս վստահութիւն կը տարածուի : Ճարտարք նոր ծրագրեր, նոր ձեռնարկներ կ'առաջարկեն, դրամատեարք փութով կ'սառագրուին . այսու այլ շահագէտք կը քաջալերուին, և երբ ինչ ինչ ընկերութեանց բաժնետոմսերն բարձրանան՝ կը կարծուի թէ ամէնուն համար նոյնն պիտի լինի, և ամէնէն այլանդակ յատակագծերն պաշտպաններ կը գտնեն, և այսէս կը համումը մի առևտորուին ունդիք (fièvre commerciale) :

61. Որովհետև ազգի ազգի ծրագրեր յառաջ բերուած ու դրամագլուխ գտած են, նոցա գործադրութեան համար կարեւոր նիւթոց արժէքն կը բարձրանայ, գործաւորի խնդրանքն կ'աւելնայ, հետեւապէս և նորա թոշակն . վստակն շատ նալով՝ սպառումն ու ծախքերն ալ կը շատնան ամէն կարգի օգտակարութեանց համար որոց խնդրանքն ևս կ'աւելնայ. վաճառականք կ'սկսին մեծ գործեր ընել, և նոյն խոկ այն աստիճան չփնտուած իրք անդամ համակրութեմք իմն կը սուզնան : Ռւսոյի և վաճառականք վաճառաց մեծ պաշար (stock) կը կազմեն եւ միշտ գնել կ'ուզեն յուսալով թէ գիներն հետզհետէ պիտի բարձրանան և թէ մեծամեծու պիտի շահնի : Սակայն իրաց այս վիճակն շատ չկարէ տեսել, նոր ընկերութեանց մէջ բաժններ ստորագրուողներն պէտք է որ վճարեն . այսու ազագաւ դրամատանց մէջ իւրեանց չ պահեստ դրամն կը քաշեն հետ զիետէ, և փոխ տրուելիք ստակն կը քիշնայ, հետեւապէս սակն կը բարձրանայ, և շատք իւրեանց իրական դրամագլուխոյն մի քանի պատիկն փոխ առած կը գտնուին, որոց համար պէտք է հետզհետէ ծանր տոկոսներ վճարէլ : Բաց աստի, փոխստուք կ'սկսին տակաւ ետ քաշել իւրեանց դրամն, և առ այս շահագէտք կ'ստիպուին իւրեանց վաճառաց պաշարն ծախել սկսիլ կարելի եղածին չափ լաւ գնով : Անմիջապէս որ ունանք կ'սկսին ծախել, այլք ևս կը փութան իւրեանց ունեցածն ձեռքէ հանել . հա-

սարակութիւնն կը տագնասիք և միայն շատ աժան գնել յանձն կ'առնու : Այս միջոցին յոռի շահագէտք, վեստուց առջեւ, կը գաղրեցնեն իւրեանց վճարումներն, անմիաննեւ կը հրատարակեն : Մի սնանկութիւն ունի իւր հակահարուածներն ու աղջեցութիւններ, և սնանկութիւնք իրերաց կը յաջորդեն, և վաճառական, արուեստապետ, դրամատէր, ամէնքն կը կորսնցնեն, կը վնասին . չկայ համեստագոյն խանութպան մի որ այս տագնասիքն մէջ իւր վնասու բաժինն չունենայ : Այս խոկ է առևտորուական պատճառ (crise commerciale) :

62. Յանկարծ ամէն ինչ կը փոխուի . գնոց, վարկի, ձեռնարկութեանց յեղակարծ անկում կը լինի . այլ եւս ոչ ոք կը համարձակի նոր ծրագրեր, նոր ընկերութեանց կազմութիւն առաջարկել : Բազում ձեռնարկութեանց ունայնութիւնն ու դատարկութիւնն յերեւան կուգան . նոցա մէջ գրուած դրամագլուխն կը կորսուի անդարձ : Այն ատեն ոչ միայն բաժիններ ստորագրողք կը լինանեն, այլ և բազմաթիւ գործաւորք կը մընան անդործ, աշխատութեան խնդրանքն կը պակսի, թոշակներն կ'իյնան . զի թէպէտ լաւագոյն ձեռնարկութիւնք կը շորունակեն, բայց նոցա համար հարկ եղած նախնական աշխատութիւնք կ'աւարտին : Կորուսք, սնանկութիւնք և յայտնեալ խարդախութիւնք ընդհանուր ան և անվստահութիւն կը տարածեն : Գործի և վաստակի պակասութիւնն յառաջ կը քերէ սպասութիւնն, չուառութիւնն : Այս է տայտայութեալ (débâcle), անկուժն (chute) :

Երկու կամ երեք տարի յետոյ, ուր կը տեէ խեղճութիւնն, մի կողմանէ շահագէտք մոռնալով իւրեանց կորուստներն, միւս կողմանէ նոր սերունդ մի նոր յոյսերով յասպարէզ գալով եւ դրամատանց մէջ ալ ի պահեստ դրուած դրամագլուխք զիզուելով ու տոկոսի սակն վար լինելով, վարկն կը լաւանայ, ճարտարութիւնն կ'սկսի արծարծիլ, առեստուն ոգեւորիլ վերըսափառութիւնն : Այս է շլքան (cycle) որ ըստ ամենայն հա-

Հանձնականութեան միևնոյն երեսոյթներուն ծնունդ տալով պիտի բոլըքի :

61. Անկարելի է անշուշտ ճշդիւ գուշակել առեւտրական տենդի կամ տագնապի մի որոշ ժամանակն . պատերազմունք , յեղափոխութիւնք , նոր գիւտք , առեւտրական դաշնադրութիւնք , լաւ կամ յոռի հունձք կարեն զալ արագել կամ յամբացնել առեւտրոյ ընթացքն . բայց վարմանալի է դիմել թէ քանից գրեթէ 10 տարի յետոյ քան վառաջինն տեղի ունեցած է առեւտրական տագնապն : Առեւտրական տագնապ տեղի ունեցած է ԺԲ : Դարս մէջ հետեւեալ թուականներուն .

1753, 1763, 1772 *lxxv* 73, 1783, 1793

ՃՐ ԴԱՐՈՒՆ մէջ՝

1815, 1825, 1836-59, 1847, 1857, 1866, և եթէ Ամերիկայի 1873ի բացառիկ գժուարին կացութիւնն զինէր՝ անշուշտ մի այլ տագնապ պիտի տեղի ունենար 1876ին կամ 77ին. 1878ի մեծ տագնապն ըրջանին աւարտում և յաջորդին բացումն կը նշանակէր :

Յեւրոպա լաւ այգեկութք և ի Հնդիկս չորութիւնք ամէն
10 կամ Ա տարին մի անգամ տեղի կ'ունենան : Հաւանական կը
թուի թէ առեւտրական տագնապներն կապակցութիւն մի ունին
երկրագնաոյն վերայ ընդհանուր օդոյ պարբերական փոխութու-
թեան մի հետ , որ անշուշտ յառաջ կուգայ ամէն 10 կամ Ա
տարին անգամ մի արեւէն ընդունուած ջերմութեան ալեաց ա-
ռաւելութեան : Այս առաւելութեամբ հունձքն լաւ ու առատ
կը լինի , զբամագլուխն կը շատնայ , առեւտուրն կը լինի շահա-
րեր , և այսպէս կ'ստեղծուին յոյսեր յորոց կը գոյանայ տենդն .
երբ ջերմութիւնն կը նուազի , հունձքերն կը գէշնան եւ շատ
ձեռնարկութիւնք կը խախտին , և յայնժամ կարելի է նախատե-
սել զիերչ տենդին և զսկիցքն տագնապոյ :

Աւրեմն ընդհանրապէս մի վարկի լրջան , ինչպէս Մանչէստ գլըցք ձօն Միլլ ցուցած է , կը տեւէ 10 ասրի . այս 10 ասրիներուն առաջին ճին մէջ վաճառականութիւնն անկած է ,

պաշտօն չկայ, զիներն անհստատ են, չահերն տկար, աղքատոթիւնն մեծ, հետեւալ զ ասրիներուն մէջ առեւտուրն կը լինի գործօն և հաստատ, հետզետէ բարձրացող գներով և լաւացող վարկով. յետոյ մի քանի տարի ծայրայեղ դործունէութիւն մի յառաջ կուզայ առեւտրաց մէջ որ ի վերջոց կը դառնայ ի յիմարութիւն՝ ի տենի և կ'աւարտի քայլայմամբ, անկիստի որ տանհամեաց լիֆանին վերջին տարին կը նշանակէ:

Այս այլ եւ այլ երեսով ներս. յաջորդութիւնն հետեւեա
պատկերին մէջ կը տեսնուի .

Տ Ա Ր Ի Ք									
1	2	3	4	5	6	7	8	9	10
Առեւտուր բայլ	Առեւտուր գործօն	Առեւտուր գրգռեալ	Տեսդ	Անկումն					

Պէտք չէ ենթաղրել թէ միշտ ծցղիւ 10 տարւոյ մէջ կը բոլորի այս շրջան . երբեմն օ կամ 8 տարի կը տեւէ , և ընթացքին մէջ կուգան նաև նուազ ծանր տաղնապք կամ տենդք որք շրջանին կանոնաւորութիւնն կը խանգարեն . սակայն զարումանալի է տեսնել թէ ինչ յաճախութեամբ յետ տենդին կուգայ մեծ քայլայումն ի վերջ շրջանին , հակառակ պատերազմի կամ խաղաղութեան և այլ պատճառաց :

նարկներու և գործոց մէջ որք չեն կարող վերակազմել բու-
սպառեալ գրամագլուխն :

ՅՅ. Այս տենդք և տաղնապք շատ աղետալից են . շատերու
կործանման պատճառ կը լինին , և քիչ բնտանիք կը մնան ան-
վիսու . ամէնէն գէն գործաւորաց վիճակն է , որք կը մլուխն
գործագուլեր ընել որք յետ մի տաղնապի երբեք չեն յաջողիք :
Ուստի պէտք է զգուշանալ գիտնալ և առ այս առաջին գիտնալիք
բանն այս է թէ շատ յաջող առեւտաւրին ետեւէն պիտի գայ գըժ-
ուարին ժամանակ մի : Հետեւաբար շատ խոհեմ և զգոյշ պէտք
է լինել և մանաւանդ տենդին ժամանակ յանդուգն չինել եւ
առանց ընտրողութեան չմասնակցի որ և է ձեռնարկի : Մանա-
ւանդ պէտք չէ ընել բան մի որովհետեւ ամէնիքն զայդ կ'ընեն .
քանդի ճիշդ այդ բանն պատճառ կը լինի իրին անյաջողութեան :
Գործի մարդիկ համարձակ պարտին լինել առեւտրոյ անկած մի-
ջոցին , որ ատեն քիչ ծախքով կարելի է հիմնարկութեան մի
վերաբերեալ նախնական աշխատութիւններն կատարել , երբ
թոշակ ու տոկոս վար են և նիւթք՝ աժան . իսկ առեւտրոյ գըր-
թուեալ միջոցին պարտին խոհեմ լինել ու չվտանգել իւրեանց
գրամագլուխն , այսինքն ընդհանրապէս գործուածին ճիշդ հակա-
ռակն ընել : Այս շրջանաց ծանօթութիւնն միայն կարող է խա-
փանել նոցա վերադարձն և կրկնումն այն աղիտարեր տաղնապոց :

Հարցարան : — 60. Առեւտուրն պարբերական է ըսելով ի՞նչ
կ'իմանամք . ի՞նչպէս կ'սկսի վարկի շըջանն : — 61. Ի՞նչ է ա-
ռեւտրական տենդն և ի՞նչպէս կը հասնի տաղնապն : — 62. Ա-
ռեւտրական տաղնապն ի՞նչ փոփոխութիւններ կը բերէ գործոց
մէջ : 63. Վարկի շըջանն տեւողութիւնն կարելի է ձցիւ որո-
շել . ի՞նչ են պատճառք . ի՞նչ երեւոյթներէ կը կազմուի այդ
շըջան : — Ի՞նչպէս կարելի է զգուշանալ :

→→→→→

ՄԱՍՆ Բ.

ԲԱԾԽՈՒՄՆ ՀԱՐՍՑՈՒԹԵԱՆ

ԴԱՍ Բ.Բ.

Թի Խնազկս ԿԸ ԹԱՇԽՈՒ ՀԱՐՍՑՈՒԹԵԱՆ

64. Որպէս տեսանք , արտաղութեան գործիներն երեք
են . Երկիր , Աշխատութիւն և Դրամագլուխն : Արդ երբ այս ե-
րեք արտադրիներուն գործակցութեամբ հարստութիւնն յառաջ
կուցայ , այդ արդիւնք անըռւշտ պէտք է որ բաժնուի երեք
արդիւնարարաց մէջ : Եթէ երեքին գործիք մատակարարուէին
մի անձէ , այն ատեն ամբողջ արտադրութիւնն նմա պիտի վե-
րաբերէր անբաժանարար , ինչպէս երբ մի հողագործ ինք մի-
այն իւր դրամագլխով աշխատի իւր իսկ հողայն վերայ . բայց
ընդհանրապէս այդպէս չինիր , դրամագլուխն ունեցողն իւր գը-
րամագլուխն փոխ կուտայ մի ձեռնարկուի որ կը վարձէ մի հո-
ղատիրոջ գետինն ու վարձով կ'աշխատցնէ գործաւորներ : Այն
ատեն արդիւնքն կամ , որ նոյն է , արդեանց արժէքն կը բաժ-
նուի գործակցաց մէջ : Յաճախ ձեռնարկուն իւր գրամագլուչն
կը վճարէ կանխաւ հողայ և գործաւորաց բաժինն , բայց յետոյ
արտադրութեան արժէքին մէջ կը գտնէ իւր բոլոր կանխավը-

Ճարսերն : Այս բառը օգտագործվում է ի ամենա հաճախ և առաջ գլուխաբարութեր ,
այլ բնիւակաց և բնակչական օրբենիներուն :

65. Այս բաժիններն իւրեանց առանձին անուններն ունին : Աշխատութեան բաժինն կը կոչուի ընդհանուր առմամբ ՎԱՐՁՔ (rétribution) , որ իւր մէջ կը պարունակէ 1⁰ իւր աշխատութիւնն վարձող աշխատաւորին բաժինն որ յատուկ անուամբ կ'անուանի ՇՈՂԱԿ (salaire) , 2⁰ Զեռնարկուին աշխատութեան բաժինն որ գարձեալ իրեւ գին աշխատութեան՝ տեսակ մի թոշակ է , և 3⁰ կառավարութեան բաժինն որ կ'անուանի որոշք (impôt) և որ իրագ վարձք մ'է մի տեսակ առանձին աշխատութեան՝ ծառայութեան : Գիտնոյն , արուեստագիտինն եղած վճարումներն ալ թոշակներ են : Երկրի բաժինն կը կոչուի ԵԿԱՄՈՒՏ (rente) , որ հաղաքաց (fermage) անունն կ'առնու երբ բուն մշակելի հողը եւ կամուտն է : Դրամագլուխոյն բաժինն կը կոչուի ՎԱՐՁԱԳԻՆ (loyer) երբ գրամագլուխն հաստատուն է , իսկ երբ շղուն , մանաւանդ դրամ՝ ՏՈԿՈՍ (intérêt) : Այսպէս ուրեմն

Արդյանքը ուղղակի է և պահանջվում է:

66. Բայց այս բաժինք գրեթե երրեք զուտ չեն . թոշակին մէջ տոկոս կայ , վասն զի յետին զործաւորն իսկ իւր հետ քիչ կամ շատ արժողութեամբ գործիք մունի . ատաղձագործն մէկ քանի հարիւր ֆրանքի գործիք ունի . դաշնակագործի մը գործիներն մինչեւ 1720 ֆրանք կարեն արժել . արդ աշխատաւորին վճարեալ թոշակին մէջ կայ միշտ իւր գործեաց՝ այն է իւր գրամագլուխն բաժինն որ վարձագին (լույց) մի է , և երբ այդ գումարն իջեցնեմք՝ մնացածն է զուա թոշակին : Դարձեալ եկամուռն այն է զոր կը վճարեմք բնական գործիք մի գործածման համար . բայց քիչ անդամ այս գործիչն զուտ ինքն է . յաճախ գրամագլուխն իւրեան հետ միացած է . հողոյ վերայ բարւոք մունք և շինութիւնք եղած են և առ այս գրամագլուխ վատանուած . ուրեմն երբ այդ հողոյ համար կը վճարեմք՝ եկամուռն տոկոս միանգամայն կը վճարեմք : Նոյնպէս , երբ տան մի համար գրամագին կը վճարեմք , այս վճարեին մէջ կայ տան շի-

Նութեան համար սպառեալ գրամագլխոյն տոկոսն և հողոյ եւ կամոււան : Բաց աստի , թոշակ և տոկոս միացեալ են երբ , որ պէս յաճախ , գրամատէրն է միանգամայն գործատէր , վասն զի բաց իւր գործոյն մէջ գրած գրամագլխոյն տոկոսն իրաւոնք ունի իւր գործէն ստանալու նաև վարձը իւր տեսչութեան , իւր աշխատութեան համար : Երբ գրամատէր-գործատէրն իւր արտադրութիւնքն ծախելով՝ նոցա արժէքով կը վճարէ ամէն արդիւնարար ծառայութիւն որ գործակցած էր իւրեան , մնացածն կը կոչուի նորա շան (profit) : Պէտք է դիտել թէ սորա մէջ ալ ո՞չ միայն իւր վերատեսչութեան վարձն ու գրամագլխոյն տոկոսն կայ , այլ նաև վտանգաց դէմ ապահովագին մի (prime d'assurance) , որովհետեւ կարելի է որ գործն մնամէ և գրամագլուխն վտանգուի . ուստի և

$\tilde{U}_{\text{soft}} = U_{\text{soft}} + \frac{\partial}{\partial t} \left[\tilde{U}_{\text{soft}} - U_{\text{soft}} \right] + \dots + \frac{\partial}{\partial t} \left[\tilde{U}_{\text{soft}} - U_{\text{soft}} \right]^2 + \dots$

67. Տոկոսն գումարին և ժամանակին համեմատոթեամբ
է. դրամագլուխն ո՞չափ մեծագումար լինի և ո՞չափ երկար
ատեն սպասէ, այնքան աւելի է տոկոսն: Երբ տոկոսին սակն
է կամ 8% անցնի, այլ ևս բռն տոկոս չէ այն, այլ մասսամբ
փոխարինութիւն մի դրամագլուխոյ կորստեան հաւանականու-
թեանց համար: Տոկոսին բռն սակն կարէ իմացուիլ այն տոկո-
սէն որ կը վճարուի հաստատուն գրաւող կամ երաշխատորու-
թեամբք՝ սպահով անձանց փոխ արուած գումարին համար,
այնպէս որ դրամագլուխն վերստացման վերայ բնաւ որ և է
տարակոյս շինի: Այս սակն միջին հաշուով տարին 4% է այժմ.
բայց կը փոխուի ըստ ազգաց. աւելի վար է յԱնդզիա և ի Հո-
լանտա քան այլուր. Միացեալ-Նահանգաց մէջ և կամ 7% է,
իսկ Տաճկաստանի մէջ գրեթէ 42%: Տոկոսին համար սա դի-
տելի է թէ մէկ դորձեն և մեռն նոյն կը մնայ: Թէ և շահերն կը փոխ-
ուին շատ, բայց սա առ այն զի վերտեսուչեթեան աշխատո-
թիւնն առարեր է կամ զի վտանգներն աւելի մեծ կամ փոքր
են այս ինչ տուեարց մէջ քան յայլում. իսկ բռն տոկոսն նոյն
է, վասն զի ամէն դրամագլուխն կարէ որ և է գործի փոխ արբ-

ուիլ . ուրեմն ճարտարակելեան ամէն ճիշդը բոկոսէ հաստատը բուղէնեան հշտափև յիշուամ կայ :

Հարցարան : — 64. Արտադրեալ հարստութիւնն ո՞ւմ կը վերաբերի : — 65. Այդ բաժիններն ինչ կը կոչուին : — 66. Այդ բաժինը զուտ են : — 67. Տոկոսն ինչ բանի համեմատութեամբ է , և գործէ ի գործ փոխիսական է թէ ոչ :

Դ Ա Ս Ժ Գ .

Թ Ա Յ Ա Կ Ի (SALAIRES)

68. Թոշակն , ինչպէս տեսանք , աշխատաւորին բաժինն է արտադրեալ հարստութենէն կամ այդ բաժնին փոխարէն իրեւ արժէք վճարեալ գումարն : Թոշակն , թէ՛ օր առ օր , թէ՛ շաբաթէ շաբաթ , թէ՛ ամսէ ամիս , կամ թէ ամէն ջ կամ Յ ամիսն կամ աարին միանդամ վճարուի , միշտ թոշակ է՝ բաւ է որ աշխատութեան գինն լինի . ուստի և սլարդ գործաւորին , գործակալաց , քարտուղարաց , տեսչաց , պաշտօնատարաց ստացած փոխարինութիւնը ամէնքն ալ թոշակ են , թէ և գործաւորք ամէն երեկոյ կամ ամէն շաբթու վերջ կը վճարուին , միւսներն ամէն ամիսն , կամ եռամիսն անդամ մի կամ աւելի ուշ : Պէտք է զանազանել բրածական կամ երեւասնական նոշակն (salaire en argent ou apparent) և երական նոշակն (salaire réel) : Աշխատաւորին համար էական կէտն է իւր թոշակով ձեռք բերել իւր կենաց պիտոյքն . արդ թոշակն բարձր է ոչ այն ատեն երբ գումարն անուանաբար բարձր է , այլ երբ աւելի օգտակարութիւն կարէ գնել . այսպէս շատ անդամ անուանաբար բարձր թոշակներ իւրք վար թոշակներ են երբ ամէն իրաց գինն բարձր է . բայց

երբ առատութիւն և աժանութիւն կայ , այն ատեն երեւութապէս փոքր թոշակներ մեծ են վասն զի աւելի մեծ գնման զօրութիւն ունին : Ուստի ձմարիտ է թէ ընդհանրապէս ժողովրդեան համար նոշակաց իրական անուամ մի իրերն աժան արդարութելով կարէ միայն յետք բերուիլ :

69. Յայտնի է թէ այլ և այլ գործոց և գործողաց համեմատ թոշակներն կը զանազանին . կան մարդիկ որ իւրեանց աշխատութեան փոխարէն 100 կամ 1000 անգամ աւելի կ'ընդունին մի ուրիշի ընդունածէն : Այս տարբերութիւն յառաջ կուրգայ ֆիզիքական և մտաւորական կարուղութեանց և կրթութեանց ու գիտութեանց տարբերութենէն , յորմէ յառաջ կուրգայ մարդոց օգտակարութեան եւ ծառայութեան ընդունակութեան տարբերութիւնն : Դժուարին և մեծ կարողութիւններ պահանջող գործոց յարմար մարդիկ քիչ են , իսկ դիւրին ու սովորական գործոց համար՝ շատ . այս վերջնոց համար բաւական է յաճախ միայն մարդ և առողջ մարդ լինել , մինչդեռ առաջնոց համար հարկաւոր են տաղանդք , ծիրք , փորձառութիւն ևլն : Արդ , որպէս վաճառաց գնոյն վերայ , նոյնպէս և թոշակաց սակին կամ աշխատութեան զնոյն վերայ կ'իշմէ Մատուցման և Խնդրանքի օրէնքն , ըստ որում աշխատութիւնն որքան առատ մատուցուի՝ այնքան աւելի աժան է , որքան շատ խնդրուի այնքան աւելի սուլ , և հակադարձաբար :

70. Ատամ Ամիթ օ գլխաւոր պարագայ կը նշանակէ որք կազդեն ի վերայ տարբերութեան թոշակաց , անշուշտ անոր համար որ կ'ազդեն ի վերայ Մատուցման և Խնդրանքի օրինաց :

70. Պաշտոնան հաճոյականութիւնն . — Այսինքն թէ պաշտօն մի որչափ աւելի ըստ ինքեան հաճոյ է և պաշտօնէին անձնասիրութիւնն կը գտուէ , սյնքան աւելի մարդիկ յինքն կը ձգէ , և հետեւապէս թոշակներն կը նուազեցնէ . այսպէս յԱնդզիա բանակի և ծովային զօրաց սովորաց շատ չեն վճարուիր , վասն զի

պատիւ և աղլեցութիւն այդ պաշտամանց կցորդ առաւելու թիւններ են . ընդհակառակն լաւ մսավաճառ մի շատ ստակ կարէ շահի՝ քանզի գործն սիրելի բան մի չէ և անգութ կը նը-կատուի . իսկ դահիճի մի թոշակն շատ բարձր է յաճախ՝ մանաւանդ ի քաղաքակրթեալ երկիրս :

20. Պաշտամ գի ուստանելոյ բիւրունիւնն ու ծափն . — Երբ երկար ուսում՝ հետեւապէս ծախք՝ գրամագլուխ հարկաւոր է մի ասապարիզի պատրաստուելու համար , այդ ասպարիզի մարդիկ շատ կը շահին , զրորինակ մեծ լաստառք , վաստաբանք , երկար շափք , ճարտարապետք , բժիշկը ելն . վան զի աղքատք անկարուուն հետեւիլ այդպիսի ուսմանց , և քիչերն են որք կարող են դիմանալ կարեւոր ծախուց , հետեւապէս և սակաւք կը յաջորին , որով այդպիսի աշխատութիւններն մատուցանողք սակաւ կը լին և թոշակք՝ բարձր :

30 Պաշտամնին պէտականունիւնն . — Կառավարական պաշտօններու մէջ մարդիկ տրամադիր են սովորաբար համեմատաբար տկար թոշակով մի շատանալ , վասն զի վստահ են թէ ցորչափ մեծ յանցանք մի չգործեն՝ չպիսի արձակուին . բայց ատաղձագործ մի , որմանդիր մի յաճախ կ'արձակուին . երբեմն օդոյ գէւշութեան պատճառաւ անդործ մնալ կ'սակառուին , և հետեւապէս միջին հաշուով գոհացուցիչ թոշակ մի ունենալու համար աշխատութեան միջոցին պէտք է որ աւելի վճարուին :

40 Վարունունիւնն ի պաշտամեայ . — Կան պաշտօններ որոց մէջ ամէնէն մեծ կարողութեան տէր անձնոք չեն կարող ընդունուիլ եթէ ուղղութեան և լաւաբարոյութեան համբաւ չունին , զրորինակ գրամատանց մէջ , ակնավաճառաց քով , և ընդհանրապէս այնպիսի գործոց մէջ ուր մեծ շահեր կը յանձնուին գործակալին կամ պաշտօնէին ձեռքն : Այս պարագայն յարմար անձանց մատուցման վերայ կ'ազդէ մեծապէս :

50 Յաջորունիւնն անուստուգունիւնն . — Սա ևս յոյժ կ'ազդէ ի վերայ թոշակք . կան արուեստները ուր յաջորդութիւնն դժուա-

րին ու տարակումելի չէ . կան այլք յորս ոչ ամենեքին կը յաջորդին , նոյն իսկ յետ ուսանելոյ , երբ մասնաւոր յաջողակութիւն ու ձիքը կը պակախին . այն ատեն անշուշտ յաջողողք մեծ շահեր կը շահին որովհետեւ իւրեանց ծառայութեան մատուցումն մեծ չէ : Սա ևս պէտք է դիտել թէ ուրիշ առպարէզգներու մէջ վրանասուղղ կամ անգործ մնացողք չեն կարող մանել այսպիսի գործերու մէջ , ուր յաջողութիւնն դժուար և տարակուսական է , այլ կ'երթան աշխատութեան մատուցումն յաւելու դիւրագոյն պաշտօններու մէջ :

Հարցարան . — 68. Թոշակն ինչ է և քանի՞ է : — 69. Թուշակաց զանազանութեան պատճառն ինչ է . ինչ օրինաց ենթակայ է այդ զանազանութիւնն : — 70. Ատամ Սմիթ քանի՞ գլուխաւոր պարագայ կը նշանակէ իրրեւ աղլեցութիւն ունեցող թոշակաց զանազանութեան վերայ . ո՞ր են :



Դ Ա Ս Փ Դ.

ԱՌԵՒՏՈՒՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

(C O M M E R C E D U T R A V A I L)

71. Ըստեցաւ որ աշխատութիւնն մի վաճառք է և իրը այն Մատուցման և Խնդրանքի օրինաց ենթակայ և իւր գինն կ'ուրոշուի ծախողին և գնուզին ազատ հաճութեամբն : Ընդունելով հանդերձ աշխատութեան օրինական ազատութիւնն , մի խճագիր կը մնայ սակայն . — այն է թէ գործաւորն (հոս անշուշտ խնդիրն արուեստագիտաց և ընդհանրապէս հազուագիւտ աշխատարաց համար չէ , այլ սովորական և մանաւանդ մէծ գործարանաց մէջ աշխատող գործաւորաց համար .) բաւական

կարողութիւն ունի՝ ընդդիմութեան որպէս զի իւր ու գործատիրոջ մէջտեղ այս առեւտուրն արդար եղանակաւ կատարուի , թէ գործաւորն ստիպուած չէ կամայ ակամայ ընդունիլ գործատիրոջ պայմաններն՝ զի ինքն անմիջական պէտք ունի սնանելու և սնուցանելու իրեններն չունելով այլ ինչքան զիւր աշխատութիւն , մինչդեռ գործատէրն՝ որ դրամագլուխ տէր մարդ է՝ կարող է սպասել , զիմանալ մինչեւ որ իւր պայմաններն ընդունուին , եւ այսպէս գործաւորին հաճութիւնն բռնի չէ , և հետեւապէս տընտեսագիտական օրինաց հակառակ կերպով չըուծուիր յաճախ դրամագլուխն ու աշխատութեան յարաբերութեան խնդիրն : —

Հսաւ այսմ գործաւորք իսկ կը հակառակին ընդունիլ աշխատութիւնն իրեւ վաճառք՝ ըսելով թէ թոշակն պայմանադրութիւն մի չէ երկուց կողմանց աղաս հաճութեամբն որոշուած , թէ ազատութիւնն հաւասար չէ երկուց կողմանց համար , թէ աշխատութեան վաճառքն չկարէ դիմուիլ , ևս : — Ստոյգ է . իրաց արդի վիճակին մէջ բազում ուրեմ աշխատաւորն կը կորուսանէ և թոշակն չսահմանուիր միշտ ըստ բնական օրինաց . բայց այս չարգելուր որ աշխատութիւն լինի մի վաճառք : Այսպէս նկատեն է գործաւորին շահն . չդիմուիլն ալ մի պատճառ չէ . կան այլ վաճառք ևս որ չկարեն դիմուիլ (թարմ հաւկիթ , ելակ , ևս) . միայն այս առուտուր կազմակերպեալ չէ տակաւին ամենուրեք , և աշխատութիւնն ընդհանրապէս կը վաճառի մանր մասամբք (en détail) . գործաւորք ամենուրեք չեն ըմբռնած իւրեանց շահուց համերաշխութիւնն և չեն միաբանած պաշտպանելու համար զայնս : Սակայն ժամանակէ մ'ի վեր , մանաւանդ Անդզից մէջ , կազմուած են Գործաւորաց – ընկերութիւններ (trades-unions) որք մեծապէս նսրաստած են գործաւորաց կացութեան բարեւոքմանն :

72. Այս ընկերութիւնք աշխատութեան առեւտուրն կազմակերպելու օգտակարագոյն միջոցն են : Նպատակն է համերաշխութեան սկզբան կիրառութիւնն . բաժիններու վճարմամբ ընկերական Պարկը մի ունենալ՝ այնու օքնելու համար հիւանդ

գործաւորին , գործեաց կորուսան դարմանելու , անդործութեան և պատահարաց ատեն նպաստելու և ալքատ մեռած ատեն թաղման ծախքերն ընելու համար . գումարուիլ և ի միամին խորհրդակցիլ իւրեանց շահուց վերայ . առաջարկներ ներկայել գործատեարց և որոց անկնէ , և ի հարկին գործադուլեր (grèves) ընել՝ որոց կը ծառայէ նաև ընկերական արկղն : Այս ընկերութիւնք մեծ գուարութիւններով հաստատուած են յինդպիս . իրեւ գաւաճանութիւններ նկատուած և օրինաց խստութիւնն հրաւիրած են իւրեանց վերայ . միայն 1868էն ի վեր է որ գործաւորաց ընկերութիւններուն օրինական գոյութիւնն ձանցուած է : Յարդ այս ընկերութիւնք թշնամիներ ունին , քանի անշուշտ բազմաց՝ այն է գործատեարց շահուն կը վնասեն : Թշնամիք կըսեն թէ Աւելի գործադուլեր սնուցանելու կը ծառայեն , թէ գործաւորին ազատութիւնն կը բռնաբարեն՝ են թարկելով զայն մասնախումբերու բանագետութեան և ստիպելով հպատակիլ կանոնաց և որոշանց , թէ մեքենայից հաստատութեան կը հակառակին , թէ սկզբունք ընդունած են քիչ աշխատիլ քիչ արտադրել , թէ կը մերժեն սակած աշխատանքութիւնն (travail à la tâche) , թէ թոշակաց հաւասարութիւն կը պահանջեն և թէ ուսանողաց թիւն նուազեցնել կը ջանան : Այս թշնամիք իրաւունք չունին հակառակելու սոյն ընկերութեանց . իրաւ է թէ սոքա իւրեանց սիմպումներն ու չափազանցութիւններն ունին որք պէտի ուղղուին հետպահէ քանի որ գործաւորք աւելի լրաւալորուին իրաց բնութեան և շահերուներդաշնակութեան ճշմարիտ օրինաց վերայ . ստոյգ է թէ յանիրաւի կը մերժեն սակած աշխատութիւնն , թոշակաց հաւասարութիւն կը պահանջեն , մեքենայից կը հակառակին և անհաշիւ ու աղետալի գործադուլեր կընեն . այսու հանդերձ գործաւորաց վիճակն լաւագոյն է այսօր յԱնդզիա քան յառաջ քան դհաստատութիւն սոյն ընկերութեանց . բայց աստի ընափիր միջոցներ են աշխատութեան առեւտուրոյն պայմանաց տեղեկանալու . գործաւորն այսու կը համար զայն դրամագլուխն յարգն , բայց դրամատէրն ալ կը սովորի թէ պէտք է գոհացնել աշխատութիւնն : Սրգէն ինչ որ ալ

ընեն՝ չեն կարող Մատուցման և լինդրանաց օրէնքն վորխել . միայն այդ օրինաց արդար գործադրութեան արդելքներն կը բառնան . և որովհետեւ դիտուած է որ տապնասի ատեն սաւ կաւաթիւ են գործադրութը , ատոի կը հետեւի թէ գործաւորք տակաւ իրաց վիճակն լաւագոյնն գնահատել կ'ուսնին : Բաց աստի , մի պատերազմ է սա , և ըստ այնմ ունի և բնական է ունենալ իւր վասներն մեծագոյն բարեաց քով զոր կը գործէ . աշխատութեան մատուցումն անօրացնելու , աշխատութեան մեծաքանակ (en gros) վաճառումն կազմակերպելու և գործառութին ընդդիմութեան կարողութիւնն բազմապատկելու ամենօդ տակար միջոցն է :

73. Աշխատութեան և Դրամագլխոյ յարաբերական կացութիւնն բարւոքելու և գործաւորին վիճակն բարձրացնելու և լաւացնելու համար օգտաւէտ միջոցներ են նաև հետեւեալներն :

1. Սակայ աշխատութիւն (travail à la tâche , aux pièces) . — Ամս թէսլէտ գործաւորաց ընկերութիւնք կը հակառակին յԱնդ զիա և՝ թէ և նուազ՝ ի Գաղիա , սակայն այսօրինակ աշխատութեան առաւելութիւնն յայտնի է : Նախ գործաւորին արժանապատութիւնն կը յարգէ՝ բառնալով նորա վերայէն գործատիրոջ նուաստացուցիչ հսկողութիւնն , ինչպէս կը լինի աւուրչքով աշխատութեան (travail à la journée) մէջ որ հին երկութենէն ածանցեալ ստրկական ձև մի է . երկրորդ՝ գործաւորն աւելի խելացութեամբ աշխատելով և աւելի սրտագին , եղած դիտուդիւններէ տեսնուած է թէ գործն 75% լաւագոյն կը լինի և գործաւորին թոշակն 50% առաւել :

20. Երկրորդական սպանչնալդ գործոյ (sous-traitants) . — Այս դրութեամբ մի քանի գործաւորք կ'ընկերակցին և գործոյն մի մասն կ'ստանձննեն սակարգելով . դիմաւոր և սուզ գործիներն կը մատակարարեն գործատեարք , փոքրերն ինքեանք կը բերեն ու վարձելով այլ գործաւորներ՝ ի գլուխութիւնն է :

30. Մասնակցութիւն շահուց (Participation aux bénéfices) . — Այս դրութեամբ գործաւորք մասնակից կը լինին հաստատութեան շահուց , այսու աւելի սերտիւ կը կապուին նորու հետ և իւրեանց համար դրամագլուխ մի կը կազմեն : Այս դրութիւնն այլ և այլ ձեւերով կարէ ի գործ դրույլ , բայց սովորական եղանակն այս է որ առանց թոշակէն որ և է մաս մի վար գնելու տարեգլուռն գոյացած զուտ շահն , ամէն ծախք հանելով , երկու մասի կը բաժնեն , մին դրամատիրոջ կը լինի և միւսոն կը բաժնուի այլ և այլ թոշակաւոր աշխատաւորաց մէջ ըստ աստիճանի թոշակաց : Երբեմն աշխատաւորաց բաժինն կը մնայ գանձուն մէջ և կը դիպուի ի հաշիւ իւրեանց : Այս դրութեան կը հակառակին բազում գործատեարք որք կը դժկամակին ցոյց տալ իւրեանց հաշիւներն ու ծանուցանել իւրեանց շահերն , և նոյն խոկ գործաւորաց ընկերութիւնք . բայց օգուտոն ակներեւ է զայմատութիւն և զդրամագլուխ հաշտեցնելու մասին : Զարդ Փապէյճ առաջարկեց զայն 1832ին : Վերջին ատեններն փորձուեցաւ Անգլիացի ՊՊ . Որիքսի հանքածխարանաց և ՊՊ . Ֆօքս , Հէտ և ընկ . եան երկաթի գործարանաց մէջ . Գաղիական երկաթուղոյ ընկերութիւնն մի բազում տարիներէ ի վեր ընդունած է զայն , ինչպէս և ՊՊ . Ո . Հ . Ամիթ և որդի անդզիացիք իւրեանց հրատարակութեան բնդարձակ ձեռնարկին մէջ . և շատ դրամատունք , վաճառատունք և հասարակաց մեծ ընկերութիւնք այս սկզբան արժէքն ճանչցած են սպարդել բաժաննելով իւրեանց գործակատարաց ի վերջ մի յաջող տարւոյ :

40. Արկա հանգութեան նոշակ (Caisse de retraite) . — Գործատեարք ումանք բարեսիրած կամ ընկերութիւնք , իւրեանց գործաւորաց սիրտոն կապելու համար հաստատութեան հետ , հաստատած են այսպիսի արկղեր ուստի թոշակ կը սահմանեն որոշ թուով տարիներու ծառայութենէ յետոյ , կը նպաստեն պատահարաց ատեն որք բոլորովին կամ առժամեայ կերպով անկարով կ'ընեն գործելու . ինչ որ արդարութիւնն է քանի որ ծեր կամ խեղանդամ զօրականն ունի իւր հանգստեան թոշակն , և քանի

որ ճարտարութեան դաշտին վերայ պատերազմելով անկնողն ոչ ինչ նուազ մի զոհ է :

74. Եթէ գործառքին կայսութիւնն բարւոքելու լաւագոյն եղանակն զայն դրամագլխոյ տէք ընելն է , այս մասին ամէնէն արդիւնաւոր ձեռնարկներն եղած են Գործակից ընկերութեան (Sociétés coopératives) և Արդարական ընկերութեան (Associations de production) :

Ի սոյսնէ առաջինք արհեստաւորաց բաժանորդական ընկերութիւններ են որք փոքր բաժիններով դրամագլուխ մի գոյացնելով կարեւոր պիտոյից , գորօրինակ ուտենաթի , զգեստուց վերաբերեալ նիւթոց , մթերանոցներ կը հաստատեն յորոց կը գնեն իւրեանց պիտոյքն . այս մթերանոցք կը մրցին նաև ուրիշներու հետ հասարակութեան լաւ և աժան ծախելու մասին . շահն կը բաշխուի բաժանորդաց մէջ ըստ բաժնից և գնմանց , կամ կը զիջուի և դրամագլուխ կը լինի նոր հաստատութեանց : Այս տեսակ ընկերութեան առաջին օրինակն տուին Մանչէստերի մօտ Ռոչդեյլ գիւղաքաղաքին մէջ 24 գործառք որք միաբանցան 1844ին մէկմէկ ոսկի դրամագլուխ գնելով և նապարեզինաց խանութ մի հիմնելով . սոքա կոչուեցան Ռոշդեյլ ռահնչերաց (les pionniers de Rochdale) : Այս ի սկզբան այնքան փոքր ընկերութիւնն 1878ին ունէր 10,187 անդամ . 292,544 սթ . ոսկի դրամագլուխ . 500,000 սթ . ոսկոյ գործառնութիւն կ'ընէր . շահն էր 52,694 սթ . ոսկի 1878ի համար : 1877ին թրիտ . կըզգեաց մէջ սոյն ընկերութեանց թիւն կ'ենէր 12,000ի :

Երկրորդներն են արհեստաւորաց ընկերութիւնք որք միանդամայն գործատէր եւ գործառք են . շահն է ըստ թուշակի : Յայափիսեաց բազումք հաստատուեցան վերջին քասն տարւոյ մէջ յԱնգղիա , ի Գալլիա , յԱմերիկա : Առ այս գործառք բաժիններով դրամագլուխ մի կը կազմեն ստանալու համար մի արհեստարանի հիմնարկութեան հարկաւոր եղած շէնքքն , մեքենայներն , նիւթերն , և կը կարգեն տեսուչներ որք մեծագոյն բաժինն ունին շահուց մէջ : Հիմնուածներէն բազումք

անկան սակայն սա պատճառաւ որ սոյն ընկերութիւնք միշտ չէն գիտեր լաւ տնօրէններու կարևորութիւնն և աժանն ու հետեւաբար նուազ կարողն կը կարգեն , ինչ որ կը վտանգէ գործն . երբեմն ալ իւրեանց դրամագլուխն չբաւեր առևտրոյ գործարին կացութեան տաեն , և այն տաեն կրուստներու առջեւ կ'ընկածին : Բայց լաւ մատակարարուած և ամուր հիմնաց վերայ հաստատուած սոյնպիսի ընկերութիւններ նաև յոյժ արդիւնաւոր ու բարերար են և կոչուած են յեղազգել արդի գործառութեան ընդհանրապէս անհամանձելի կացութիւնն :

Հարցարան . — 71. Ի՞նչ վէճ կայ աշխատութեան և դրամագլուխ մէջ : — 72. Ի՞նչ էն Գործառքաց ընկերութիւնք : — 73. Ուրիշ ի՞նչ միջոցներ կան աշխատութեան և դրամագլուխ յարաբերական կացութիւնն բարւոքելու համար : — 74. Ի՞նչ էն Գործակից ընկերութիւնք և Արտադրական ընկերութիւնք :

Դ Ա Ս Ժ Գ .

Տ Ս Կ Ո Ւ — (L'INTÉRÊT)

75. Տեսանք որ արտադրութեան մէջ դրամագլուխն բաժինն կը կոչուի առիս՝ երբ դրամագլուխն շրջուն է , չարժէ (loyer)՝ երբ հաստատուն է : Պէտք է նախ և առաջ զանազանել առիս և չաշէ (usure) բառերն . առաջինն դրամագլուխ մի գործածման օրինաւոր և արդար արդիւնքն է , իսկ միւսն կը նշանակէ անիրաւ և շափազանց տոկոս մի : Սակայն ի սկզբան փոխ տրուած շրջուն դրամագլուխ մի՝ մանաւանդ ստակի գործածման իրեւ վարձք

առնուած որ և է տոկոս իբրեւ անիրաւ ինչ՝ իբրեւ վազիս կը նը-
կատուէր և կը դատապարտուէր, մինչըեռ հաստատուն դրա-
մագլխոյն զորօրինակ տան, խանութի, գործածման փոխարէն
վճարեալ վարձքն օրինաւոր և արդար կը նկատուէր։ Փիլիսո-
փայութիւն, կրօնք, իրաւագիտութիւն միարան էին ի դատա-
պարտել զտոկոս։ Մովսէս, Գաւիթ, Եղեկիէլ և այլ մարդարէք
կ'արդելուին տոկոս տունուլ։ Մանու, Կոմիթսկիոս, Զրադաշտ,
Պիւթագոր, Արիստոտէլ նոյնակս խորհած են, Կատոն, Օլի-
ժէլ, Կիկերոն, Սալլուստ, Սենեկա, Պլուտարք տարբեր կար-
ծիք չունէին, թէպէտ Կատոն, Սենեկա, Բրուտոս իսկ իւր-
եանց ստակն մեծ տոկոսներով փոխ կուտային։ Նոյնպէս և Հարք
Եկեղեցւոյ, հիմուելով Աստուածանչին և մասնաւորապէս Ղու-
կատու Աւետարանին Զ. գլխոյն մէջ ըսուած մի խօսքի վերայ (*),
անիրաւ կը գտնէին տոկոսն, ու կաթոլիկ կղերն գողութիւն,
կուտալաշտութիւն կը հոչակէր զայն։ Եսորոց մէջ իսկ եղած են
այս գաղափարին պաշտպանք, որպէս Բրուտոն, որոց հետ Պաս-
թիա այս խնդրոց մասին ունեցած է մի նշանաւոր վիճարանու-
թիւն։ Արիստոտէլ ըսած է թէ « Ստակն ստակ չժնանիր »։ Այս
նախապաշտրմանց հակառակ, մարդիկ միշտ պէտք ունեցած են
փոխառութեան և հետեւալիս կամաւ և հաճութեամբ տոկոս
վճարած։ Տնտեսական յառաջիմութիւնք յԵւրոպա տակաւ տը-
կարացուցին այս կարծիքնելն։ յԵտ միջին դարու, կրօնական
բարեկարգիչք նպաստաւոր եղան տոկոսի, և այսու կը մեկնուի
բոլորական ազգաց արուեստական և տուետրական գերազանցու-
թիւնն։ Այս եղած էր նաև մասամբ իտալական հանրապէտու-
թեանց բարգաւաճման/պատճառ/ զի տոկոսով փոխառութիւնն
ազատորէն ի գործ կը գրուէր անդ, և այսպէս Ֆլորանսացիք և
Միլանցիք տիեզերական սեղանաւորներ եղան։ Հետզհեաէ թԶ.
և թէ. դարուց մէջ աստուածաբանք և օրէնսդէտք սկսան պաշտ-
պանել տոկոսի օրինաւորութիւնն, և թԶ. դարու մէջ նշանաւոր

(*) Եթէ տայք փոխ այնոցիկ յորոց ակն ունիք առնուէլ ո՞ր չըրց է
ձեր, քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան զի առցեն անդքէն զկշոն։

իմաստասէրք և տնտեսագէտք Մոնթէսիրիէօ, Հիւմ, Թիւրկօ,
Ատամ Ամիթ, Պէնթամ կատարելապէս և տիրապէս պարզեցին
խնդիրն, և յայտնետէ ապացուցեալ ճշմարտութիւն է թէ ու Թ-
ոյն տոկոսն է օրէնստոր, այլ և ու և առնման ու ու ու մի բնուուն-
բունիւնն է սեփականաւորնեան, ընտակար գոտուունն էն, դուեստունն և ըն-
դէւստունն տառնուարուն։

Պէնթամ (« Պաշտպանութիւնն Տոկոսի », 1781), պատաս-
խանելով Արիստոտէլի, կ'ըսէր թէ « թէպէտ մի դարէն (պարս-
կական գրամ) անկարոզ է ծնանիլ մի այլ դարէն, բայց մի փոխ
տուեալ դարէն ավ մարդ կարոզ է զնել մի խոյ և երկու մաքի,
որք ի վերջ մի տարւոց կարեն 2-3 գաւներ արտադրել։ արդ-
եթէ փոխառուն՝ ի գալ պայմանաժամունն ծախէ խոյն ու մաս
քիներն հաստուցանելց համար փոխառեալ դարէն և մի գաւն
ալ յաւելու տալ փոխարէն գործածման, իւրեան դարձեալ կը
մնայ մի կամ երկու դառն, զարս չպիտի ունենար առանց այն
փոխառեալ դարէնն »։ Այսպէս Ֆլորանքին (« Խրատ առ երիտա-
սարդ ոք ») կ'ըսէր։ « Ստակն ի բնէ արգասաւոր է . . . ստակն
կարէ ծնանիլ ստակլ։ նա որ կը կործանէ մի սկուտ, կը կոր-
ծանէ զրդ ինչ կարէր նա արտադրել, և մինչեւ հարիւրաւոր
սկուտներ »։

Կաթողիկ եկեղեցին, ընդունելով հանդերձ հողացին ստաց-
ուածոց վարձակալութեան համար փոխարինութիւնն և կեղա-
կարծ՝ վասնգաւոր (la grosse aventure) փոխառութեան համար
տոկոսն, միշտ և ցարդ հակառակած է սովորական տոկոսին,
թէպէտ Պապական կառավորութիւնն փոխառութիւն ըրած է
Ուոշիւտ անուն հրեայ սեղանաւորէն։

Այս նախապաշտրման տարածման երկու կէտ նպաստած
են։ մին այն է թէ հին ստեն ճարտարութիւնն զարգացած չը
մնելով և գործերն ալ քիչ մինելով, փոխառութիւնն ընդհան-
րապէս նեղութեան մէջ գտնուող մարդիկ կ'ընէին, զի վարկն
մի գործի չըր նկատուած արտադրութեան և վաճառականու-
թեան։ ուստի և փոխառութիւնն մի գթութեան գործ էր,
և տոկոս պահանջելն չարաչար գործածել էր մի՞այլոյ կարօտու-

թիւնն : Երկրորդն այն էր թէ քրիստոնեայ ժողովրդոց արգիշտիւնած լինելով տոկոսառութիւնն , հրեայք մանաւանդ ի գործ կը դնէին զայն՝ որք արգէն հաստատուն կալուածոց իշխան չէին տիրանալ , և իւրեանց պահանջած տոկոսն այնքան աւելի էր որքան կառավարութիւնք չին պաշտպաներ՝ ի պարագայի վաստոց փոխատուին իրաւունքներն . տատի տոկոսն մի անիրաւ ձեւ կ'ուստանար հրէից ձեռին մէջ և եւս առաւել աւելի կը լինէր :

75. Տոկոսին հետ խառն է միշտ ապահովագինն (prime d'assurance) . գրամագլխոյն կորսաւեան հաւանականութիւններն . որքան աւելի շատ են՝ այնքան աւելի բարձր է տոկոսն , բայց իրօք տոկոսն չէ բարձրն , այլ ապահովագինն . որչափ աւելի է վստահութիւնն այնքան նուազ է ապահովագինն , հետեւարար և տոկոսն կը թուի նուազ : Այս վստահութիւնն երեք պարագայներէ կախում ունի . 1^o. Գործածման ապահովութենէն , 2^o. Փոխառուին կարողութիւններէն , անձնական նկարագրէն , և 3^o. Երկրին բարւոք վարչութենէն : Ստուգիւ միջին դարու մէջ փոխառուեալ դրամոց տոկոսին մեծութեան , այն է ապահովագինն մեծութեան պատճառն էր զեղիս և անխորհուրդ գործածութիւնն : Աթենացիք երկու տեսակ տոկոս կը զանազանէին . ծովային և շամատային . ծովային ձեռնարկութեան մի համար փոխառուած ստակին փոխարէն ըստ ռւզեւորութիւն 30% տոկոս կը պահանջէին , որ 60% ըսել է տարին երկու ռւզեւորութիւն հաշուելով , մինչդեռ սովորական ցամաքային տոկոսն էր 12% : Փոխառուութեան տեւողութիւնն ալ ազդեցութիւն ունի տոկոսի սակին վերայ . կարծ միջոցի համար փոխառուած գումարին տուկոսն քիչ կը լինի , քանի նախ փոխառուուն կը յուսայ միշտ պէտք ունեցած ատեն ստակն ձեռք անցնել , և յետոյ՝ կարծ ժամանակաց մէջ համեմատաբար կորստեան հաւանականութիւններն սակաւ են . սորա համար արգի հառավարութեանց բերողին վճարելի փոխառութեանց տոմսակներն քիչ տոկոսով են , զի ամէն ոք կարող է զայն տալ և առնուլ և կը յուսայ վտանգի ժամէն յառաջ կարենալ ի դրամ փոխարկել : Փոխառուին անձնական նկա-

րագրին ազգեցութիւնն անժխտելի է . զի սլարկեցաւ և իւր ստուրագրութեանց միշտ պատիւ ընող ոք աւելի դիւրութեամբ և նուազ տոկոսով ստակ կը դտնէ քան անպատիւ և խարդախ ճանչուած ոք : Հուսկ ուրեմն, երկրին բարւոք և արդար վարչութիւնն , պաշտպանելով ամէնուն իրաւունքներն , առաւել վտահութիւն ուներչնէ փոխառուուն որ նուազ հարկ կ'զգայ զրամագլխոյն վտանգայն համար մեծ ապահովագին պահանջէլու : Կառավարութիւնք , բարւոք կազմակերպեալք , պարտականութիւն ունին անշուշտ ստիպելու զգարտատեարա յարգել իւրեանց ստորագրութիւնն և վճարել իւրեանց պարագերն , և առ այս ճնշում բանեցնել նոցա վերայ , անտարակոյս բանաւոր միջոցներով , և ոչ բանտարկելով և անձնական ազատութենէ ու աշխատելու կարողութենէն զայն զրկելով : Այս ամէնն լինելով հանդերձ միշտ փոքր վտանգ մի կը մնայ , և այս վտանգն իւր արժէքն ունի , և այն է ապահովագինն :

76. Երբ գրամագլխոյ մի գործածման փոխարէն պահանջուած վարձքն կը հանեմք ապահովագինն , մնացածն է զուտ տոկոսն . այն ատեն այդ տոկոսի սակին այնքան աւելի է որչափ գրամագլխոց գումարն է քիչ և որքան խնդրամնէն է շատ . այս վերջինն ալ կապուած է գործոց ընթացքին : Կրնայ պատահիլ որ գրամագլուխն առատ եղած միջոցին՝ տոկոսի սակին ալ բարձր լինի , այն ատեն ըսել է թէ ճարտարութիւնն շարժման մէջ է և գործերն՝ շատ . ընդհակառակն , կրնայ պատահիլ որ գրամագլուխն հազուագիւա լինի և տոկոսի սակին՝ վար . այն ատեն ըսել է թէ ճարտարութիւնն գործունէկութեան մէջ չէ , գործերն կը պակասին . Ատամ Սմիթ զիտած էր զայս Անգլիոյ մէջ ուր յետ 1765ի խաղաղութեան տոկոսն բարձրացած էր , թէ և դըրամագլխոյ քանակութիւնն մեծ էր , վասն զի գործերն ալ բացուած էին . 1812ին Գաղփոյ մէջ հակառակն էր . գրամագլխոյ նուազութիւնն կար ու միանգամայն գործերու , և հետեւապէս տոկոսն իշած էր : Բայց հոս գրամագլուխ բաելով պէտք է հասկընալ տրամադրելի գրամագլխոց գումարն , կամ գէթ բանուած

գրամագլուխներէն այնպիսիներն զորս կարելի է շուտով շարժման և փոխփոխութեան մէջ զնել . ասդու թէ ոչ գործիքներ , մեքենաներ , գործարաններ չեն կարող տրամադրելի դրամագլուխ կարդին մէջ հաշուիլ և հետեւապէս տոկոսի սակին վերաց ազդել :

77. ՄԵԺԱԴՅԱՆ առկ մ'որոշել տոկոսի այնքան անիրաւ բան է որչափ վաճառաց մեծագոյն զին մ'որոշել . այսու շրջաբերութենէ դուրս կենան այն դրամագլուխիք որք այդպիսի սակալ չեն գոհանար . բաց աստի , գրեթէ միշտ ապարդիւն կը մնայ այդ պետական սակին փոխառութին ու փոխառութին ներքին համաձայնութեամբն : Զարմանալի է որ այն կառավարութիւնք , որք այդպիսի օրինական սակ մի սահմանած են , ինքեանք միշտ եղծած են զայն բարձրագոյն տոկոսներով փոխառութիւններ ընելով : Կառավարութիւնք պէտք է որ տոկոսի սակ մ'որոշեն՝ բայց այն պարագայից համար ուր նախապէս տոկոսի պայման չինելով՝ տոկոս կը պահանջուի յետագետաւ պարտուց համար . այն ատեն հարկ է ստորևագոյն տոկոսն ընդունիլ իրեւեւ սակ , քանզի քանի որ մայր դրամն յետո կը դարձուի , ապահովագին մի հաշուել անտեղի է : Բայց այս սակն պէտք չէ որ կոչուի օրենական բոկոս (intérêt légal) , որովհետեւ ապօբնական բոկոս (intérêt illégal) չկայ , ինչպէս չկայ օրինական , ապօրմանական դին :

78. Ախալ է կարծել թէ ստակի շատութիւնն է դրամագլուխ շատութիւն , և թէ նորա քանակութիւնն է որ կ'ազդէ տոկոսի սակին վերայ , սխալ յորմէ յառաջ եկած է դրամն օրէկոս (intérêt de l'argent) զրիպական բացատրութիւնն : Այս վրէպն յառաջ եկած է անտի զի ընդհանրապէս դրամոյ ձեւոյն տակ փոխ կը արուի դրամագլուխն , և բատ այսմ նոյն իսկ Մոնթէս քիէօ և Առք խարուած են : Ոչ ոսկույ և արծաթի քանակութիւնն է որ կ'որոշէ զսակ տոկոսին և ոչ որ և է այս կամ այն գաճառքի քանակութիւնն , այլ ընդհանրապէս տրամադրելի դրամամագլուխ քանակութիւնն և փոխառութեամն ոլիտոյից ստափ-

ճանն : Փոխ արուածն մի բնիպառած արժէ՛ (valeur accumulée) է , որովհետեւ թէ և դրամոյ ձեւով փոխ արուի փոխառուն իսկոյն կը փոխանակէ զայն ուրիշ արժէքի հետ՝ որում կը կարօտի , եւ նոյն դրամն կ'երթայ նոյն պաշտօնն կատարել ուրիշ փոխառուի քով : Փոխառութիւնն շատ անդամ ալ և ոչ իսկ ստակի ձեւոյն տակ ի գործ կը դրուի , թէ և տոկոս կը վճարուի , ինչպէս յաճախ վաճառականութեան մէջ , ուր պայմանաժամաւ (à terme) կը ծախեն և կը զնեն . այն ատեն յորենի , բամբակի , բուրդի , և ձեւոյ ներքեւ փոխ կը արուի դրամագլուխն : Եթէ դրամոյ քանակութիւնն ազգէր ի վերայ սակի տոկոսին , ապա ուրեմն երր Եւրոպայի մէջ դրամն իւր հին արժէքին Աթին իջաւ և մի և նոյն դրամագլուխն փոխ տալու համար հարկ եղաւ Յ անդամ աւելի ստակ փոխ տալ , պէտք էր որ սակն նուազէր . բայց անփոփոխ մնաց : Այս կերպով Ամերիկայի մէջ աւելի վար պէտք էր լինել սակն քան յԵւրոպա , բայց չէ՝ այնպէս :

Հարցարան . — 74. Տոկոսից վրայ ինչ պատմական ծանօթութիւն ունի : — 75. Տոկոսին յարակից ինչ բան կայ : — Ապահովագոյն նուազումն ինչ բանէ կախումն ունի : — 76. Օռտ տոկոսին սակն ինչպէս կ'որոշուի : 77. Օրինաւոր է Թժաժան առկ սահմանել : — 78. Դրամոյ քանակութենքն կախումն ունի տոկոսին սակն :

79. Երկիրն մի գործի է արտադրութեան. հողատէրն այն է որ ունի զայդ գործի, զբա կամ անձամբ կը գործածէ և կամ կը վարձէ այլում: Այս վարձքն ի' անուանի հողադրչ (fermage), նկամուռ (rente): Այս վարձ այնքան աւելի մեծ է որքան մեծ է հողոյն արտադրական զօրութիւնն և ո'րքան աւելի նպաստաւոր զրից ու պայմանաց մէջ է հողն: Վարձի ծագումն վէճի նիւթ եղած է: այս մասին ամէնէն նշանաւոր տեսութիւնն Ոիւքարտոյին է: Ըստ այս անտեսագիտին, մարդիկ ամէնէ յառաջ լաւագոյն հողերն զրաւած են. յետոյ, քանի որ մարդոց թիւն բազմացեր է՝ սկսեր են նուռազ լաւ գետիններն ալ մշակել, եւ այսպէս հետ զետէյ յառաջ դացած են իջնելով դէալ ի յոռի գետիններն: Քանի որ դէալ ի գէշն իջած են՝ այնքան լաւերուն վարձն բարձրացեր է, վասն զի անոնուած է թէ նորա մի եւ նոյն ծախիւք և աշխատութեամբ առաւել շատ ու լաւ կ'արտադրեն. հետևաբար մի և նոյն տարածութեամբ և մի և նոյն ծախուց ու աշխատութեան ենթակայ երկու հողերու արդեանց տարբերութիւնն լաւագունին վարձն, եկամուան եղեր է:

Այս տեսութիւն նախ սա կարծիքն կ'ենթադրէ թէ մարդիկ անհատապէս գրաւած լինին ի սկզբան հողն, որպէս կ'ըսէր իրուսո: Բայց պատմական հետազոտութիւնը և ցարդ իսկ գրտնուած յետնեալ քաղաքակրթութեան օրինակներ կը ցուցնեն թէ մարդիկ հաւաքական սեփականութեամբ սկսած են, և թէ ըստ յառաջել քաղաքակրթութեան՝ սեփականութիւնն անհատականացած է, ինչ որ վերջին ձեւն է սեփականութեան: Մարդկութեան նախնական վիճակին մէջ՝ հրոսակն կը տարածուի հողոյն կը առաւել կամ նուռազ մեծ է որքան մեծ տարածութեան մի վերայ: առող, վերին աստիճանի մի մէջ, ընտանիքն՝ ցեղն կը գրաւէ

հաւաքապէս: Այսօրինակ էր սեփականութիւնն ի Զինաստան Քրիստոսէ 2203 տարի յառաջ, և այսօր ևս ինչ ինչ հեռաւոր նահանգաց մէջ կը հաստատուի այս իրութիւն: Ի Հառվիմ եւս սեփականութեան նախնական ձեւն այս էր, և Նումայի ժամանակէն ոկտակ մասնաւոր սեփականութիւնն: միշտ մնացին հասարակաց հողեր (ager publicus) զրու առ յասկա գրաւեցին Պատրիկեանք: ի Գերմանիա հասարակաց դետինն կը կըսուէր ճառարիկեանք: որց մէջ անցնիւր ընտանիք իրաւունք ունէր մի մաս (mark) որց մէջ անցնիւր ընտանիք իրաւունք ունէր մի մաս մշակելու: իսկ ի Ուուսիա գրեթէ մինչեւ մեր օրեր կը տեւէ նահապետական ընտանիքի հաւաքալին սեփականութեան ձեւն: ուուսական մուն հասարակութիւն մ'է որց անդամք կը նկատուին իրեւ հասարակաց նահապետի մի սերունդն:

Երկրորդ, սխալ է կարծել թէ մարդիկ նախ լաւագոյն հողերն են գրաւեր և ապա հետպհետէ նոււազ լաւերն: Մարդ կը սեփականէ այն հողն զը կարող է և առ զան զոր կ'ուղի ծառիւլ: Ըստ այսի ամէնէն արդաւանդ դետիններն, որք բնականաբար մեծածով, մարդիկ չեն կրցած ի սկզբան շահագործել, զի առ այդ գործի և գրամագլուխ հարկաւոր էին: ուստի նախ անջրդի և անբեր տեղերէ սկսած են, և ըստ ամել իրեւանց միջոցաց ու զօրութեան՝ ձեռնարկած են լաւագոյն հողեր օգտակար ընելիւրեանց: Քանի, ամերիկացի տնտեսագիտն, որ իւր երկիրն կացութեամբն դիւրութիւն ունեցած է կոյս աշխարհի մէջ սեփականացման եւ ըւոյթն ուսումնակրելու, հաստատած է թէ սեփականացումն, փոխանակ ամէնէն յօւսթի հողերով սկսելու, կ'սկսի ամէնէն նըւազ յօւսթիններէն: Միացեալ-նահանգաց առաջին գաղթականք Մասաչուսէցի անբեր հողայն վերայ կը հաստատուին և կը հիմնեն զիլինութ: յետոյ ի նիու-Բօրդ ի նիու-Համլ: նիու-Նօրդի նահանգին մէջ նախ կը մշակեն Մանհագան կզիին: նիու-Ֆէրսէի, Գէորգիայի, Ալապամայի, Ֆլորիանի, Տիւլավարի, Միսիսիպիի եղերաց վերայ ամենընդարձակ տարածութիւնը անմշակ և կոյս են, ծածկուած յաճախ ծառախիտ անտառներով ծոխարցոյն մարդագետնոր: ի Մերիմկա և ի Բերու հին քաղաքակրթութեան հետաքերն կը գտնուին ոչ ծովեղերբն ուր հողն առատարցյ է՝ այլ վերերն, բարձանց վերայ: Ագլոպատուի մէջ Ֆելքան մշակուեցաւ

Եղիպտոսի քաղաքակրթութեան զարգացած միջոցին և ապա յանկանելն նորա զօրութեան՝ լքուեցաւ նորա արդիւնագործութիւն։ Անդզիոյ մէջ վերջերս միայն մշակուիլ սկսան լինքօնի բազմաբեղուն ճահիճներն ։ և ի Գաղիա հոռվմէ ական զրաւման մեծագոյն հետքերն կը գտնուին Օվէրնեի, Աչվէն լերանց և Բրիտանիոյ մէջ, խեղճ և լեռնոտ հողերու մէջ։

Ուստի կը տեսնուի թէ հողագարձն ու եկամուտն ըստ մեկնութեան Ռիքարտօյի չեն ծագած, որովհետեւ ոչ հողն ի սկզբանէ անհատապէս զրաւուած է և ոչ լաւագունէն միմերով մը շակուած է։ Խրողութիւնն այս է թէ, որպէս ըսինք, հողատէրն որ և է կերպով տէր գտնուելով երիէ կոչուած գործոյն՝ զայն եթէ փոխ տայ այլում՝ փոխարէն կը պահանջէ մի փարձք, որոյ չափն այլ և այլ պարագայներէ կախում ունի, երկրին արգասաւորութենէն, եղագներու մերձաւորութենէն, շրջուն դրամագլխոց առատութենէն, փոխազդութեան միջոցաց ներկայութենէն ևն։

80. Այլ և այլ երկիրներու մէջ տարբեր է հողոց զրաւումն։ Անդզիոյ, Գաղիոյ, Նորվէկիայի, Ռուսիոյ, Տաճկաստանի մէջ մի և նոյն չէ։ Անդզիոյ մէջ 72 միլիոն աշը (1½ արտավալը) հողոցն 51 միլիոնն 10,000 մարդոց ձեռքն է, և այս թուէն 977 անհատը ունին 10,000 աշը և աւելի։ այնպէս որ յԱնդզիա հողատեարց% 0· 9 ն կը գրաւէ երկրին % 7 1 ն, և հողատեարց% 0· 72 ն երկրին միայն 0, 20%ն կը գրաւեն։ Ի Գաղիա երկիրն շատ կոտորակեալ է։ 1862ին երկիրն կը բաժնուէր 3,225,877 մասերու։ Ի Տաճկաստան նոյնակն երկիրն բաժնուած է բազում մասանց, բայց ընդարձակ գետիններ ջաֆրէն են և յաճախ ամրող զիւզեր կը վերաբերին սէյերու որք մի տեսակ աւատապետ են։

81. Հողային ճարտարութեան մէջ արժադրութեան երեք գործիք այլ և այլ կերպերով կը միանան։ երբեմն երեքին ևս կը մատակարարուին մի միակ անձէ, և երբեմն այլ և այլ անձերէ։ Դերութեան գրաւութեան մէջ, ինչպէս զերութեան նորման մէջ, բայց տարբերութիւնն անհուն է, զի անդ աշխատութիւնն ակամայ և մեքենական է, իսկ աստ աղատ և հանճարեղ։ Եթէ անառնելուն պատճեն էն մեծ է։ զիւզացին, աէր զգութով ինքզինքն հողոցն և տեսնելով թէ իւր վաստակոց արդիւնք իւրեան են, կը ջանայ, կը հնարէ, կը ճարտարամտէ, յոգնիլ չգիտէ։ Մակայն աստ ալ սա անպատեհութիւն կայ որ զիւզացին չինելով հարուստ և շունենալով բաւական զրամագլուխ չէ կարող ձեռք բերել այն գործիներ և հողոցն վերայ ի գործ դնել այն բարուքումներ որք կարեւոր են յառաւել արդիւնառութիւն։ ուստի յաճախ փոխ կ'առնու զրաւ զնելով իւր ստացուածքն, եւ յայնժամ ճշմարիտ հողատէրն կը լինի

բիկայի նահանգաց մէջ, հողագործապետն ունէր միանգամայն երեք գործիներն, հողա աշխատութիւն և դրամագլուխ։ Այս գըրութիւն ամենավատթարն է։ զի գերին բառին բուն նշանակութեամբ մի աշխատաւոր չէ, զի աղատութիւն չունի և իւր աշխատութեան արդիւնք չէ իւրն, այլ մի զրաստ, մի եղն, և այսպիսի պայմանաց մէջ աշխատութիւնն ինչպէս կրնայ արդիւնաւէտ լինել։ Թող թէ բարոյագիտութեան տեսակէտով գաւագարտելի է նաև զերութեան զրութիւնն։

Չատ տեղերու մէջ, որպէս բազում ուրեք ի Տաճկաստան, յԵգիպտոս, ի Պարսկաստան, մի քիչ տարբեր՝ յԱնդզիական Հընդիկոս, և յայլ արեւելեան աշխարհն, կառավարութեան ձեռքն են հոգին մեծ մասամբ։ զիւզացիք զրամագլուխ կը գտնեն և կը մշակեն վճարելով հողագարձն կառավարութեան։ Յետ գերութեան՝ յոսեգոյնն է այս զրութիւն։ զի այդ հողագարձ մեծ տարբերութիւն չունի հարին, և տարին լաւ լինի թէ գէց, կառավարութիւնն միշտ կը պահանջէ նոյն վարձն զոր ըստ քմաց կ'որոշէ, և գէց հնձոց ատեն վարձակալք պարտուց կ'ենթարկին և կը թշուառանան։

Մի այլ դրութեամբ, որ ի գործ կը դրուի մանաւանդ ի Զուիցերիա, ի Պելմիքա, ի Կորմանտիա, ի Շուէտ և այլուր յԵւրոպա, գիւղացին է հողատէր, և ինքն կը մատակարարէ միանգամայն աշխատութիւնն ու զրամագլուխն, ինչպէս զերութեան նորման մէջ։ բայց տարբերութիւնն անհուն է, զի անդ աշխատութիւնն ակամայ և մեքենական է, իսկ աստ աղատ և հանճարեղ։ Եթէ անառնելուն պատճեն էն մեծ է։ զիւզացին, աէր զգութով ինքզինքն հողոցն և տեսնելով թէ իւր վաստակոց արդիւնք իւրեան են, կը ջանայ, կը հնարէ, կը ճարտարամտէ, յոգնիլ չգիտէ։ Մակայն աստ ալ սա անպատեհութիւն կայ որ զիւզացին չինելով հարուստ և շունենալով բաւական զրամագլուխ չէ կարող ձեռք բերել այն գործիներ և հողոցն վերայ ի գործ դնել այն բարուքումներ որք կարեւոր են յառաւել արդիւնառութիւն։ ուստի յաճախ փոխ կ'առնու զրաւ զնելով իւր ստացուածքն, եւ յայնժամ ճշմարիտ հողատէրն կը լինի

փոխատուն, եւ գրութիւնն տարբեր ձեւ կ'առնու :

Անդղիական գրութեան մէջ, ընդարձակ հողեր կը վերաբերին լրտերու, ազնուականաց որք landlord կը կողուին . գրաւամագլուոյ տէր և հողային ճարտարագիտութեան հմուտ ձեռնարկու մարդիկ կը վարձեն զարդ հողեր և հողագործներ թոշակով աշխատեցնելով՝ կ'արդիւնաւորեն ադարակներն :

Եյս գրութիւն օգտակար է սա տեսութեամբ որ հողագիտական հմտութիւնք և մեծ գրամագլուիք ընդարձակ հողեր ունենալով իրեւ զաշա գործունէութեան՝ կարեն մեծ արդիւնքներ արտադրել : Եոյն արդիւնքն յառաջ կարէ գալ նաև այն երկիրներու մէջ ուր սեփականութիւնն կոտորակեալ է՝ եթէ մանր հողատեարք գործակցական ընկերութիւններ կազմեն և ի միասին մշակեն ու զարդացնեն իւրեանց հողերն, միանդամայն շատ դաշտերու վերայ: Ի գործ զնելով այն յարդարմունք և բարւոքմունք ու գործածելով այն մեքենաներ որք փոքր դաշտի մի համար շատ մեծածախ պիտի լինէին և անկարելի իսկ :

82. Անդղիական վարձակալութիւնն (fermage) ալ ունի իւր անտեղութիւններ : Գործաւորք հողատէր զիւղացւոյն անկախութիւնն չունին . իւրեանց թոշակը ցարդ շատ սոսորին ելած են, և չեն խնայեր . թէ արձակուին կամ ծերանան, կը լինին թշուաս ողորմելի : Բաց աստի անդղիացի հողատեարք չկամին երկայն ժամանակաց համար վարձու տալ իւրեանց երկիրներ . իրեւ հին աւատատէրեր կ'ուզեն վարուիլ իշխանարար իւրեանց վարձակալաց հետ, վանել զայնս երբ կամին մի տարի կանխաւ ծանուցանելով, առանց ի նկատ առնլոյ այն վնաս որ կը լինի վարձակալին որ գրամագլուխ սպառած է հողաց վերայ յօրմէ կը մերժուի առանց քաղելոյ զպառով իւր գոհողութեանց : Աստի յառաջ կուգայ վարձակալաց անփութութիւնն ի բարւոքումն երկիրն, որ արդէն ինքնիշխան հողատիրոջ համար վարձակալն արձակելու մի պատճառ իսկ կը լինէր՝ ուրիշին աւելի սուզ վարձելու յուսով : Իրաց այս վիճակին ի դարման երկու եզանակք սկսուած են ի գործ դրուիլ Անդղիայ ինչ ինչ մասանց մէջ . Ա.

մին է երկայն սպայմանաժամաւ, զոր օրինակ 50 էն 50 տարի պայմանաժամաւ վարձակալութիւն (leasehold), որով վարձակալն բաւական երկար ժամանակի համար ինքղինք տէր տեսնելով հողաց՝ կարեւոր բարւոքումներն ի գործ կը դնէ նորա վերայ զայն առաւել արդիւնաւէտ ընելու համար, միայն քիչ մ'ի վերջ պայմանաժամուն կ'ոկաի զանց ընել այնպիսի աշխատութիւններ . — Յ. միւսն է վարչակալն իրաւանց (tenant right) յարդումն այն պարագային մէջ ուր կարուածատէրն կ'արձակէ զվարձակալն . և այս կը լինի իրագէտ անձանց ձեռքով հաշուել տալով վարձակալին երկրին վերայ ըրած այլ և այլ ծախքերն ու կամ հողատէրն ինքն վճարելով զայն և կամ վճարել տալով յաջորդ վարձակալին, որ մի և նոյնն է, քանզի եթէ կալուածատէրն վեճարէ՝ անշուշտ պիտի յաւելու ապագայ վարձակալին վճարելիք հողագործին վերայ :

Հարցարան : — 79. Ի՞նչ է եկամուտն . նորա ծագման վերայ ինչ է միջարտոյի տեսութիւնն : — 80. Ամէն երկիրներու մէջ հողն միօրինակ կերպով գրաւուած է : — 81. Հողային ճարտարութեան մէջ արտադրութեան գործիք քանի կերպով կը միանան . ինչ են նոցա յարաբերական առաւելութիւնք : — 82. Անդղիական գրութեան անտեղութիւնքն ո՞րք են . ինչ գարմաններ մտածուած են :



ԴԱՍ ՓԵ.

ԹԱՅԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ — (POPULATION)

ՑՅ. Մալթիւս անդղիացի տնտեսագէտն (1766-1834) իւր և Փորձի ի վերայ սկզբան բազմամարդութեան և անուն գործոյն մէջ կը շանայ հաստատել այս օրէնք թէ մարդկային ցեղն կ'աճի երկրաշափական յառաջատութեամբ , իսկ ապրուստի միջոցներն թուաբանական յառաջատութեամբ . որովհետեւ, կ'ըսէ, մի մարդոյ 4-5 զաւակներէն իւրաքանչիւրն կարէ իւր կարգին հայր լինել ուրիշ 4-5 զաւակներու, մինչդեռ սոքա մինչեւ չափաշատութիւն պիտի սնանին ծախիւր իւրեանց հօր , և հայրն միշտ իրբեւ մի միակ մարդ կարող է արտադրել , որով կը հետեւցնէ թէ արտադրութիւնն մի սերունդ ետ պիտի մնայ բազմամարդութենէն . ուստի Մալթիւս հետեւեալ կերպիւ կը բանաձեւէ իւր օրէնքն :

« Երբ բազմամարդութիւնն բնաւ արդելքով մի չկամի , ամէն 25 տարին կը կրկնապատկուի , և չըջան ի չըջանէ կ'աճի երկրաշափական յառաջատութեամբ :

« Աննդ ետն միջոցք , ճարտարութեան նպաստաւորագոյն պարագայից մէջ , երբեք թուաբանական յառաջատութենէ աւելի արագութեամբ չեն կարող աճիլ :

« Ենթադրենք թէ երկրին արու բնակչաց թիւն է 1000 միլիոն . մարդկային ցեղն պիտի աճի 1, 2, 4, 8, 16, 32, 64, 128, 256 թուոց պէս , մինչդեռ կենաց պիտանութիւնք պիտի աճին հետեւեալ կերպով . 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 . Երկու դար վերջն մարդոց թիւն այնոքս պիտի համեմատէր ապրուստի միջոցաց քանակութեան հետ որպէս 256 առ 9 . Երեք դար վերջն որպէս 4096 առ 13 , և երկու հազար տարի յետոյ տարրերու թիւնն անհուն և գրեթէ անհաջուելի պիտի լինէր » :

Բայց , կը յաւելու Մալթիւս , իրերն այսպէս չեն երթար . մար-

դոց թիւն միշտ կը հաւասարի սննդեան քանակութեան : Կրկու կարգի արդելքներ մարդոց թիւն կը նուազեցնեն . ումանք կու խորժել (préventif) , ոմանք կործող (répressif) : Առջիններն ալ երկու տեսակ են . մին՝ մոլութիւնք , շուայտութիւն , բազմակնութիւն , ամէն տեսակ անբարյականութիւն : Խառնագութիւն . միւսն՝ կանխատեսութիւն , բանականութիւն : Կարճով արդելքներն են սով , ապրափոխիկ հիւանդութիւնք . ուստի բազմութիւն :

Այս սկզբունքներն զնելի յետոյ և բազմամարդութիւնն յուզովդեան սուորին ու մեծաթիւ դասուն չուառութեան բուն պատճառն համարելով — իրեւ աշխատութեան մատուցումն յաւելցնող , հետեւապէս թոշակներն նուազեցնող ու անդործներու թիւն անձեցնող պարագայ — , Մալթիւս կ'եզրակացնէ թէ վասն զի արդելիչ պատճառներէն՝ բաց ի նախատեսութենէն՝ ամէնքն ալ աղիտարեր են մարդկութեան համար , սով , հիւանդութիւնք , չուառութիւն , մոլութիւնք ևն , ովէտք է որ ժողովուրդն ոյժ տայ բարյական արդելքին , այն է բանականութեան , նախատեսութեան , և բարյական ճնշում (contrainte morale) ի գործ գնելով իւր վերայ՝ անցնիւր ոք ետ կենաց ամուսնութենէ յօրչափ իւր միջոցներն բաւական չեն բնակչիք մ'ապրեցնելու , և յետ ամուսնութեան՝ զաւակաց թիւն անձկացնել և իւր կարողութեան հետ համեմատել զիանայ : Այս է ինչ որ « Մալթիւսի օրէնքն » կ'անուանի :

ՑՅ. Մալթիւսի օրէնքն իւր ամբողջութեան մէջ ճշմարիտ չէ : Սայու է թէ մարդոց թիւն կը կրկնապատկի , կ'եսապատկի ևն . Ամերիկայի Միացեալ - Նահանգնեց բնակիչներուն թիւն 1790 էն ի վեր 12 կամ 15 անդամ շատցած է . Նիու - Յօրքի նահանգնին մէջ 1790 էն 1850 թ անդամ շատցած են բնակիչներն , Օհօյի նահանգնին մէջ 1820-40 քսան տարուան մէջ եռապատկած էր , իսկ 1820-51 քառապատկած է . այս թուոյն մէջ օտար երկրէ գաղթող քեմետպացոյն տեղ մի չեն գքաւեր : Մոռօ արժօննէս « Տարերք վիճակադրութեան » անուն գործոյն մէջ պատ-

կերով մի կը ներկայացնէ Եւրոպական այլ և այլ տէրութեանց քնակիչներու թուղոյն աճման ժամանակներն . ըստ այսմ

Պատի դքսութե .	մէջ	ժողովուրդն կրկնապատկեր	է	34	տրւան մէջ
Հունգարիոյ	»	»	»	38	»
Պելիբայի	»	»	»	42	»
Թուքանայի	»	»	»	45	»
Կալիցիոյ	»	»	»	45	»
Սարտենիոյ	»	»	»	44	»
Իռլանստայի	»	»	»	30	»
Յունաստանի	»	»	»	31	»
Բոլոնիոյ	»	»	»	52	»
Աւստրիոյ	»	»	»	32	»

Անդղիոյ մէջ 1801 էն մինչև 1876՝ 100 բնակիչն եղեր է 212 հոգի:

Մարդոց թիւն այսպէս կարէ կրկնապատկել , քառասպատկիլ , քառասպատկիլ ևն , առաւել կամ նուազ երկայն շրջաններու մէջ : Սակայն ձիշդ չէ թէ արտադրութիւնն թուաբանական յառաջատութեամբ կ'աճի միայն . վասն զի ահաւասիկ Միացեալ-Նահանգաց մէջ վիճակագրութիւնն կը ցուցնէ թէ որչափ որ արագ եղած է ժողովրդեան աճումն՝ արտադրութիւնն եւս աւելի արագ աճած է : Մի քանի թուեր բաւական լինին առ այս .

1790-1800 .	բազմամարդութիւն	35 , 02 %	աւելի ,	հարստութիւն	43 %	աւելի .
1800-1810 .	»	36 , 43 %	աւելի ,	հարստութիւն	39 %	աւելի .
1820-1830 .	»	35 , 49 %	աւելի ,	հարստութիւն	41 %	աւելի .
1830-1840 .	»	32 , 67 %	աւելի ,	հարստութիւն	41 , 70 %	աւելի ևն .

Զսոյն կարելի է ցուցնել նաև Գաղիոյ , Անդղիոյ համար : Ուստի ճշմարտութիւնն այս է , իրողութեամբք ապացուցեալ , թէ ապաւատի միջոցներն կրնան շատ աւելի արագ աճիլ քան ժողովրդն :

Բայց ասոի ինչ կը հասկնայ Մալթիւս ապրուստի միջոցներն ըսելով : Այս միջոցք որոշ և բացարձակ չեն . ինչ որ բաւական է նարովիցին սննդեանն համար՝ անբաւական է մի Անդղիացւոյ համար , և Աւստրալիոյ բնիկին համար բաւական սեպուած սնունդն նարովիցին համար խեղճուկ բան է : Կենաց պիտանութիւնք բայց այլ և այլ ժողովրդոց քաղաքակրթակրթական աստիճաննին , իւրաքանչիւր ընտանեաց գրից , իւրաքանչիւր մորդոց ճաշակներուն և սովորութեանցն համեմատ կը փոփոխին : Ի՞նչ սահման պէտք է որոշել սոցա համար՝ որպէսզի շնասնովն ենթարկէ ինքզինք բարոյական ձնչման :

Դարպի նոյն իսկ այդ ճնշման , որում մանաւանդ ժողովուրդն պարտի ենթարկել ինքզինք անչափ բազմամարդութեան աղետալի հետեւանաց առաջքն առնլց համար , այդ ճնշում գործադրելին է արդեօք ժողովրդեան համար : Յայտնի է թէ ժողովրդեան չուառ դասերն ամէնչն անուններն են . արդ իւր անձին վերայ բարոյական ճնշում ի գործ դնելու համար պէտք է որ բանականութիւնն քիչ շատ զարգացած լինի և իշխանութիւնն ստացած կրից վերայ . բայց ժողովրդեան թշուառ դասք , տգէտ անլոյն , ի կրից մանաւանդ կաւաջնորդուին և բնազդումներով կը գործեն : Այս պատճառաւ է որ արդէն ամուսնութիւնն ու որդենութիւնն աւելի շատ է աղքատ դասուց մէջ քան հարուստ և դիւրակեաց կարգաց մէջ որք՝ միջոց ունեցած լինելով զարգացնել իւրեանց միտքն՝ կրցած են իւրեանց բանականութեան աւելի իշխանութիւնն տալ բնազդմանց ու կրից վերայ : Ապա յայտնի եղաւ թէ եթէ այս միջոցն Մալթիւս ժողովրդեան աղքատ մասին համար կ'առաջարկէ՝ ապարդիւն է , քանզի դեռ շնասկանար , և յետոյ կենաց պիտոյքներուն մասին դժուարահաճ չէ՝ չունենալով բարձր կեանքի գաղափար :

Դարձեալ , Մալթիւս՝ տեսնելով ժողովրդեան մեծագոյն մասին չուառութիւնն , մանաւանդ գործաւոր դասին՝ իրաւունք ունեցած է երգակացնել թէ մի միայն բազմամարդութիւնն է պատճառ շարեաց : Յուի օրէնքներ , անարդար վարչութիւն , անիրաւ բաշխում , այլ և այլ արդելումներ աշխատութեան և

ըլքաբերութեան, մարդոց մէջ այլասիրական զգացումներու անշարժացեալ վիճակն և այլ այսպիսիք միթէ մեծ բաժին չունին ժողովրդեան թշուառութեան մէջ, և թշուառաց թիւն կարձեցընել թշուառութիւնն բառնալ կը նշանակէ : Երկրի վերայ այլ եւս տեղ չմնաց մշակելոյ համար . երկիրն այլ եւս իւր ընդերաց մէջ չունի՞ հարստութիւն մեզ պարզեւելոյ համար . սպառեցինք նորա ամսապատ ծոցն : Բնութեան թաքուն դանձերն շահագործելու համար ամէն հարկաւոր գիտութեան վերահասնե եղանք և ամէն գործն հնարեցինք : Նոյն խէլ այն դաշտերէն դոր կը մշակեմք՝ կը քաղմէմք այնքան արդիւնք որքան կարող են տալ մեզ եթէ գիտնամք և ուզեմք խնդրել : Մարդիկ ամէն ինչ ի գործ գրին . ամէն նախապաշարմունք ջնջեցին, ամէն արգել կործանեցին, ամէն հեռ մարեցին, ամէն զօրութիւններ միացուցին ի տալ ճարտարութեան բոլոր այն կարողութիւն, բոլոր այն ոյժ յոր կարէ հասնիլ, այս ամէնն ըրինք, և տեսանք թէ միշտ աւելի շատ մարդ կայ երկրի վերայ քան որչափ նա կարող է մնուցանել : Մալթիւսի վարդապետութիւնն այսպէս ահա մի յուսահատեցուցիչ վարդապետութիւն է, որով վկեանս խակ կը դնէ կենաց չարիքներուն պարտական, և կ'առաջարկէ ջնջել կեանքն երջանիկ առնելոյ համար զկեանս :

Յուն խնդրոյն վերայ խօսելով, էամէս չարիք է բազմամարդութիւնն աշխատասէր, արուեստագէտ, խելացի ժողովուրդ մի կարող է երջանիկ ապրիլ, նոյն խէլ երբ իւր երկրին ընդարձակութիւնն անհնան լինի . օրինակ հին Տիւրոս, Միդոն . դարձեալ ձենուփա, Աւենետիկ, և Հոլանտա, Պելճիդա ևն : Պէտք չէ միայն մարդոց ժանափառնէնն ի նկատ առնուլ, այլ և որոշութիւնն : Եւ յետոյ, խիստ ժողովուրդ մի խթան է աշխատութեան . այդպիսի ժողովրդեան մէջ կենաց կուին աւելի կրակու է և հետեւասէս աւելի արդասաւոր, աւելի հնարիչ :

Քայց անտարակաւսելի է թէ յորչափ կենաց պայմաններն ընդհանրապէս չեն բարւոքած, խոհեմ նախատեսութիւն մի կարեւորէ, որպէս յամենայնի, նոյնպէս և ամուսնութեան կարեւոր խնդրոցն ու ձնողութեան փափուկ վիճակին մէջ . սակայն

էական է սա կէտ թէ ոչ թէ կենաց պարտականութիւններն նուազեցնել ջանալու է, այլ մանաւանդ այդ պարտականութիւններն լնլոյ միջոցներ ստեղծել :

83. Ուրիշ տեսակէտով գիտելով, ամուսնութեան ազդեցութիւնն ժողովրդոց բարոյականութեան՝ առողջութեան և հետեւարար երջանիկութեան վերաբերութեամբ գիտուած է : Վիճակագրութիւնն ցոյց կուտան թէ այնշափ 23 տարեկան ամուրի կը մեռնի որչափ 43 տարեկան ամուսնացեալ մարդ : Այլք երկու անդամ աւելի կը մեռնին քան հասակալից ամուսնաւորք : Բարոյականի վերայ զաւակաց ազդեցութիւնն շատ զօրաւոր է . զի զաւակ ունենալ կը յորդորէ խոհեմ, աշխատասէր, խնայող լինիլ, մոլութիւններէ խուսափիլ : Յիմարութեան դէպքերն ոչ ամուսնացելոց մէջ աւելի յաճախ են քան ամուսնացելոց : 100,000 զաւակ ունենցող ամուսնացելոց մէջ 18 ոճիրք կը գործուին, խակ նոյն թուով զաւակ չունեցողներու մէջ 28 : Անձնասպանութեան դէպքերու մասին ամուրեաց և ամուսնացելոց մէջ եղած ամբուրեութիւնն շատ մեծ է . մինչդեռ 100,000 ամուսնացելոց վերայ 19 անձնասպանութեան դէպքեր կը պատահին, նոյն թուով ոչ ամուսնացելոց վերայ 33 անձնասպանութիւնք կը պատահին :

Աւելի շատ ամուսնութիւն կը լինի յԱնդպիա, ի Գերմանիա, ի Միացեալ-Նահանգս, ի Զուլցերիա քան ի Գաղիա . այս վերջնոյն մէջ աւելի քիչ զաւակ կ'ունենան ամուսնացեալք քան առաջնոց մէջ : Անշուշտ այս մասին առաջնոց ընթացքն է օրինակելի քան վերջնոյն (Գաղիա) ուր խնայողութիւնն ու նախատեսութիւնն թերեւու քիչ մի սեղմ կերպով կը հասկցուին :

Հարցարան : — 83. Ի՞նչ է Մալթիւսի օրէնք կոչուածն : — 84. Ի՞նչ անտեղութիւններ և սխաններ ունի այս տեսութիւնն : — 85. Ամուսնութեան ազդեցութիւնն ինչ է բարոյականի եւ առողջութեան վերայ :

ԴԱՎ ԺԷ.

Կ Ա Ռ Ա Վ Ա Բ Ո Ւ Թ Ի Ւ Տ

86. Մարդիկ կը կազմեն այլ և այլ առանձին խումբեր և ընկերութիւններ և ի միասին կ'ապրին . ի սոցանէ իրավանչիւրն ունի իւր առանձին շահերն բաց աստի , ընկերութիւնն մի ունի հասարակաց եղող հարստութիւններ և շահեր : Արդ այն մարմին , որ պաշտօն ունի անհատից շահերուն մէջ ներդաշնակութիւնն պահապանել և հանրական հարստութիւնն ու շահերն պահել ու մշակել , կ'անուանի ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ : Կառավարութիւնն կը գործէ յանուն օքնաց որ՝ սահմանադրական երկիրներու մէջ՝ ընկերութեան ներկայացուցիչներէն սահմանուած են և նոցա հաճութեամբ վաւերացեալ : Ընկերութիւնն դրած է նաև զօրունիւն կառավարութեան ձեռին մէջ այդ օրինաց գործադրութիւնն երաշխաւորելու համար : Կառավարութեան դերն կարեմք հետեւեալ կերպով համառօտել .

10. Հսկել արտաքին ապահովութեան . — Առ այս կառավարութիւնն կը պահէ ցամաքային և ծովային զօրութիւններ , և օտար կառավարութեանց հետ կը մշակէ դեսպանական յարաբերութիւններ .

20. Հսկել ներքին ապահովութեան . — Առ այս կառավարութիւնն ունի արդարութեան ատեաններ և ոստիկանութիւն .

30. Յաւելու ազգային (հանրական) դրամադլմոյն արտադրութիւնն . — Առ այս կառավարութիւնն ունի հասարակաց կրթութեան և հանրօգուած շինութեանց պաշտօնէութիւններ :

87. Կառավարութեանց իրաւասութիւնն կը բղսի անհատից իրաւունքներէն : Որովհետեւ մէն մի անհատ իրաւունքներ ունի զոր այլ անհատից պարտքն է յարդել , ինչպէս և իւր պարտքն է յարդել այլոց իրաւունքն , կառավարութեան պաշտօնն է հըսկել որ իւրաքանչիւրն անարդել վայելէ իւր իրաւունքներն , եւ կամ ուրիշ բառերով , հսկել որ անցնիւր ոք վայելէ իւր պատութիւնն , ինչ որ կ'ենթադրէ որ ոչ ոք բռնաբարէ այլոյ պատութիւնն : Արդ , որպէս կը տեսնուի , կառավարութեանց պաշտօնն է անհատական ազատութիւններն պահպանել բռնաբարումէ և հսկել որ ոչ զրկուի իւր իրաւունքներէն : Ըստ այսմ , երբ կառավարութիւն մի ճնշէ անհատին ազատութիւնն ու զրկէ զնա իւր անբռնաբարելի իրաւունքներէն , իւր իսկ պաշտաման ընդդէմ կը գործէ , կը կործանէ զայն ինչզոր պահպանել կարգուած էր :

Հին քաղաքակրթութեանց յատկանին էր չքայնել անհատն , ցեղին՝ ամբողջին գերին ընել զայն . նոր քաղաքակրթութիւնք կը չափուին այն ազատութեան չափով որ կը տրուի անհատին : Պատմական օրինք մի է թէ Յառաջդրէննեւն իսուոր կը համեմատէ մարդոյն է վերայ մարդոյ է գործ դրած նշանական ներդրմաննեւն և ուղղի կը համեմատէ մարդոյն է վերայ իրայ է գործ դրած աղբեցունեւն ներ :

88. Նոյն իսկ երբ կառավարութիւնք մերկանան այն ամէն իրաւունք որ չէ իւրեանց և սահմանափակին իւրեանց պաշտաման յատուկ շրջանակին մէջ , գարձեալ յայնու իսկ սահմաններ կան և կանոնք հարկաւոր են : Խնդիր է , զորօրինակ թէ մինչեւ ո՞ր աստիճան պէտք է որ կառավարութիւնն հանրային կրթութեան ուղղութեանն ու եղանակին հսկէ . թէ պէտք է որ հանրային շինութիւններն ինքն ստանձնէ թէ անհատական նախաձեռնութեան թողու . թէ պէտք է որ ինք ընէ թղթատարութեանց հեռագրատանց տեսչութիւնն , ինք բանեցնէ երկաթուղիներն , փարոսներն վառէ . թէ կարող է մենավաճառներ ի գործ դնել , ևայլն : Կարելի չէ ասու պետական վարչութեան

իւրաքանչիւր ճիւղի քննութեան մոռնել , բաւական է երկու ընդհանութեան ցոյց տալ , որ արդիւնք է բազմաթիւ դիտութեանց . սոքա են .

Ա. Ըստ այն սկզբան թէ բան մը ընելու մէջ շահ ունեցող անհատք զայն ինչ լաւագոյն կ'ընեն քան զայնո որք շահ չունին նորա մէջ , պէտք չէ որ կառավարութիւնն ընէ ինչ որ կարող են ընել մասնաւորք :

Բ. Պետութիւնն պարտի ասլահովել անցնիւր ումեք իւր կարողութեանց աղատ կիրառութիւնն , այն է աշխատութեան ազատութիւնն : — Պէտք չէ որ կառավարութիւնն խոչընդուն լինի որ և է մարդկային գործոյ որ , բանարարութեամբ կամ խարդախութեամբ արատաւորեալ լինելով , ոչ ումեք վլաս կռւտայ :

Փորձով յայտնուած բան է անհատական արտադրութեան ի ձեռն պետութեան արտադրութեան վերայ ունեցած առաւելութիւնն . պետութիւնն թէ աւելի ուղղ և թէ աւելի գէշ կ'արտադրէ քան մասնաւորներն : Պետական վարչութիւնք ընդհանրապէս շռայլ են . անցնիւր գործակալ ապահով լինելով իւր պաշտաման վերայ փոյժ չունի լու և շատ աշխատիլ . պետական վարչութիւնն կարող չէ դիւրաւ համակերպիլ՝ ճիկիլ պիտոյլ յից . նորա ձեռքով հիմնուած հաստատութիւնն մի՛ որոյ անօդուտ լինելն տեսնուած է՝ շուտով չվերնար . ի նմա գործածուած պաշտօնեայք միշտ իրաւունք ունենալ կը կարծեն տէրութենէն գործ մ'ունենալ . և շատ տեղ տէրութիւնն պատասխանատու չէ և ինք չկրեր զուղղակի հետեան իւր ընթացից : Սուքա են համառօտիւ արտադրութեան մասին պետական անձեռնու հասութեան պատճառներն :

Ըստ Բ. սկզբան պարտի պաշտպան լինել փոխանակութեան ազատութեան : Իւր այս պարտականութեան դէմ կը գործէ կառավարութիւնն հաստատելով պաշտպան նիհեր (tarif) : Ըստ նոյն սկզբան , կարծեաց և բարուցյանցանքներ պատժելի չեն ի նըմանէ , և կրթութիւնն պէտք չէ որմենավաճառ ընէ : Որպէս զի իրապէս պաշտպանէ անցնիւր ուրուք պատութիւնն ու իրաւունք

ներն , հարկ է որ արդարութիւնն լինի ճրի , մինչդեռ բազում ուրեք աղքատիկ իրաւատէրն կը զրկի չկարուղանալով բաւել այն ծախուց զոր արդարութիւն կը պահանջէ իւրմէ : Երբ կառավարութիւնն կ'ստանձնէ մի ճարտարութիւն հանրօգուտ , պէտք չէ որ լինի շահադէտ , այլ իւր ծառայութիւններն պարտի մատուցանել հասարակութեան նախնական գնով : Բացարձակապէս կը մեղանչէ կառավարութիւն մի և կը վեստի հասարակաց շահուն և ճարտարութեան զարգացման՝ երբ կը ճեռնարկէ ի գործ դնել իւր հաշուոյն արդէն մասնաւորներէ ի գործ դրուած ճարտարութիւններ և կ'ենէ մրցիլ նոցա հետ . զի այդ մրցում անհաւասար է . կը խանգարէ արտադրութեան բնական կարգն և կը սպաննէ մասնաւորաց ճարտարութիւնն : Կառավարութիւնն ոչ վաճառական և ոչ արուեստավետ պարտի լինել :

89. Կառավարական մեքենայն ունի իւր այլ և անիւրներն որք միմեանց հետ առնչակից են և զիրար կը դարձնեն . կեղրոնին շուրջ ճիւղերն կան , և անցնիւր ճիւղ կեղրոնն է այլ երկրորդական ճիւղերու . կայ մի վարչական նուիրապետութիւն (hiérarchie) : Երկրի մի վարչութիւնն բոլորովին կեղրոնականութեան (centralisation) թէ բոլորովին սալակեղրոնականութեան (décentralisation) գրութեան վրայ պէտք է որ հիմնեալ լինի , այս ինքն թէ ճիւղերն բացարձակապէս կախեալ պարտին լինել կեղրոնին , թէ յիրերաց անկախ և ուրոյն գործունէութիւն մի պարտին ունենալ : Առ այս չէ կարելի բացարձակ կանոն մի սահմաննել , զի ամէն աղգեր նոյն վիճակի մէջ չեն գտնուիր , և մի կամ միւս դրութիւնն ըստ պարագային՝ առաւել յարմար կը թուի : Սա ստայգ է թէ միջին համերայն լաւագոյն է , որովհետեւ երերկու գրութիւնք իւրեանց լաւագութիւններն ունին , և թէ կառավարելի աղգին բարոյական և ընկերական կացութեան համեմատ պէտք է առաւելութիւն տալերկու դրութիւններէն միոյն ի վերայ միւսոյն : Բացարձակ ապակեղրոնականութիւն մի պկար մասերու կը կոտորակէ ինչ որ պիտի լինէր մի զօրութիւն՝ եթէ միացեալ լինէր և ուղղուէր մի և նոյն շնչով և ոգւով . իսկ չա-

փաղանց կեղրոնականութիւն մ'ալ ճիւղերն կը դատապարտէ անզգայութեան, անտարբերութեան՝ զայնս անհաղորդ գործեւ լով իւրեանց բախտին ու շահուց որոշման : Յայտնի է թէ որքան աւելի ճիւղերն են լուսաւորեալ և կարող ինքնակառավարութեան, այնքան աւելի ապակեղրոնականութեան պէտք է որ հակի երկրին դրութիւնն :

90. Պետութիւնն արտաքին կառավարութեանց վերաբերութեամբ կը ներկայացնէ ազգային շահերն : Նոցա հետ իւր քաղաքականութիւնն, տնտեսական տեսակէտով, պէտք է որ նպաստաւոր լինի համազգային փոխանակութեանց, փոյթ ունենայ համազգային դաշնադրութիւններ հաստատել, չափերու, կը ուոց դրամոց, երկաթուղիքաց և թղթատարութեանց գիներու, և այլն նոյնութիւն գոյացնել. պէտք է որ չակասակի բնաւ օգտակար ձեռնարկութեանց, որչափ և շահաւէտ լինին նոքա զրացի ժողովրդեան մի համար . և այս յաճախ ոչ միայն մարդկային շահու, այլ և նոյն իսկ ազգային շահու տեսակէտով . զի կը լինի որ ինչ որ այլում միայն օգտակար կը համարէինք՝ մեղ կը լինի շահարեր ճամէնէն աւելի . բաւական է յիշել Անգղոյ հակառակութիւնն Սուէիչի ջրանցքին բացման, յորմէ ինքն եղաւ յետոյ ամենէն աւելի օգտողն :

Հարցարան. — 86. Ի՞նչ է կառավարութիւնն . . ի՞նչ է իւր դերն: — 87. Անհատին ազատութեան նկատմամբ կառավարութեան պարտաւորութիւնն ի՞նչ է : 88. Ի՞նչ ընդհանուր սկզբանց ենթարկուած պարտի լինել կառավարութեան իշխանութիւնն : — 89. Կեղրոնականութիւնն է օգտակար թէ ապակեղրոնականութիւնն: — 90. Արտաքին կառավարութեանց նկատմամբ ինչպէս պարտի լինել պետութեան քաղաքականութիւնն :

ԴԱՍ ԺԹ:

ՀԱՐԿ (IMPROVIS)

91. Որպէս զի կառավարութիւնք կարենան մատուցանել այն ծառայութիւններ որք կը պահանջուին իրենցմէ, հարկ է որ ժողովուրդը վճարեն այդ ծառայութիւններ, այսինքն փոխարինեն կառավարութիւնն կարմող պաշտօնէից աշխատութիւնքն: Որովհետեւ առ այս հարկ եղած գումարն ամբողջապէս չէ կարելի ճեռք բերել այն փոխարինութեամբք զորս կառավարութիւնք կ'ստունան ի մատուցանել հասարակութեան ինչ ինչ ծառայութիւններ, զորօրինակ թղթատարի, հեռագրի, կամուրջներու և այլ այսպիսի վճարմունք, կամ հանրական կարուածոց (անտառ, հանք, եւայլն) շահագործումն, պէտք է որ ժողովուրդը մի բուռք վճարէ մասնակցելու համար հասարակաց ծախուց: Այս տուրքն է որ կանուանի ՃԱՐԿ (impôt) : Այս բառ դեռ իւր մէջ կը պահէ հին իմաստն ժողովրդական արոց: Կամինի ընկերութիւնն հաստատուած էր զօրութեան վերայ և ոչ աշխատութեան. այդ ընկերութեան տեսականն էր ապրիլ այլոց աշխատութեամբ: Աւստի և ազգք կը պատերազմին ճընչ չել այլ ազգեր որպէս զի իւրեանք անաշխատ տարին գերեալ ժողովրդոց աշխատութեամբ՝ զորս հարկատու կը կացուցանէին ինքեանց . այսպէս հարկին մի նուաստացուցիչ բան ունէր յինքեան, և նոյն իսկ ժողովուրդն իրբե: Հսկատակութեան նշան կը հասուցանէր զայն իր վեհապետին: Այս հարկն ՔԼԻԱՆԱՐԻ անունն ունէր իրբեւ փոխարէն զվարյն՝ կենաց զոր յաղթողն համեր էր չնորհել յաղթելոյն: Աղանդուի լինել պատուոյ նշանակ էր, որպէս մեծամեծք և աղնուատոհմք էին հին ընկերութեան մէջ: Այժմ այս անուամբ առնուած տուրքն մի մասնակցութիւն, մի բաժին, մի նորասա (contribution) է զոր ընկերութեան անցնիւր

անդամն կը բերէ այն հասարակաց արկղին որով պիտի հոգաց ուին հասարակաց պիտոյք :

92. Հստ ժամանակաց և ըստ տեղեաց հարկերն այլ և այլ ձեւեր առած են . մերթ ըստ մարդ , ըստ գլուխ , մերթ ըստ երդ , մերթ ըստ պատուհան և կամ տասանորդի ձեւով առանուած են հարկերն . և ցարդ ըստ ազգաց կը տարբերի հարկաց դրութիւնն : Բաց աստի , հարկերն են զանազան . և թէ այս խնդիր եղած է միշտ մի ժարկ հաստատել , բայց այս միութիւն միայն բաղձակի խտէալ մի մնացած է ցարդ և պիտի մնայ թերեւս տակաւին շատ ատեն , քանզի շատ դժուարին եղած է երեւակայել մի տուրք , մի ձեւ տրոց որով ամեն մարդ կարենայ անխուսափելի և արդար կերպիւ մատնակցիւ հանրական ծախուց :

Հարկերն երկու ընդհանուր դասերու կը բաժնուին , ուիզակի (imprôts directs) և առօդզակի (imprôts indirects) : Այն հարկերն , որք վճարողին վերայ կը մնան , ուղղակի են , ինչպէս գետնի , տանց , շինութեանց , արուեստից , ժառանգութեան և ստացուածոց սեփականացման , ծառայից , շանց , կառաց համար վճարուած տուրքերն . իսկ այն հարկերն , զորս առաջին անդամ վճարողն կ'ստանայ ուրիշներէն՝ յաւելլով զայն այն օգտակարութեանց գնոյն վերայ որոց համար վճարեց և զորս կը ծախէ այլոց , ինչպէս են ընդհանրասկէս վաճառականութեան նիւթոց համար վճարուած հարկերն և դրուի տուրքերն : Բայց յաճախ գժուարին է գիտել թէ վճարուած հարկ մի ուղղակի է թէ անուղղակի . յաճախ մինեանց հետ կը շփոթին , և նոյն հարկըն ըստ պարագային կարէ ուղղակի լինել կամ անուղղակի . զրօրինակ՝ երբ իմ տանս համար՝ յորում ես կը բնակիմ՝ տուրք կը վճարեմ , այս տուրք ուղղակի է , վասն զի չեմ կարող վերստանալ զայն մի ուրիշէ . իսկ եթէ վարձու տալով՝ այդ տուրքն բարդեմ վարձագնոյն վերայ , կը լինի անուղղակի . բայց եթէ տանց խնդրանքն քիչ լինի՝ այն ատեն նոյն իսկ վարձու տալու ատեն կարելի չլինիր տուրքն յաւելու վարձագնոյն վերայ եւ դարձեալ կը մնայ ուղղակի . այսպէս եւ այլ ուարագ տներ :

93. Հարկաց բաշխման և հաւաքման ըստ տնտեսագիտական օրինաց կատարմանն համար հետեւեալ չորս կանոնաց ու շաղրաւթիւն ընել կը ուատուիրէ Աստամ Ամիթ :

Առաջին . Հաւաքման կամ համեմատութեան կանոն . պէտք է որ անցնիւր անհատ ըստ իւր կարողութեան մասնակցի տրոց , այսինքն ըստ կարեւորութեան այն շահուց որոց պաշտպանութիւնն կը վայելէ կառավարութեան միջոցաւ . այս տրոց արդարութեան սկզբունքն է : Ոմանք արդարութիւնն հարկն հասարաւուան (fixe) ընելու մէջ գտած են . այսպիսիք կը պահանջեն որ հարկն մի և նոյն լինի ամենուն համար , թէ հարուստ թէ աղքատ . սոքա արդարութիւնն անարդարութեան մէջ կ'որոնեն . քանի որ ամենուն աշխատութիւնն ու սեփականութիւնն , զորս կը պաշտպանէ կառավարութիւն , չունին նոյն արժէք , ի՞նչպէս կարելի է պահանջել որ ամէն ոք հաւաքմար արժեւ մի հատուցանէ փոխարէն ընկալեալ մի անհամառ ժամանակութեան : Ոմանք արդարութիւնն կը գտնեն համեմատականութեան մէջ (proportionalité) և կուզեն որ իւրաքանչիւր ոք սատ իւր կարողութեան վճարէ տուրքն . այսինքն 100 կարողութիւն ունեցողն եթէ վճարէ 1 , 200 ունեցողն վճարէ 2 , 300 ունեցողն վճարէ 3 և այսպէս հետպէս . զայս կ'ընդունի նաև Աստամ Ամիթ , և այս է արդար : Այլք արդարութիւնն կը գտնեն յարաջարաւութեան (progression) մէջ , և կը պահանջեն որ 100 կարողութիւն ունեցողն եթէ վճարէ $1^0\%$, 200 ունեցողն վճարէ $2^0\%$, 300 ունեցողն $3^0\%$, 400 ունեցողն $4^0\%$, և այսպէս հետպէս . այս գրութեամբ հարկն կը հասնի մեծ գումարներու , կը յուսահատեցնէ խընայողութիւնն և երկրուն կը փախցնէ զբանագլուխներն որք կ'երթան այլուր առաւել ապահով ու շահարեր գետին մի փընառել :

Երկրորդ , Առուժութեան կանոն . պէտք է որ հարկերն լինին որոշ և ոչ քամհամ կերպիւ պահանջուին . վճարման ժամանակն , եղանակն , կարեւորութիւնն քաջածանօթ և բայցայատ պարտի լինել : Առանց այս պայմանին հարկահանք կարեն ժողովրդին հարստահարել ըստ քմաց հարկ ուահանջելով , և կամ կաշառ

ընդունիլ հարկն իջեցնելու համար : Այս տեսութեամբ վաճառք ներու վերայ գրուած տուրքն ըստ արժեքին (ad valorem) պէտք չէ լինի , այլ ըստ քանակութեան , քանզի այն ատեն շատ զեղծ մունք և խարդախմունք կարեն գործուիլ , իրաց արժէքն կարենալով ծածկուիլ կամ չափազանցուիլ :

Երրորդ . Պատշաճութեան կանոն . հարկերն պէտք է որ ժողովուին ի դէպ ժամու և պատշաճագոյն եղանակաւ . ապաժամ հարկ մի մեծ վնաս կարող է պատճառել ժողովրդեան՝ պահանջուելով յայնպիսում պահու , ուր գրամոյ մեծ պէտք ունի նա . դարձեալ լաւ է որ մանաւանդ աղքատիկ դաւառացիներէն եւ գիւղացիներէն հարկն կոտորակուելով և մի քանի մասնավճար ներով առնուի . վերջապէս , իրիւ ժողովրդեան բարւոյն հսկող մարմին , կառավարութիւնն պարտի դիւրութիւններ ընծայել ժողովրդեան :

Չորրորդ . Խնայողաւթեան կանոն . այս կանոնի համեմատ պէտք չէ հաստատել մի այնպիսի տուրք որոյ հաւաքումն շատ գործակալաց և ծախուց կը կարօտի , այնպէս որ ժողովրդեան քըսակէն ելած գումարին շատ քիչն մտնէ վարչութեան գանձն ու ծառայէ իւր նպատակին . և ընդհանրապէս խօսելով որ և է արոց հաւաքման մասին հարկ է ունենալ զայս զգուշութիւն : Դարձեալ պէտք չէ հաստատել մի այնպիսի տուրք որ խանդարում կը պատճառէ վաճառականութեան կամ բերքերն ու արտադրութիւնքն կը սուզցնէ : Պէտք չէ որ ոչ ժամանակի և ոչ գրամոյ լինի ընդունայն :

94. Փոխարէն արոց զոր կ'ստանայ՝ կառավարութիւնն պարտի ծառայել հասարակութեան և յօգուտ հանրական շահուց ի կիր արկանել գանձեալ գումարն : Կը մեզանչէ կառավարութիւնն՝ երբ ինքզինք նկատելով մի առանձին մարմին որ ունենայ իւր առանձին շահեր հակառակ ժողովրդեան շահուց , ուշ զնէ միայն յաւելուլ ժողովրդեան տուրքերն և փոխարէն չմաս-

տուցանէ դիւրութիւններ : Պէտք չէ երբեք որ կառավարութիւն մի տուրք դնէ մինչեւ որ նորա հարկաւորութիւնն զգացուի . և երբ կառավարութեան հասոյթք կ'սկսին լիովին բաւել կառավարական ծախուց , յայնժամ պէտք է թեթեցնել հարկաց բեռնն : Ոմանք կը կարծեն թէ կառավարութեան ժողոված ըստակն եթէ երկրէն գուրս չելնէ՝ միշտ առ ժողովուրդն կը դառնայ կառավարութեան վճարումներուն և գնմանց միշոցաւ , և հետեւապէս ծանր տուրքեր չեն վնասեր երկրին : Այս իմաստափառութիւնն հերքելու համար բաւ է հարցնել թէ կառավարութիւնն կամ զայն կազմող պաշտօնեայք ձրի՞ կը դարձնեն այդ ստակն ժողովրդեան եթէ ոչ փոխարէն ստանալով արտազրութիւնք , արժէք . ըսել է որ ժողովուրդն նախ իւր դրամն կուտայ , յետոյ կառավարութեան դրամին փոխարէն իւր վաճառքն , այսինքն թէ կը կին անդամ կը վճարէ . եթէ պաշտօնեայք սպառեն առանց արտադրելու և կառավարութիւնն ծախսէ անօդ դուտ ու անշահարեր իրաց համար՝ դրամագլուխոց սպառումն , կորուստն ակներեւ է :

Հարցարան . — 91. Ինչ է հարկն : — 92. Քանի՞ տեսակ են հարկերն : — 93. Ինչ են հարկաց մասին Ատամ Սմիթի նշանակած կանոններն : — 94. Տրոց գործածման մասին կառավարութեան պարտքն ի՞նչ է :

ՄԱՍՆ Գ.

ՍՊԱՌՈՒԻՄՆ

Դ Ա Ս Ի.

ՄԱՍՆԱԿԱՐ ԵՒ ՀԱՅՐԱԿԱՆ ՍՊԱՌՈՒԻՄՆ

95. Սպառումն է հասնաւոք (consommation privée) և հանրական (consommation publique) : Մասնաւոր սպառումն այն է որ կը լինի գոհացներու համար անհատական և ընտանեկան պէտերն . Հանրականն այն է որ կը լինի ի ճեռն վարչութեան մի երկրի ընդհանուր պիտոյից գոհացման համար :

Փ. Պ. Աէյ ալ երկու կարգ սպառում՝ կ'որոշէ . Անարդարութեան սպառումն (consommation improductive) և Վերաբարութեան սպառումն (consommation reproductive) . առաջինն է այն որ կը լինի մեր պիտոյից և բաղզանաց ուղղակի լցման համար և որ արժէքն կը չնցէ առանց նորա տեղ դնելու մի ուրիշ արժէք . իսկ երկրորդն կը չնցէ մի արժէք նորա տեղ դնելու մի այլ արժէք դնելու համար . այսպէս են ճարտարութեան իրեւու գործի սպառուող դրամագլուխը : Այս երկու տեսակ սպառման մէջ ալ օգտակարն ու անօգտատն կայ : Չեմք կարող ըսել թէ ապարդիւն կ'սպառի տմէն ինչ որ մեր պիտոյից համար կ'սպառեմք . որովհետեւ սպառուած նիւթեղն մեր կեանքն եւ մեր կարողութիւններն կը պահպանեն ու կը զարգացնեն , ամէն ճարտարութեան սուաջին պայմաններն . և յետոյ ճարտարութեան , արտադրութեան նպատակն արդէն ուրիշ բան չէ բայց եթէ մեր պիտոյիքն լցող նիւթերն արտադրել : Սակայն անօգուտ ըստ պառում ալ կայ , այսինքն շւայլօրէն վատնուած հարստու-

թիւններն որք էական՝ պէտք մի չեն գոհացներ և տեւական ու իրական հաճոյքներ չեն տար մեզ նոյնպէս և ճարտարութեան մէջ յումզիտս կը վատնուին զրամագլուխք երր կ'արտադրեն մի այնպիսի բան որոյ արժէքն չէ կարող վերակազմնել սպառուած դրամագլուխն , ինչպէս մեծ ծախքով տալուած անխմաստ ու անպիտան գիրք մ'որ ընդունելութիւն չգտնէ և որ միայն իրեւու անմաքուր թուղթ արժէք մ'ունենայ : Ըստ այսից հարստութեան սպառումն պէտք է լինի միշտ հաշուով և զգուշութեամբ այնպէս որ՝ եթէ անարտադրիչ է՝ գէթ մի իրական պէտք լնու կամ մի ճշմարիտ հաճոյք տայ , և եթէ վերաբարադրիչ՝ արտադրեալ նոր հարստութեամբ կարենայ վերակազմուիլ սպառուած դրամագլուխն :

96. Հանրական ծախուց պիւճէն կը կազմուի ոչ թէ հիմ ընդունելով ներկայ հասութից գումարն , այլ երկրին պէտքերն , և ըստ այն պիտոյից կը սուհմանուին կամ կը սուեզծուին հասցիք : Մասնաւոր կամ ընտանեկան պիւճէի մը համար նոյն եղանակին պէտք է հետեւիլ թէ ոչ . ծախքերն ընտանեաց հասութիքն վերայ պէտք է չափել և ձեւել եթէ ոչ հասոյթն ծախուց համեմատել : Շատերն կը խորհին թէ պէտք է առաջին եղանակին հետեւիլ այնքան ծախսել որչափ մարդ կը շահի , և նոյն խոկ խնայութեան բաժինն ալ հաշուելով : Ճշմարիտ անտեսագիտութիւնն կ'ուսուց ցանէ մեզ աշխատիլ մեր պէտքերն լաւագոյնն գոհացնելու համար . արդ եթէ որ զրկէ զինքն կարեւորէն խնայելու և հարստութիւն դիմելու համար , ի՞նչ օգուտ այդ հարստութենէն իրեւան համար : Կարէ ըսուիլ թէ տէրութիւնք կարող են իրեւանց ծախուց քանակութեան վերայ հիմնել իւրեանց պիւճէն , քանզի բացն միշտ կարեն գոցել նոր տուրք մի հաստատելով , բայց թէ անհատք չեն կարող այդպէս ընելքանի որ առձեռն պատրաստ աղբիւր մի չունին : Այն , ճշմարիտ է թէ չունին , բայց դարձեալ պէտք է նոյն ձեւով պատրաստել ընտանեկան ելմբացոյցն , որովհետեւ անդամ մի որ ընդունին ամ սկզբունք թէ իւրեանց պիտոյից համեմատ պիտի անօրիններն իւրեանց հասու-

թից գործածումն, այն ատեն անբանաւոր խնայողութիւններ չեն ընկը, կը ծախսեն իւրեանց կարեւոր պիտոյից համար քանի որ ունին կարողութիւն, և եթէ շունին՝ կը մզրւին հասոյթ ստեղծել, իւրեանց աշխատութիւնն աւելի շահաբեր ընել որպէս դէ կարենան հաւասարակոն իւրեանց ելտացոյցն :

97. Երբ առանց զանձն զրկելու օրինաւոր վայելումներէ՝ կը խնայէ որ, այն ատեն խնայողութիւնն մի առաջինութիւնն է, — եւ արդէն ամէն մարդ պարտի ջանալ շահիլ այնպէս որ թէ իւր օրինաւոր պիտոյք լցուին և թէ կարենայ քան մի խնայել, — այն ատեն դրամագլուխ մի կը պատրաստէ մարդ որ պիտի օգնէ իւրեան աւելի հեշտ ասլրելու և ապրեցնելու իրեններն քայլ խառնել խնայողութեան նոցա ձեռք տալով մի ժանշանակ (tirelire) որպէս զի ինչ որ անցնի իւրեանց ձեռքն հոն նետեն և պահեն, այս ունակութիւնն մի կիրք կը դառնայ և տգեղ ու յիմար ագահութիւնն արմատ կը կապէ մանկանց մատաղ հոգւոյն մէջ :

Աղահութիւնն մի մոլութիւնն է և կը թշուառացնէ զայն որոյ վերայ կը բռնանայ ագահն գերին է մի կրքի . նորա համար, նորա հաճոյից համար կը տքնի ու կը զրկի և կը զրկէ : Հակառակ մոլութիւնն է լուայլութիւնն որ ոչինչ նուազ աղիտարեր է շուայլն կը վայելէ ու վայելել կուտայ մի կարծ ժամանակի համար, յետ որոյ պիտի գայ զրկումն, թշուառութիւնն :

98. Ընտանեկան կարեւոր պէտքերն են սնունդ, զգեստ, ընակարան, կահք, գաստիարակութիւն, զրուանք . այս պէտքերն հարկ է որ գոհայում ստանան, և օրինաւոր կերպով . գոհացնել զայնս ողորմելի կերպով՝ գոհացնել չէ : Պէտք է որ սնունդն լինի լաւ, գոհացուցիչ, մսեղին և բանջարեղին: Պէտք է որ զգեստն ալ յարմար լինի եղանակին և հասակին ու սեռին ու քիչ շատ վայելչութիւնն ունենայ՝ ինչ որ մեծ ծախուց կարօտ չէ, վասն զի կարելի է ճաշակն դոհացնել առանց մեծամեծս ծախս:

սելու : Պէտք է որ քնակարանն լինի օդաւէտ, ննջելու՝ ճաշելու՝ նստելու համար յատուկ սենեակներ ունենայ, լաւ դիրք ունենայ, լցուա ազատ թափանցի ներս և վերջապէս ողջապահի կանոնաց համեմատ լինի կազմուած : Կահերն ես կարեւոր են . ոչ միայն մեզ դիւրութիւն ընձեռող կահերն ու անօթներն պէտք է որ գանուին տան մէջ, այլ և քիչ շատ ճաշակի հաճոյ լինին և ընտանեկան յարկին վայելչութիւն տան ու միրելի առնեն զայն : Խակ համրկ է ըսելթէ տղայոց զաստիարակութիւնն քանիօնն կարեւոր է, զի եթէ ծնողք վանան տալ կրթութիւն իւրեանց որդւոց, սոցա մտաւոր և բարոյական կարողութիւնք կը մնան անհակ և խոպան, և ինքեանք կը լինին անօդուտ : Եւ սակայն յաճախ ծնողք՝ առ տղիտութեան՝ աւելորդ շոայլութիւն կը համարին կրթութեան ծախքն, չգիտնալով թէ ամէնէն արդիւնաւոր ու սպասումն է այն որ մարդոյն արտադրական գերագոյն կարողութիւնքն մշակելու և զարգացնելու կը ծառայէ :

99. Այս կարեւոր պիտոյից գոհայման հետ պէտք է ջանալ խնայել : Տան մասակարարութեան մէջ կարգ կանոն մեծապէս կը նախատէ խնայութեան : Իրերն ժամանակին և՝ ըստ պարագային՝ մեծաբանակ գնել, տեւականութեանն ու օգտակարութեանն ուշ ունելքան արտաքին վայանցիկ վայլին, չշայլել անխօրհուրդ, գործածուած իրերէն՝ եթէ կարելի է՝ տարբեր ձեւոյ տակ օգուտ քաղել, այս ամէնն կը գոյացնէ խնայողութիւն, և այն առանց զմեղ զրկելու :

Աշխատաւոր ընտանեաց համար խնայելու լաւագոյն միջոցն է Աղահովագրական ընկերութեանց մասնակցիլ, որոց վճարելով տարեկան մի փոքրիկ գումար՝ կ'աղահովեմք մեր ինչքն կոռըստեան վատանգաց դէմ, մեր ընտանեաց և զաւակաց ապրուուտըն արկածից ու մահուան դէմ, կանխաւ մեր զաւակաց համար կը պատրաստեմք զրամագլուխ մի : Այս այլ և այլ ծառայութեանց համար հաստատուած կան այլ և այլ աղահովագրական ընկերութիւնք, աղահովագրութիւնն ընդունէ հրդեհի, աղահովագրութիւնն ընդունէ արկածից, ևա : Աղքա մարդոց մէջ համերաշնութեան սկզբան գործադրութիւնն

Են: Սոցա շնորհիւ գործաւորն, խնայելով և վճարելով մի փոքրիկ գումար, կարող կը լինի անհոգ քնանալ զիշերն ապահով թէ հետեւեալ առաւօտ յանկարծ անտոն անյարի չպիտի դտնէ ինքզինք, կամ իւր կինն ու զաւակունք չպիտի մնան անտէրունջ անհաց: Առանց այս ընկերութեանց դիմելու կամ ուրիշ որ եւ է համերաշխական ընկերութեանց մասնակցելու, գործաւորն չյաջողիք շատ անդամ իւր խնայութեամբք կարեւոր և օգտակար դրամագլուխ մի բազմել:

100. «Ինչ որ կարեւորէն անդին կ'անցնի» պահանջուննեան (խշէ) այս սահմանն կուռան ոմանք բայց կարեւորին ու աւելրպին սահմաններն գանել դժուարին է. ինչ որ միոյն համար աւելրիդ է՝ այլոց համար կարեւորագոյն է. կախումն ունի ընկերական դիքքին, միջավայրէն յորում կ'ապրինք, ճաշակներէ, ևա: Բայց ընդհանրապէս պահանջութիւն կը կոչուի այն սպառումն զոր կ'ընեմք ցոյց տալու համար զմեր կարողութիւն, առ ցուցամոլութեան. վասն զի, որպէս տեսանք, գեղեցին զդացումն կարելի է գոհացնել նուազ ծախիւք և երբեմն անձախ խոկ:

Պահանջութիւնն նոյն իսկ խելացի մարդոց մէջ որպէս էր Վոլդէր, գովարաններ ունեցած է: Ըստ այսպիսեաց՝ ո՛քափ աւելի վատնէ կարող՝ այնքան ճարտարութիւնն կ'երագի և աշխատութեան խնդրանքն կ'աւելնայ: Այսպէս խորհողներ չեն մտածեր թէ երբ պահամոլութեամբ և յիմար ծախօերով շսպառի հարստութիւն, սիտի սպառի/այն վերարտադրիչ եղանակաւ իբրեւ զրամագլուխ և հետեւեաբար միշտ պիտի երագէ ճարտարութիւնն ու այն մշանջնենաւոր կերպիւ, մինչդեռ շուայեալ հարստութիւնք կը վճանան ընդ միշտ: Եթէ լինէր ստուգիւ որպէս կը խորհին, պէտք է որ բնաւ թշուառութիւնն չինէր անդուր կայ ծայրայեղ շուայութիւն: ընդհակառակակն ծայրայեղ չըսուառութիւնն ընկերն է անմեկին ծայրայեղ պինամութեան, շուայութեան: ինչպէս արեւելեան պետութեանց մէջ ուր անշափ է տիրող դասուն շուայութիւնն, ինչպէս երբեմն ի Հռովմ:

ի Մատրիտ, ի Վերսայլ: Շուայլութիւնն, կործանելով անդարձապէս հարստութիւններն, կը կործանէ տունն, պետութիւնն, թէ եւ կը խարէ ի սկզբան առժամեայ փայլով, և գործոց խարսումիկ շարժում մի ստեղծելով: Պահանջութեան պաշտպանք կ'ըսեն նաև թէ ծախսել զրդուելով կը դրդէ նաև յաշխատութիւն. — այն, բայց որովհետեւ օրինաւոր վաստակով չէ կարելի այնքան յիմար ծախսուց զիմազրել, կը մղէ նաև յանրարույականութիւն, կը մղէ ամէն ապօրէն միջոցներով հայթայթելու այն գումարներն որոց պէտք ունի ոք պնամանլ ու զեղին կեանքի մը համար. և այս է սովորաբար շուայլ մարդոց շահելու եւ զանակն: Աւելի կը յառաջանան կաշառակուրծ դատաւորիք, անհաւատարիմ պաշտօնեայք, յափշտակով և զրկով մեծամեծք, ևա:

101. Պահանջութիւնն օրէնքներով արգելու անկարելի է, որպիսի կային երբեմն ի Հռովմ (lois somptuairec), յեւրոպա, և կան յեւրեւելեան ինչ աշխարհո՞ւ այդպիտի օրէնք: Այս անկարող են. զի սա բարուց գործ է. պէտք է որ մարդիկ համուտին ունայն ծախսուց վնասակարութեան, դրամագլուխն օգտակարութեան վերայ. և՝ տնտեսագիտական օրէնքներուն տեղեկանալով՝ ունին օգտակար պաղել այն հարստութիւններէն որք իւրեանց ձեռաց մէջ կը գտնուին:

102. Գալով հանրական սպառման, սորտ վերայ աւելորդ կը համարիմք խօսիլ՝ քանի որ Կառավարութեան և Հարկի զիմոց մէջ խօսած եմք բաւական հանրական ծախսուց մասին. հոս կ'ուզեմք սա՛ յաւելութէ հանրական հաստատութեանց ու հանդիսից մէջ զարդարակիրութիւնն ներելի է միայն մի աստիճան՝ սա երկու պատճառաւ որնախ մի և նոյն ծախքով ամէնքն կը վայելն, և յետոյ այս զարդ ընկերութեան արժանասպատութիւնն ու վեհութիւնն կը բայցարէ և կը ներծնչէ վեհ զդացումներ՝ եթէ հանճար և արուեստ զայն յօրինած են:

Հարցմունք . 95 . Սպառումն քանի՞ կերպ է : — 96. Ի՞նչպէս
ալէտք է կազմել ընտանեկան պիւծէն : — 97. Խնայողութիւնն
առաքինութիւն է : — 98. Ո՞րք են ընտանեկան կարեւոր պի-
տոյք և ի՞նչպէս գոհացուելու են : — 99. Խնայելու լաւագոյն
կերպն ո՞րն է : 100. Ի՞նչ է պճնասիրութիւն և իւր հետեւանք-
ներ : — 101. Պճնասիրութեան դէմ պէտք է օրէնք զնել : —
102. Հանրական սպառման մէջ զարդարութիւնն ներելի՞ է :

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Երես	
ՑԱՆԿԱԳԱԲԱՆ	Ե
ԴԱՍ Ա. Նախագիտելիք	1
ԴԱՍ Բ. Գործիք եւ Բաժանումն արտադրութեան	5
ԴԱՍ Գ. Հարտարութեան նպաստաւոր պայմանը	8
ԴԱՍ Դ. Բաժանումն աշխատութեան	10
ԴԱՍ Ե. Մերենայք	14
ԴԱՍ Զ. Դրամագլուխ	18
ԴԱՍ Է. Տորեւառ	23
ԴԱՍ Ը. Գիճ	28
ԴԱՍ Թ. Դրամ	32
ԴԱՍ Ժ. Վարկ եւ դրամատունք	38
ԴԱՍ ԺԱ. Երշանք վարկի	45
ԴԱՍ ԺԲ. Թէ; Ի՞նչպէս կը բաշխուի հարսն . .	51
ԴԱՍ ԺԳ. Թողակը	54
ԴԱՍ ԺԴ. Ա.ուեւտուր աշխատութեան	57
ԴԱՍ ԺԵ. Տոկոս	65
ԴԱՍ ԺԶ. Եկամուտ	70
ԴԱՍ ԺԷ. Բազմամարդութիւն	76
ԴԱՍ ԺԸ. Կառավարութիւն	82
ԴԱՍ ԺԹ. Հարկ	87
ԴԱՍ Ի. Մասնաւոր եւ հանրական սպառումն .	92

50.

ՎՐԻՊԱԿՔ

Երես	Տառ	Այսակ	Ուղիղ
2	42	reiceh	reich
3	23	պատառած	պատճառած
5	40	sucection	succession
20	46	կ'սպառի	կ'սուելնայ
41	3	Բարձրիոյ և Պելճիքայի Բոլոնիոյ մէն Պելճիքայի մէջ	1773ին ի 1 սնտրա
44	4	1773ին	1773ին ի 1 սնտրա
44	8	պահինօթ	պահինօթի
49	24	առաւելութեան	առաւելութենէն
96	8	բազմել	կազմել
Երես 2, տառ 47.		Այս բառի բառ է հասկանած այն ամեն իրեն և մայն այն (Հարստութիւն) իրեն եւացն , պիտի կարդացուին Ա. յո (Հարստութիւն) բառի բառ է հասկանած այն ամեն իրեն եւ մայն այն իրեն , եւացն :	
Եր. 27, տառ 4 և 2		այս երկիրներ թշուառ են , կամ արուեստ և վաճա- ռականութիւն յետնեալ են ի նոստ , վասն զի իւրեանց ներածութիւն եացն . այլոք կարդացուի	
Եր. 71, տառ 46		Այս երկիր թշուառ է , կամ արուեստ և վաճառակա- ռայութիւն յետնեալ է ի նման , վասն զի իւր ներածութիւն որք ընականաբար մեծածոխ բարեբեն յերաց նորուած են կը դալարութեամբ՝ բայսերով ծառերով ծառերուած կը կը լինին կամ ջրոտ ու ճախճախուտ ,	
38 Համարեն յետոյ Համարոց թիւերուն մէջ սխալում տեղի ունեցած է , կը ինդքինք ընթերցուներէն ուղղել :			



ՀՀ Ազգային գրադարան



NL0196499

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻԾ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԼՅՈՒՅՆԵԼԻ « ԲԱՆՔ ՀԱԽԱՏԱՑԵԼՈՅ ՈՒՐՈՒՔ » ԹԱՐՁՈՒՄ . (Սպառած) Ա. Ա. ԶԻՆ ՏԵՐԵՒՅԻ . — ՔԵՐԺՈւածք , ԱՌԱՎՈՒԱՅ , ՃԱՌՔ , Ա. Հ. ԱՅԼՔ , ՅԱԼԵԼՌՈՒԱԾ . (Սպառած) : ԵՐԿՈՒ ԲԱՆԱԽՈՎՈՒԹԻՒՆՅԻ . — Ա. ԹՀՈՎԱՌՈՎԲԻՆ և Գույթ . Տ. ԳԵՂԵԿԻԼԻՆ և ԳԵՂԱՐԱԿԵԿՈՎՔ ԳԻՆ 5 ՊՐ . ՋՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԶԲՈՍՈՆԻՆԵՐՆ . — ԲԱՆԱԽՈՎՈՎՈՒԹ . 4 Վ ԿՈԹԵԼ ՀԵՐՄԱՆ ԵԿ ԳՈՐՈԹՔՆ , ՎԵԿԱՋԻՆՆ ԵՐԳԱ . ՈՒՄԱԿԵՐԱՎՈՐՎՈՂ ԳԻՆ 10 ՊՐ .

Կը ծախուի Հայ զրավաճառաց և Հեղինակին քով
Հեղինակին հասցեն է .

Ա . Յ . Պ Ե Ր Պ Ե Ր Ե Ա . Ն

ՊԵՐԱԿԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿ
ԻՒՍԿԻՒՏԱՐ . ՍԵԼԱՄՄԱՐԶ

ԳԻՆ 71/2 ԴՐՈՒՅԻՆ

معارف نظارات جليل سنه
سنه ٩٨ تشرين اول ٢٣ رخصانیه طبع اوتشدر